

8-72

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՉՈՔԱՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ ԱՇՈՏԻ

ՀԱՅ - ՌՈՒՄ - ՎՐԱՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Է.00.02 - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»  
ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2004



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԳԱՄ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՌԻՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

պատմական գիտությունների դոկտոր

Պ. Մ. Մուրադյան

պատմական գիտությունների դոկտոր

Վ. Ռ. Գրիգորյան

պատմական գիտությունների դոկտոր

Ա. Ա. Մելքոնյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2004 թ. հոկտեմբերի 21-ին ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱՄ  
Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՒՀ-ի 006 «Ընդհանուր պատմություն»  
Մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող.  
24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱՄ Արևելագիտության ինստիտուտի  
գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2004 թ. սեպտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար  
պատմական գիտությունների թեկնածու

Ռ. Մաֆրաստյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.- Հայ-վրաց-ռուսական հարաբերու-  
թյունների պատմության ուսումնասիրությունը ունի արդիական նշանակություն և կարևորվում  
է առանձնապես ետխորհրդային ներկա ժամանակաշրջանում հայ, վրաց և ռուս  
ժողովուրդների անկախություն ստացած կարգավիճակով փոխհարաբերությունների  
էությունը և նրանց միտումները հասկանալու առումով: Ուշագրավ և օրինաչափ  
հետևողականությամբ իրականացվող Վրաստանի արտաքին կողմնորոշումների ներկա  
էական տարբերությունները Հայաստանի Հանրապետության արտաքին կողմնորոշումներից,  
որոնք խնդիրներ են հարուցում մաև հայ-վրացական երկկողմ հարաբերություններում, ունեն  
իրենց պատմական հիմքերն ու բացատրությունները, որոնց ուսումնասիրությունը կարող է  
որոշակի նպաստ բերել փոխհարաբերությունների տրամաբանությունը ճիշտ ընկալելու  
գործում: Նման ուսումնասիրությունը ամերաժեշտ է մաև ազգամիջյան  
փոխհարաբերությունների կարգավորման, խորհրդային շրջանի որոշ կաղապարներից  
ձերբազատվելու և Հայաստանի Հանրապետության արտաքին ու ներքին  
քաղաքականությունը առավել իրատեսորեն ձևավորելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
Ատենախոսության հիմնական գիտական նպատակն է հայ-վրաց-ռուսական  
հարաբերությունների պատմության մի ժամանակաշրջանի անկողմնակալ և հիմնավոր  
հետազոտությունը, երբ պետականության բացակայության պայմաններում հայազգի  
գործիչները սերտորեն պայմանավորելով հայ ժողովուրդի հետագա առաջնթացն ու  
գոյատևումը Վրաստանի և Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների ձևավորումով,  
կանգնած էին բազում բարդ խնդիրների լուծման առաջ: Այդ խնդիրներից կարևորագույնն էր  
վրաց և ռուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի փոխհարաբերությունների մշակման և նրանց  
հայ ազատագրական պայքարին օժանդակող դաշնակիցների վերածելուն: Ներկա  
աշխատության նպատակն է համակողմանի հետազոտել այն ջանքերն ու  
հնարավորությունների օգտագործումը, որոնք իրականացվել են նշված ուղղությամբ հայ  
գործիչների կողմից, ու միաժամանակ մաև այն արձագանքներն ու դիրքորոշումները, որ  
դրսևորել են հարևան ժողովուրդները հայ ազատագրական պայքարի ու ձգտումների  
նկատմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.- Ատենախոսության ընդգրկած ժամանակա-  
շրջանը իր ամբողջության մեջ հայ - վրաց -ռուսական փոխհարաբերությունների կարվածքով  
առաջին անգամ է դառնում գիտական համալիր հետազոտության առարկա:  
Ժամանակաշրջանի առանձին խնդիրներ արժանացել են հատուկ ուսումնասիրությունների,  
որոնք մեծապես օժանդակել են նոր հարցադրումների ետմախորդի լուսաբանմանը,  
փոխհարաբերությունների էության մասին լիարժեք պատկերացում ստեղծելուն: Արխիվային  
նորահայտ վավերագրերի ու առկա փաստերի ընդգրկումով համալիր հետազոտությունը  
հնարավորություն է տալիս մի շարք սկզբունքային հարցերի համար ստանալու առավել  
հիմնավորված նոր պատասխաններ ու հետևություններ: Նորովի և համակողմանի  
լուսաբանվում են Հակոբ Շամախեցու, Սիմեոն Երևանցու, Հովսեփ Արղության և այլոց  
գործունեությունն ու դերը հայ-ռուս-վրացական հարաբերություններում, Հայաստանի  
ազատագրության ուղղությամբ նրանց դիրքորոշումներն ու ջանքերը, այնպես էլ վրաց և  
ռուսական արքունիքների որդեգրած քաղաքականությունը Հայաստանում ու մաև հայ  
բնակչության նկատմամբ Վրաստանում ու Ռուսաստանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.- XVIII դարի երկրորդ  
կեսը հայ ժողովրդի պատմության մեջ բախտորոշ ժամանակաշրջաններից էր և  
առանձնանում է նախորդ ժամանակաշրջաններից Այսրկովկասի և, մասնավորապես,  
Արևելյան Հայաստանի քաղաքական իր կարգավիճակի յուրահատկությամբ, որով և  
պայմանավորված է թեմայի ժամանակագրական ընդգրկումը: Ի տարբերություն XVI դ.  
մինչև XVIII դ. առաջին կես տիրող իրավիճակի, երբ Արևելյան ողջ Այսրկովկասը փոքր  
ընդմիջումներով գտնվում էր Սեֆյան Պարսկաստանի լիակատար տիրապետության ներքո,  
XVIII դ. երկրորդ կեսին Իրանում գահակալական կռիվների պայմաններում 1750-ական թթ.





ի քիվս Իրանական պետության նախկին վարչական այլ միավորների (խանությունների) Երևանի, Նախիջևանի, Գանձակի և Արցախի երկրամասերը ևս հայտնվում են գրեթե անկախ կարգավիճակում:

1747-1749 թթ. Իրանում իշխանության համար բռնկված ընդհարումների և սկսված խառնակությունների պայմաններում հայազգի գործիչներին չի հաջողվում օգտագործել պատենությունն ու իրենց տիրապետությունը հաստատել իրենց իսկ երկրում և վերահաստատվում է օտարի բռնակալությունը հայկական բնակավայրերի նկատմամբ:

Հայ բնակչության դերակատարումը, սակայն, շարունակում էր որոշակի լինել և ունենալ իր ազդեցությունը XVIII դարի քաղաքական ու տնտեսական հարաբերություններում, ընդհուպ մինչև XVIII դարի վերջ, որով և պայմանավորվում էր հայոց պետականության վերականգնման հնարավորությունների հույսերը: Այս ժամանակահատվածում նորովի են ձևավորվում ինչպես հայ-վրացական, այնպես էլ հայ-ռուսական հարաբերությունները: Նշված փոխհարաբերությունների վրա որոշակի ազդեցություն էին գործում նաև ռուս-վրացական հարաբերությունները, որոնք հայ պատմագիտության մեջ ըստ էության դեռևս գիտական հետազոտության չեն արժանացել: Ժամանակագրորեն հետազոտությունը ընդգրկում է XVIII դարի կեսերից մինչև Ռուսաստանի կողմից Վրաստանի և Երևանի գտնվող հայկական գավառների փաստական նվաճման սկիզբը և վրաց պետականության վերացումը: Անհրաժեշտության բերումով ատենախոսության մեջ ընդգրկված են որոշ պատմական իրադարձություններ ու փաստեր, որոնք դուրս են ժամանակագրական այդ սահմաններից:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.** Ատենախոսությունը ունի կիրառական որոշակի ուղղվածություն: Այն կարող է օգտագործվել որպես բուհական հատուկ դասընթաց, օգտակար լինել Հայոց պատմության դասագրքերի շարադրման և կովկասագիտական հետազոտությունների ժամանակ: Աշխատության դրույթներն ու եզրահանգումները, բերված վավերագրերն ու փաստերը կարող են օգտակար լինել հայ-վրացական, հայ-ռուսական և վրաց-ռուսական հարաբերությունների ձևավորման յուրահատկությունների հաշվառումով Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների որոշ մոտեցումներ մշակելու տեսանկյունից:

**ԱՂԵՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.** Ներկա աշխատության համար աղբյուրագիտական հենք են հանդիսացել Մոսկվայի, Պետերբուրգի, Թբիլիսիի և Երևանի պետական արխիվներում, ինչպես և Մաշտոցի անվան Մատենադարանի ու Թբիլիսիի Չեռագրերի ինստիտուտի արխիվային ու ձեռագրական ֆոնդերում պահվող մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի բազմաթիվ վավերագրերը: Վավերագրերի տպագիր ժողովածուներից օգտագործվել են Ս. Գլինկայի խմբագրությամբ Լազարյան Դեմարանի կողմից հրատարակված եռահատորյակը<sup>1</sup>, Գյուտ քահ. Աղանյանցի հիմնադրած «Դիւան հայոց պատմութեան» շարքը և ապա Վ. Գրիգորյանի կողմից իրականացված նրա նորովի շարունակությունը<sup>2</sup>, Ռուսական կայսրության օրենքների լիակատար հավաքածուի առանձին հատորներ<sup>3</sup>, Կովկասի հնագրական հանձնաժողովի կազմած և հրատարակված մեծաթիվ հավաքածու<sup>4</sup>, հայ-ռուսական հարաբերությունների փաստաթղթերի ժողովածուները<sup>5</sup>, Վ. Մանարաձեի կազմած «Նյութեր XVIII դարի երկրորդ կեսի ռուս-վրացական հարաբերությունների պատմության» ժողովածուն<sup>6</sup>, Վ. Գամրելելու կազմած և

հրատարակված վավերագրերի ժողովածուները<sup>7</sup> և առանձին խոշոր բնագրերի այլ հրատարակություններ:

XVIII դ. երկրորդ կեսի հայոց պատմության ու հայ-վրաց-ռուսական փոխհարաբերությունների խնդիրներով զբաղվել են շատ ուսումնասիրողներ, ժամանակաշրջանի պատմության լուսաբանման համար հրատարակվել են մեծաթիվ հետազոտություններ ու վավերագրերի ժողովածուներ: Հայազգի հետազոտողների կողմից առանձնապես շեշտադրվել են այդ ժամանակաշրջանում հայ ազգային ազատագրական գաղափարախոսության և հայ-ռուսական հարաբերությունների ծավալման պատմության հարցերը: Արժեքավոր հետազոտություններ են նվիրվել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ու քաղաքական իրավիճակի լուսաբանման խնդիրներին: Հայ-վրացական փոխհարաբերությունների առանձին հարցերի մասին մի շարք հրապարակումներով հանդես էր եկել Ա. Երցիսյանը<sup>8</sup>:

XVIII դ. երկրորդ կեսի պատմության հարցերի համալիր ուսումնասիրման ու ներկայացման ուղղությամբ առաջին կարևոր քայլը կատարել է բազմավաստակ հայագետ Լեոն: Լեոնին հաջողվել է ամբողջական պատկերացում ստեղծել Նադիր շահից հետո Այսրկովկասում ստեղծված իրադրության, հայ ժողովրդի կյանքում էական դեր ունեցած իրադարձությունների մասին և այդ հենքի վրա առաջին անգամ ներկայացնել հայ-վրացական ու հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ իր դիրքորոշման շարադրանքը<sup>9</sup>: Լեոն առանձին աշխատություն է նվիրել Հովսեփ Արղության գործունեությանը և դրանով իսկ իր ունեցած պատկերացումներն ու գնահատականները ներկայացրել նաև հայ-ռուսական հարաբերությունների զարգացման նշված փուլի վերաբերյալ: Հնդկահայ գաղթօջախի և նրանց տպագրական ու հովանավորչական բնագավառում արժեքավոր ներդրում ունի Թադևոս Ավդալբեկյանը: Նրա բացահայտումները կարևոր նշանակություն ստացան հայոց պատմության այդ ժամանակահատվածի հիմնավոր ուսումնասիրման գործում<sup>10</sup>:

XVIII դ. երկրորդ կեսին հնդկահայ ազատագրական գաղափարախոսության մի շարք խնդիրների լուսաբանություններով ու իր հիմնավորումներով մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի պատմության հետազոտման բնագավառում արժեքավոր ներդրում ունի Թադևոս Ավդալբեկյանը: Նրա բացահայտումները կարևոր նշանակություն ստացան հայոց պատմության այդ ժամանակահատվածի հիմնավոր ուսումնասիրման գործում<sup>12</sup>: XVIII դ. երկրորդ կեսի հիմնախնդիրների ուսումնասիրման գործում առանձնապես մեծաթիվ են ակադ. Աբգար Հովհաննիսյանի արդեն իսկ 1940-ական թթ. հրատարակված աշխատությունները, որոնց շնորհիվ կարևոր քայլ կատարվեց ինչպես Հովսեփ Եմինի կյանքի ու գործունեության<sup>13</sup> և հայ ազատագրական ծրագրերի, այնպես էլ հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների ու հարակից շատ խնդիրների խոր ուսումնասիրման

<sup>1</sup> Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. ч. I, М., 1833, ч. II, III, М., 1838.

<sup>2</sup> Դիւան հայոց պատմության, գիրք Ա-Բ /Թիֆլիս, 1893/, Գ. /Թիֆլիս, 1894/, Դ. /1899/, Ը. /1908/, Թ. /Թիֆլիս, 1911/: «Դիվան հայոց պատմության» Նոր շարք. գիրք առաջին. Դուկաս Կարնեցի. հատոր Ա. 1780-1785. Աշխատ. Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, հատոր Բ, Երևան, 2002:

<sup>3</sup> Полное собрание законов Российской империи, тт. XVI, XXIII, XXV, М., 1830.

<sup>4</sup> Акты собранные Кавказскою археографическою комиссиею. под ред. А. Д. Берге, т. 1, Тб., 1866.

<sup>5</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века. (Сборник документов), т. II, ч. I-II, Под ред. А. Г. Иоаннисяна, Ер., 1964-1967. Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. (Сб. документов), т. III, От. ред. В. К. Восканян, Ер., 1978. Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800гг. (Сб. документов). Т. IV. Под ред. акад. М. Г. Нерсисяна, Ер., 1990.

<sup>6</sup> Վաղվորան մաճառաճ. մասալքն XVIII թաւաւի միւրջ ճաչքորն ռուս-եփարեւելոս շրտօրտօծն օնթրօնօնօնօն. Նաւօղ III, Նաւթտ I, տօնօնօն, 1988, 600 թջ.

<sup>7</sup> Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в. Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование В. Н. Гамрекели. Тбилиси, 1968, 335 с.; «Межкавказские политические и торговые связи Восточной Грузии /конец 60-х — начало 90-х годов XVIII в. /». Документы и материалы. I выпуск. Материал подобрал и подготовил к печати В. Н. Гамрекели, Тбилиси, «Мецниереба», 1980, 220 с.; В. Н. Гамрекели. Торговые связи Восточной Грузии с Северным Кавказом в XVIII веке. ч. I-II, Тб., «Мецниереба», 1968-1977.

<sup>8</sup> Մինն հայրանքի, Ջանք, Վաղարշապատ, 1873: «Հայկական աղբյուրներ Աղա-Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին», աշխատասիրությամբ Ռ. Տխտանյանի, Երևան, 1981: «Жизнь Артемия Арапатского». Издание подготовил К. Н. Григорян при участии П. Р. Обели. Москва, «Наука», 1981, 222 с.; յ. տաշաւիւթօլօ. Նաթրեւելոս ինքնալուր. ք. III, տօ., 1910. ճաչօտ թաթրաթօնօն. Նաթրեւելոս Նաթրեւելօս ճա յոնթնթեւելօնօն միմօնիւթօ. տօ., 1959, 420 թջ.

<sup>9</sup> «Письма архиепископа Иосифа о Грузии (1795-1796гг)», «Кавказская старина», год I, под ред. А. Д. Ерицова, Тифл., 1872, N2, с. 29-34. «Смутные годы Эчмиадзинского патриаршества /1799-1809г./», - 1873, N4-5, с. 94-105.

<sup>10</sup> Լեոն, Հայոց պատմություն, հ. երրորդ, գիրք երկրորդ.-տես Լեոն, Երկերի ժողովածու, տես հատորով, հատոր երրորդ, գիրք IV, Երևան, 1973: Լեոն, Հովսեփ Կարողիկոս Արղության, Թիֆլիս, 1902:

<sup>11</sup> Տես Լեոն, Երկերի ժողովածու 10 հատորով, Հատոր V, Երևան, 1986, էջ 497-501:

<sup>12</sup> Թադևոս Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:

<sup>13</sup> А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ерева, 1945. Վերահրատարակությունը՝ Երևան, 1989:



առումով<sup>14</sup>։ Արգար Հովհաննիսյանը նշված հարցերի ուսումնասիրման համար առաջինը բացահայտեց ու շրջանառության մեջ դրեց ԽՍՀՄ կենտրոնական արխիվներում և Երևանի Մատենադարանում պահվող առաջնահերթ կարևորությունները կարևորությունը և հետևությունը, որ նա կատարեց մինչ այդ արդեն շրջանառվող դրույթին պատասխանելու համար. «իրոք Ռուսական կառավարությունը ձգտում էր այդ տարիներին (իմա՝ 1780-1787թթ.) Անդրկովկասում կախյալ հայկական պետության ստեղծմանը, թե՞ հայկական հարցի առաջադրումը լոկ խաղաքարտ էր դիվանագիտական խաղի մեջ, որ նպատակ ուներ անդրկովկասյան այս կամ այն խանությանը պարտադրել ենթակայության»<sup>15</sup>։ Ա. Ռ. Հովհաննիսյանի եզրահանգումը այն էր, թե «ռուսական դիվանագիտությունը լքողներն զբաղվում էր այն ժամանակ Իրանին ենթակա հայկական տարածքներից (առաջին հերթին Ղարաբաղի և Երևանի խանության) հայկական պետության ստեղծման հարցով, նախանշելով անգամ ապագայում վերստեղծված Հայաստանի սահմանների ընդարձակման հնարավորությունը Թուրքիային ենթակա հայկական հողերի հաշվին»<sup>16</sup>։ Կարևոր առաջընթաց կատարվեց 1950-ական թթ.։ Վ. Ռ. Գրիգորյանի «Երևանի խանությունը XVIII դ. վերջում» աշխատությունը գալիս էր հանգամանորեն ներկայացնելու այն իրավիճակը, որ ստեղծվել էր հայոց ազգային-քաղաքական զարգացման գործում էական դերակատարում վերապահված երկրամասում՝ Երևանի խանության մեջ։ Աշխատության մեջ հայկական սկզբնաղբյուրների լայնորեն օգտագործումով, ավելի հստակորեն էր պարզաբանվում ու հիմնավորվում ներքին ռազմա-քաղաքական իրադարձությունների ազդեցությունը ազգային-գաղափարախոսական դիրքորոշումների ձևավորման վրա<sup>17</sup>։

Գ. Հ. Գրիգորյանի հեղինակած աշխատության մեջ վերլուծության են ենթարկվում Հնդկահայ միջավայրում ձևավորված հայոց ազգային-լուսավորական ու ժողովրդավարական ապագա պետական շինարարության հիմնահարցերը, ներկայացվում էր նրանց առաջադիմական բնույթը և խաղացած դերը հայ ազգային գաղափարախոսության ստեղծման մեջ<sup>18</sup>։

Հետազոտությունների կարևոր ուղղվածություն արձանագրեցին Մ. Գ. Ներսիսյանի հրատարակած աշխատությունները<sup>19</sup>, որոնցում լուսաբանվում են ռուս պետական գործիչների, մասնավորապես Ա. Վ. Սուվորովի հետ հայազգի հասարակական քաղաքական գործիչների համագործակցության կարևոր դրվագներ, հայազգի գործիչների մասնակցությունը Ռուս-թուրքական 1787-91թթ. պատերազմին և այլն։

1964թ. լույս ընծայած իր «Լրինահայ գաղթաբանի պատմություն» աշխատության մեջ<sup>20</sup> Վ. Ա. Միքայելյանը ներկայացրել է հայկական այդ նշանավոր գաղութի ամբողջական պատմությունը, որն իր ավարտը գտավ 1778-79 թթ. Ռուսաստանի կողմից Լրինի գրավման պայքարում հայ բնակչության նկատմամբ իրականացրած տեղահանման քաղաքականությամբ։ Այդ փաստով պայմանավորվեց Լրինահայոց գաղթաբանի մարումն ու նրա հենքի վրա մոր գաղթաբանի, այն է՝ Նոր Նախիջևանի, առաջացումը։

Հայ պատմագիտության մեջ կարևոր ներդրում էր Վ. Բ. Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» աշխատությունը, որով նշանավորվեց հայ-ռուսական հարաբերությունների և Ռուսաստանում հայ գաղթաբանների կայացման պատ-

մության հիմնահարցերի մեծագրական ուսումնասիրությունը։ Մենագրությունը փաստորեն առաջին գիտական խոշոր ու համալիր հետազոտությունն էր, որով սկիզբ առավ Ռուսահայ, իր նշանակությամբ՝ եզակի, գաղթաբաններից մեկի պատմության ուսումնասիրության նոր փուլը։ Աշխատության մեջ համակողմանի ուսումնասիրության են ենթարկվել գաղթաբանի դերը ինչպես հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում, այնպես էլ հայոց ազգային-մշակութային ու ազգային ինքնագիտակցության զարգացման մեջ գաղթաբանի ունեցած դերի ու նշանակության հիմնախնդիրները<sup>21</sup>։ Այնուհետև իրականացվեցին Աստրախանի<sup>22</sup>, Գրիգորիոպոլի<sup>23</sup> և Հյուսիսային Կովկասի<sup>24</sup> հայկական գաղթաբանների մեծագրական հետազոտությունները։ Կարևոր ներդրում էր Ֆ. Պողոսյանի իրականացրած «Դատաստանագիրք Աստրախանի հայոց» հրատարակությունը<sup>25</sup>։

Հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում առանձնակի տեղ ունեին Լազարյանները։ Նրանց գործունեության համակողմանի հետազոտությանն էր նվիրված Վ. Ա. Դիլոյանի փաստառատ ու հիմնարար մենագրությունը<sup>26</sup>։ XVIII դ. երկրորդ կեսի մի շարք անդիմադրելի լուսաբանված են Վ. Ա. Դիլոյանի նաև հաջորդ մենագրական ուսումնասիրության մեջ<sup>27</sup>։

1978 թ. հրատարակվեց ակադ. Գ. Ա. Գալոյանի «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» աշխատությունը, որտեղ ներկայացված է նաև XVIII դ. երկրորդ կեսին տիրող իրավիճակը<sup>28</sup>։ Գ. Գալոյանը ներկայացնելով Հովսեփ Էմինի փորձերը՝ հայ-վրացական պետություն ստեղծելու նպատակով դեռևս Պետերբուրգում Թշնմուրազ թագավորի հետ հանդիպումներով հայ-վրացական մերձեցում ձևավորելու ուղղությամբ, կարծում է, թե արդեն իսկ Վրաստանում «Հերակլ II-ը հակված էր հավանություն տալ այդ մախազին, բայց ստիպված էր հրաժարվել դրանից, քանի որ բուն Հայաստանում ազդեցիկ հոգևորականությունը (մասնավորապես Միմոն կաթողիկոսը) դեմ էր դրան՝ վախենալով պարսիկների վրեժխնդրությունից»<sup>29</sup>։ Գ. Գալոյանը անուշադիր չի թողել նաև ռուս-

<sup>14</sup> **Ա. Բ. Իոաննիսյան**, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947: «Երևանի խանությունը» Երևան, 1990: Նույնի Присоединение. Закавказья к России и международные отношения в начале XIX столетия. Ереван, 1958.

<sup>15</sup> **Ա. Բ. Իոաննիսյան**, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, с. 189:

<sup>16</sup> **Ա. Բ. Իոաննիսյան**, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 190.

<sup>17</sup> Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը XVIII դարի վերջում /1780-1800/. Երևան, 1958.

<sup>18</sup> Գ. Հ. Գրիգորյան. Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից /XVIII դարի երկրորդ կես/. Երևան, 1957:

<sup>19</sup> **Մ. Գ. Ներսիսյան**. Из истории русско-армянских отношений, кн. I, Ер., 1956. **Его же**, А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах. Ер., 1981.

<sup>20</sup> Վ. Ա. Միքայելյան, Լրինի հայոց գաղութի պատմություն, Երևան, 1964: Վ. Ա. Միքայելյան, Լրինահայոց պատմություն, Երևան, «Հայաստան», 1989:

<sup>21</sup> Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայոց գաղութի պատմություն, հ. I, Երևան, 1967: Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Կ. Ոսկանյան. Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978: **В. Б. Бархударян**. Армянские колонии в России и их роль в армяно-русских отношениях. - "Из истории вековой дружбы", Ереван, Изд. АН Арм. ССР, 1983, с. 124-135. Վ. Բ. Բարխուդարյան. Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութները XVIII դարի վերջին քաղաքի հայ ազատագրական շարժումներում. - «XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթաբանները» /հոդվածների ժողովածու/. Երևան, 1989, էջ 187-216:

<sup>22</sup> **В. А. Хачатурян**. Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века. - Известия АН Арм. ССР /обществ. науки /, 1963, N12, с. 57-68/. **Он же**. Судебно-административные органы астраханских армян XVIII-XIX вв. и их архивные фонды. - Вестник архивов Армении, 1971, N3, с. 135-144. **В. А. Хачатурян**. Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века. - "ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր", 1965, N7, էջ 77-87: Վ. Ա. Խաչատրյան. Հայ ժողովրդի ազատագրական շարժումները և Աստրախանի հայ գաղութը XVIII դարում. - «XVI-XVIII դդ հայ ազատագրական շարժումները և հայ գաղթաբանները» /հոդվածների ժողովածու/. Երևան, 1989, էջ 140-154:

<sup>23</sup> **Ананян Ж. А.** Армянская колония Григориополь. Ереван, 1969. **Жорес Ананян, Варган Хачатурян**. Армянские общины России. Ереван, 1993. **Ж. А. Ананян**. "Записки" Гмелина как источник по изучению русско-армянских торгово-экономических отношений во второй половине XVIII в., - "Из истории вековой дружбы", Ереван, Изд. АН Арм. ССР, 1983, с. 95-108.

<sup>24</sup> Վ. Ա. Պողոսյան. Հյուսիսային Կովկասի հայկական գաղթաբանները XVIII դարի հայ-ռուսական հասարակական-քաղաքական հարաբերություններում. - «XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթաբանները» /հոդվածների ժողովածու/. Երևան, 1989, էջ 155-170:

<sup>25</sup> Երևան, 1967:

<sup>26</sup> Վ. Ա. Դիլոյան. Լազարյանների հասարակական - քաղաքական գործունեության պատմությունից /XVIII դարի երկրորդ կես/, Երևան, 1966.

<sup>27</sup> Վ. Ա. Դիլոյան. Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները. Երևան, 1989:

<sup>28</sup> Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները. Ուրվագծեր նրանց փոխհարաբերությունների քաղաքական պատմության հին ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը, Երևան, Հայաստան, 1978:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 111: Վերջերս լույս ընծայած իր աշխատության մեջ Գ. Գալոյանը խմբագրել է այդ դրույթը՝ հիմնավոր համարելով Միմոն Երևանցու դիրքորոշումը. «վրաց թագավորը մեծ գոտավորություն էր հանդես բերում Էմինի գաղափարների նկատմամբ, մասնավորապես որ դրանք չէր բաժանում նաև 1763 թվականին Մանայն Հայոց կաթողիկոս ընտրված Միմոն Ա. Երևանցին»։ Տես Գալոյան Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.), Երևան, 2004, էջ 106:



թուրքական 1768-74թթ. պատերազմի ժամանակ գեմ. Տոլլեբեմի և Ն. Յագիկովի գործունեությունը Վրաստանում: Ռուսական արքունիքից Վրաստան առաքված գործիչները փոխանակ ընդհանուր բշխմամբ դեմ պայքարում վրաց թագավորի հետ հաջողգործակցության, համձայնարարություն ունեն գահընկեց անելու Հերակլին և նրան հեռացնելու Վրաստանից<sup>30</sup>: Իրավացի էր Գ. Գալյուանը, երբ արժանագրում էր, թե Քյուչուկ Կայմարքիի պայմանագիրը հայերին չէր պաշտպանում թուրքական ճնշումներից, թե ռուսական գործերի հեռացումից «Անդրդիտվկասում խիստ հիասթափված էին»<sup>31</sup>: Գ. Գալյուանը դրականորեն է գնահատում Գեորգիկյան դաշնագրի կնքումը Վրաստանի համար. «Այդ իմաստում ակտուլ Հերակլ II-ը դրեց Ռուսաստանի հովանավորության ամուր հիմքը և դրանով իսկ երաշխավորեց Վրաստանի անվտանգությունը Թուրքիայի ու Պարսկաստանի էքսպանսիայից»<sup>32</sup>, չնայած հեղինակը լավատեսյակ է թուրքերի կողմից Գեորգիկյան պայմանագրի դեմ հակաքայլերի դիմումը փաստելին ու Վրաստանի կրած ավերածությունների: Նույն տեղում նշվում է, թե Գեորգիկյան դաշնագրից հետո հայ մեկիքներին, որոնք ունեին ռուսական կողմնորոշում, իբր ցույց էր տրվում հովանավորություն:

XVIII դ. երկրորդ կեսի հայ-վրացական հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում իր որոշակի ներդրումը ունի Վ. Մարտիրոսյանը: Նա արժեքավոր հոդվածներ է նվիրել ինչպես Թեյմուրազ II-ի Ռուսաստան կատարած առաքելությանը և Դաշինի կողմից այդ առաքելությանը օժանդակելու խնդիրներին, Գեորգիական դաշնային կնքմանն ու հայոց վերաբերմունքի դրսևորումներին, այնպես էլ հայոց ունեցած դերակատարումին Վրաստանի առևտրա-տնտեսական կյանքում, հայ-ռուսական հարաբերությունների մասին հայտնաբերել և հրապարակել է արժեքավոր նոր վավերագրեր<sup>33</sup>:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի խնդիրները քննարկված են նաև Օ. Պ. Մարկովայի աշխատության մեջ<sup>34</sup>։ Օ. Մարկովյան մեծ թվով արխիվային վավերագրեր մտցնելով գիտական շրջանառության մեջ, սակայն իր հիմնական եզրակացություններում զգալիորեն հետևել է ռուսական պաշտոնական պատմագիտության դոգմային<sup>35</sup> համայն արդարացնում գտնելու ցարական կառավարության վարած քաղաքականության համար։ Հեղինակին, սակայն, հասու չէին վրացերեն և հայերեն լեզուներով առկա վավերագրերն ու այլ սկզբնաղբյուրները։

Ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների և հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրության ու լուսաբանմանը նվիրված աշխատություններից արժեքավոր են Ա. Գ. Աբրահամյանի հրապարակած վավերագրերը<sup>35</sup>, Մ. Կ. Զուլպյանի Արևմտյան Հայաստանի պատմության և եվրոպացի եղիմակների երկերի ուսումնասիրությունները<sup>36</sup>, Պ. Ա. Սեյրանյանի<sup>37</sup>, Մ. Մ. Թելունցի<sup>38</sup> և այլոց աշխատությունները:

<sup>30</sup> Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները., էջ 116:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 118, հմմտ նաև էջ 120:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 127:

34 Վ. Մ. Մարտիրոսյան, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ձգտումները 1768-1774թթ. ռուս-թուրքական պատերազմում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, թիվ 5, էջ 41-44: Նույնի, Հայերը Զաքր-Կախերի տնտեսական կյանքում (XVIIIդ. երկրորդ կես), - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, թիվ 11, էջ 20-26: Նույնի, Հայերի առևտրական գործունեությունը Զաքր-Կախերի թագավորությունում (XVIII դ. երկրորդ կես), - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, թիվ 5, էջ 65-71: Նույնի, Նոր ավարաբարձր Գեորգիականի 1783, Գաշնազիկի մասին, - «Պատմա-քառամասյան հանգեթ», 1978, թիվ 3, էջ 235-243: Նույնի, 1783 թ. Գեորգիականի դաշնագիրը և հայերը, - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, թիվ 9, էջ 92-100:

<sup>34</sup> О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966.

<sup>35</sup> Ա. Գ. Արքայանմյան, Վապերդադրեր հայ-ռուսական հարաբերություններից /XVIII դարի վերջին քառորդ/, «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, թիվ 2, էջ 50-70:

<sup>36</sup> Մ. Գ. Ջուլալյան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980: Նույնի, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների. Գիյրք Ա, Քաղաքական պատմություն. Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1990:

37 П. А. Сейранян. Карабах и Россия. Страницы истории. Москва, 1997.

<sup>38</sup> Մ. Մ. Թելույնց, Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաբաղադրական միտքը, Երևան, «Գիտություն», 1995:

Նախախորհրդային շրջանի գիտնականների աշխատություններից իրենց տարողու-  
նակությամբ ու աղբյուրագիտական արժեքով առանձնանում են Ի. Շոպենի<sup>39</sup>, Պ. Բուտ-  
կովի<sup>40</sup>, Ն. Դուբրովինի<sup>41</sup>, Կ. Եվյանի<sup>42</sup> և մի շարք այլ գիտնականների ուսումնասիրությու-  
ններն ու հրապարակումները:

XVIII դ. երկրորդ կեսի հայ-ռուսական հարաբերությունների պատմության խնդիրներին անդրադարձել է Մ. Ա. Մուրադյանը 19-20-րդ դարերի ռուս պատմագրության մեջ Հայոց պատմության հիմնահարցերի ուսումնասիրության ժամանակ<sup>43</sup>։ Ներկայացնելով ռուս պատմագիտության մեջ շրջանավոր դրույթները, թե Ռուսաստանը զենք էր բարձրացրել Հայաստանի և Վրաստանի ապստամբական պայքարի համար, Մ. Մուրադյանը իրավացիորեն ներկայացնում է, թե "Պատմագիտական ու քաղաքական տեսանկյունից մանկամտություն կլիներ անվերապահորեն ընդունել նրանց հայեցակետը, քանզի վերստին ակնհայտ է դառնում ռուս պատմաբանների կողմից ինքնակալության արտաքին քաղաքականության ջատագովական համոզանքը"<sup>44</sup>։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Վրաստանի պատմության և վրաց-ռուսական հարաբերությունների հարցերն ուսումնասիրություններից վրաց պատմագիտական գրականության մեջ առանձնապես կարևոր են Ալ. Յագարելու<sup>45</sup>, Դ. Փուրցելաձեի<sup>46</sup>, Ն. Բերձենիշվիլի<sup>47</sup>, Իասե Յինցաձեի<sup>48</sup>, Գ. Գ. Պալանձեի<sup>49</sup>, Իլիա Տաբուրայի<sup>50</sup>, Զ. Յքիտիշվիլի<sup>51</sup>, Լ. Տուխաշվիլի<sup>52</sup>, Վ. Մանարաձեի<sup>53</sup>, Գ. Զիքոձեի, Մ. Բուլեշիլա<sup>54</sup>, Է. Օրջոնիկիձեի և այլոց աշխատությունները<sup>55</sup>։ Վրացագիտության մեջ ընդհանրացած տեսակետների շարադրանքը ներկայացված է «Վրաստանի պատմության ակնարկներ» աշխատության IV հատորում<sup>56</sup>։

Արդեֆյանական պատմագիտության մեջ առկա են Գափի Աբրովյանի<sup>57</sup>, Հաջի Մուրադ Իբրահիմբեյլիի<sup>58</sup> և այլոց աշխատությունները, որոնք սակայն, լի են հակասական, հաճախ միտումնավոր ոչ ճիշտ եզրահանգումներով ու պնդումներով:

<sup>39</sup> И. Шопен. Исторический памятник состояния Армянской-области в эпоху ея присоединения к Российской империи. СПб, 1852.

<sup>40</sup> П. Бутков. Материалы для новой истории Кавказа, ч. II, СПб, 1869.

<sup>41</sup> Н. Ф. Дубровин. История войны и владычества русских на Кавказе. тт. I-VI, СПб, 1871-1888.

<sup>42</sup> Г.А. Эзов. Сношения Петра Великого с Армянским народом. СПб, 1898, с. LXXXVII-CXV.

Մ. Ա. Մուրադյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ողջակա պատմագիտական և հասարակական մտքի զնահատմամբ, Երևան, 1985, էջ 28-41: Նույնի, Հայոց պատմություն հիմնահարցերը ողջակա պատմագրության զնահատմամբ, Երևան, 1995:

44 Մ. Ա. Մուրադյան, Հայոց պատմության իմնահարցերը ռուսաց պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի զննահատմամբ (19-20-րդ դդ.), Պատմ. գիտ.դոկտորի ատենախոս. սեղմագիր, Երևան, 2000, էջ 18-19:

45. А. А. Цагарели. Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящихся к Грузии, т.II, вып. II / 1798-1801гг.-/, СПб, 1902.

<sup>46</sup> Д. Пурцеладзе. Грузинские крестьянские грамоты, Тифлис, 1882.

6. ბერძენიშვილი. საქართველოს ისტორიის საკითხები. წ. IV, თბ., 1967; წ. VI, თბ., 1973.

<sup>49</sup> Г. Г. Пайчадзе. Историческое значение Георгиевского трактата, - "Из истории вековой дружбы", Ер., 1983, с.77-86:

<sup>50</sup> ი. ტაბაღუა. საქართველო საერთაშორისო არენაზე XVIII საუკუნის მეორე ნახევარზე თბ., 1979.

51 ზურაბ ცქიტიშვილი. გარსევან ჭავჭავაძის სახელმწიფოებრივი მოღვაწეობა. თბ., 1982, 206 გვ.

52. ტუხაშვილი. ქართლ-კახეთის სამეფოს ურთიერთობა კავკასიისა დამახლობელი აღმოსავლეთის ხალხებთან მე-18 საუკუნის მეორე ნახევარში, “საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები”, II, თბ., 1972, გვ. 91-108.

<sup>53</sup> В. Г. Мачарадзе. Грузинские документы из истории русско-грузинско-египетско-эфиопских отношений 80-х годов XVIII века. Тб., 1967.

54 მ. ბუღეიშვილი, საქართველოს სამღვდლოება რუსეთ-საქართველოს დიპლომატიურ ურთიერთობაში / XVIII საუკუნის მეორე ნახევარი/, თბ., 1991.

55 ზ. შარაშენიძე. ირანი XVIII საუკუნის მეორე ნახევარში. თბ., 1970. ე. ორჯონიძე. ეპტრობა და ეპტრობა ფენა რეჟიმამდელი ხანის საქართველოში. თბ., 1974.

56 "საქართველოს ისტორიის ნარკვევები". ტომი IV, საქართველო XVI საუკუნის დასაწყისიდან XIX საუკუნის 30-იან წლებამდე. ტომის რედაქტორი მაია ლუშბაძე. თბ., 1973.

<sup>57</sup> Гаси Абдуллаев. Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией. Баку, 1965.



Մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի պատմության հարցերը քննության են առնվել նաև թուրք հեղինակների աշխատություններում, որոնցից են Ահմեդ Ջեդեթը<sup>59</sup>, Էնվեր Կոնուկը<sup>60</sup>, Ալի Կեմալի<sup>61</sup> և այլք։ Թվարկված աշխատություններից առավել արժեքավոր է Ահմեդ Ջեդեթի բազմահատոր աշխատությունը։ Հեղինակը լինելով թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչ, լայն հնարավորություն է ունեցել օգտագործելու Օսմանյան կայսրության արխիվային հարուստ հավաքածուն, որը և արտացոլվել է նրա շարադրանքում։ Պատահական չէ, որ հրատարակվելուց հետո այն անմիջապես գրավել է հետազոտողների ուշադրությունը<sup>62</sup>։

Առանձին խումբ են կազմում տարբեր հեղինակների մասնակցությամբ ստեղծված հոդվածների թեմատիկ ժողովածուները<sup>63</sup>։

**ՌԻՍՈՒՄԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՏԱՆԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.** Աշխատությունը քննարկվել է պաշտպանության և երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնի ընդլայնված նիստում։ Առեմախոսության թեմայով տարբեր լեզուներով հրատարակվել է մոտ 35 հոդված, միջազգային գիտաժողովներում ընթերցվել մի շարք զեկուցումներ (Երևան, Թբիլիսի, Մոսկվա, Աշգարա)։

**ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ.** Առեմախոսությունը բաղկացած է առաջաբանից, աղբյուրների և գրականության տեսությունից, չորս գլուխներից՝ համապատասխան բաժիններով, ամփոփումից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից։ Առաջաբանում ներկայացված է թեմայի արդիականությունը և գիտական կարևորությունը, աշխատության ժամանակագրական ընդգրկումը և նպատակները։ Աղբյուրների և գրականության տեսության մեջ ներկայացված են հիմնական տպագիր աշխատություններն ու սկզբնաղբյուրները։

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՊԱՎՈՒԹՅՈՒՆԸ**

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ**

1.1 Արևելյան Հայաստանը Այսրկովկասի վարչա-քաղաքական համակարգում.

Նաղիր շահի /1736-1747/ իշխանության տարիներին Արևելյան Հայաստանում կատարվեցին վարչական եական փոփոխություններ։ Երևանի թեկադրեկությունից անջատվեց Նախիջևանը և վերածվեց առանձին խանության, իսկ Գանձակի թեկադրեկությունից անջատված Արցախում ստեղծվեց «Խամսա» անունով հայկական իշխանությունը։ Նաղիր շահի կողմից Քարբլիում թագավոր հաստատվեց Թեյմուրազ II-ը, իսկ Կախետում՝ նրա որդի Հերակլ II-ը /1745-1798 թթ./։ Նաղիր շահի մահից հետո այսրկովկասյան մնացած խանությունների նման Վրաց թագավորությունները ևս, օգտվելով Իրանում ստեղծված անիշխանությունից, ձեռք բերեցին փաստական անկախություն։

Լոռի-Ղազախ գավառները իրենց տեղական կառավարիչներով 1604 թվականից Շահ Աբասի հրամանով առանձնացվել էին Վրաստանից<sup>64</sup> և այնտեղ բնակեցվել էր Բորչալու ցեղախումբը։ 1749 թվականին Թեյմուրազ II-ը ստացավ Ղազախ-Բորչալուն կրկին Քարբլիին հանձնելու մասին հրովարտակ։ Վրաստանի սահմանները հասան մինչև Աղստև գետ։ 1755թ. Հերակլը Ղազախում վերացրեց «խանությունը» և այն հայտարարեց մոտրավություն, իսկ 1765 թվականից տեղական առաջնորդների փոխարեն գավառը սկսեց կառավարվել թագավորի կողմից նշանակվող պաշտոնյաների կողմից։

<sup>58</sup> Хаджи Мурат Ибрагимбеги. Россия и Азербайджан в первой трети XIX века /из военно-политической истории/. Москва, "Наука", 1969.

<sup>59</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. Թարգմանություն թուրքերեն բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տեքնիկական բառարանով և հավելվածով. Հատոր Ա. Կազմեց Ա. ի. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 224-243։

<sup>60</sup> Enver Konukcu. Selcuklulardan Cumhuriyete Erzurum. Ankara, 1992.

<sup>61</sup> Ali Kemal. Erzincan. Tarihi, Coğrafi, iktisadi, etnografi, idari, ihşai tetkikat tecrubesi, 1932.

<sup>62</sup> Джеддет-паша. Описание событий в Грузии и Черкессии по отношению к Османской Порте /1775-1784/. - "Русский архив", 1888, кн. 1.

<sup>63</sup> "Из истории вековой дружбы" /Сборник статей/. Гл. редактор М. Г. Нерсисян, Ереван, 1983. «XVII-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթականները» /Հոդվածների ժողովածու/. Պատ. խմբ.՝ Վ. Բ. Բարխուդարյան, Երևան, 1989,

<sup>64</sup> Նախաբանը և ծանոթությունը Նախաբանի և Ազերբայջանի վերաբերյալ, IV թ. 226.

1749 թվականին, երբ Մոտանի դաշտից Թարաքամա քոչվոր ցեղախումբը Մահմադ խանի գլխավորությամբ արշավեց Երևանի վրա, Երևանի Հուսեյն խանը օգնության խնդրանքով դիմեց Հերակլին ու Թեյմուրազին, փոխարենը պատրավորվելով վճարել արշավանքի ծախսերն ու ստանձնելով ամենամյա հարկի վճարում<sup>65</sup>։ 1779թ. Հերակլ II-ը արշավեց Երևանի խանության տարածք, որը մեծ արհավիրք դարձավ հայազգի բնակչության համար։

Օգտվելով Արցախի մելիքների միջև ծագած գոտություններից, այնտեղ մուտք գործեց ու ամրապնդվեց քոչվորական ջեմաշի ցեղի առաջնորդ Փանահը՝ 1750-ական թվականներից հիմնադրելով մի նոր վարչական միավոր, սկսեց կարևոր դերակատարում ունենալ և ծայր աստիճան դժվարացնել հայոց ազատագրական պայքարը։

Տեղական անվերահսկելի խառնակություններից մեծապես տուժեցին նաև Նախիջևանի հայկական բնակավայրերը և իր դիրքերը պահպանելու ուղղությամբ հայ բնակչության պայքարը ունեցավ զգալի նահանջ։

Հայ բնակչությունը կարևոր դերակատարում ուներ նաև Գանձակի խանության մեջ ընդգրկված հայկական տարածքներում, որտեղ դեռևս պահպանվում էին հայկական տեղական իշխանությունների թեկուրները՝ մելիքությունները։

1795թ. Աղա-Մահմադ խանը արշավեց Վրաստան և գրավեց Թիֆլիսը։ Թեև սկզբնապես, որպես Հերակլին հարկատու և ենթակա, Երևանի խանը ևս դիմադրեց Աղա-Մահմադ խանի զորքերին, սակայն այնուամենայնիվ ստիպված եղավ ընդունել Իրանի հպատակությունը։ Թիֆլիսի ավերումից հետո Աղա-Մահմադ խանի կողմից Լոռին և Ղազախը տրվեցին Երևանի խանին՝ անջատելով դրանք Քարբլիի թագավորությունից։ 1796 թ. հունվար ամսին Հերակլ Երկրորդը դիմում է Ռուսաստանին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել Լոռին ու Ղազախը կրկին Վրաստանին կցելու համար։

1.2 Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության համակարգում.- Օսմանյան կայսրության մեջ XVIII դարի երկրորդ կեսին առավել չափով դրսևորվեցին այդ պետության ներքին թուլացման ու կենտրոնախույս ուժերի աշխուժացման գործընթացները։

Օսմանյան կայսրության ունեցած բոլոր կարգի դժվարությունները այս կամ այն ձևով անդրադարձնում էին նաև Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կենսապայմանների, նրա սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական ու դավանական կացության վրա։

18-րդ դարի երկրորդ կեսին ու հատկապես նրա վերջին քառորդին Արևմտյան Հայաստանի փաշայություններից առանձնապես նշանակալի դեր էին խաղում Դիարբեքլիի, Էրզրումի, Տրապիզոնի, Ախալցխայի, Կարսի, և Վանի փաշայությունները։ Ինչպես ամբողջ Օսմանյան կայսրության մեջ, այնպես էլ Արևմտյան Հայաստանում ժողովրդի տնտեսական վիճակը առավել վատթարացավ Յոթնամյա պատերազմի (1756-1763թթ.), իսկ այնուհետև 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ։ 1775-1800թթ. Էրզրումում նշանակվել և պաշտոնանկ էր արվել 24 փաշա<sup>66</sup>։ Էրզրումի նշված ժամանակաշրջանի իրադարձությունների մանրամասն նկարագրությունը պահպանվել է ակնամատես տարեգիր Տեր Հարությունի կազմած «Ժամանակագրության» մեջ, որտեղ թվարկվում են այն պայքարի բազում դրվագները, որ ուղեկցում էին այդ փոփոխություններից<sup>67</sup>։ Դրանք ընթացել են այդուրանի ընդհարումներով, որոնց ժամանակ մեծապես տուժել է խաղաղ բնակչությունը և միայն մեկ դեպքում է, որ «Ժամանակագրության» մեջ արձանագրված է, թե նորանշանակ փաշայի պաշտոնավարությունը (որը տևեց մեկ տարուց էլ պակաս ) «Հայոց ազգին լավ էր»<sup>68</sup>։ Տեր Հարությունի «Ժամանակագրության» մեջ գրանցված փաստերից կարելի է

<sup>65</sup> Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հատոր Գ /ԺԸ-ԺԹ դդ./, Երևան, 1955, էջ 172-173։ Նախաբանը և ծանոթությունը Նախաբանի և Ազերբայջանի վերաբերյալ, IV թ. 614. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա. Կազմեց Ա. ի. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 203։ Ի դեպ, Հուսեյն խանի անունը քաջակամում է Երևանի խանների հայտնի ցուցակում. տես ՀՄՀ, հ.3, Երևան, 1977, էջ 571։ Ըստ Պ. Բուտկովի Երևանի և Գանձակի խաները Թեյմուրազին դիմեցին 1749թ. օգոստոսին «побуждаемые обитающими там армянами» (П.Г.Бутков. Материалы для Новой истории Кавказа с 1722 по 1803 года, часть I, СПб, 1869, с. 237-238).

<sup>66</sup> Enver Konukcu, Selcuklulardan cumhuriyete Erzurum, Ankara, 1992, s. 226-250. Գրախոս. տես Մ. Զուլպյան. Էնվեր Կոնուկու. Էրզրումը սելյուկներից մինչև Հանրապետություն. ՊՔՀ, 1997, 1. էջ 265-268։

<sup>67</sup> Պ. Ա. Զորանյան, Հայաստանի պատմության նորահայտ «Ժամանակագրություն», ՊՔՀ, 1997, ք. 1. 2։

<sup>68</sup> Հայաստանի պատմության նորահայտ «Ժամանակագրություն», 1997, ք. 1, էջ 244։



կատարել նաև այն հետևությունը, թե էրզրումի նահանգի հայ բնակչությունը ամբողջությամբ չէ. որ գտնվում էր լիակատար անպաշտպան ու անգոր վիճակում, կային առանձին վայրեր, գյուղախմբեր, որոնք կարողանում էին ինքնապաշտպանությամբ դիմագրավել իրենց ներքին գործերին Օսմանյան միջամտություններից: Ավելին, նրանք որոշ չափով դուրս էին Օսմանյան վերահսկողությունից և ապաստան էին տալիս անգամ Օսմանյան իշխանությունների հետապնդումներից խույս տվող թուրք գործիչներին:

Մեզ քիչ բան է հայտնի 18-րդ դարի վերջին քառորդին Հայաստանում Օսմանյան իշխանությունների անօրինականությունների դեմ հայ բնակչության մղած պայքարի մասին, ուստի մեծ արժեք ունի նաև այն հաղորդումը, որ պահպանվել է այս ժամանակագրության մեջ: Այստեղ պատմվում է երզնկացի Մրթոյի անհաշտ պայքարի մասին, որի գլխի համար 1793թ. փետրվարի 16-ին սուլթանական ֆերման էր եկել: Մթթոն, սակայն, կարողանում է խույս տալ և զինակիցների հետ ամրանալ ամբողջ-աշտարակում: Մեկամսյա պաշարումից հետո, այնուամենայնիվ, թուրքերին հաջողվում է քրդերի միջոցով, որոնց հայերը հավանաբար վստահել էին, խորամանկությամբ տիրել ամբողջին: Տեր Հարությունի արձանագրած այս փաստը մեզ հայտնի առաջին հիշատակությունն է Օսմանյան իշխանությունների կողմից քրդերին հայ ազատագրական պայքարի դեմ օգտագործելու մասին:

Բայագետի փաշան հայերին ընդգրկում էր զինվորական ծառայության մեջ, որը «բացառիկ երևույթ էր կայսրության մեջ»<sup>69</sup>:

Արևմտյան Հայաստանում ժողովրդական կացության վրա որոշակի ազդեցություն էր թողնում նաև եկեղեցա-դավանական հակամարտությունը տարբեր դավանանքների ազդեցության ուղքով ընդգրկվող հայ բնակչության միջև: Այսպիսով, XVIII դարի կեսերից ստեղծված քաղաքական անկայունության պայմաններում հայ ժողովրդի համար ևս առաջնահերթ դարձավ իր հետագա գոյության համար խոր մտահոգությունը և երաշխիքներ ստեղծելու փնտրտույթը: Միաժամանակ հայոց օժանդակությունը փորձում էին ստանալ այլազգի իշխանապետությունները: Հայաստանից օժանդակություն ակնկալում էին ոչ միայն Արևելյան Վրաստանի, այլև Արևմտյան Վրաստանի իշխանությունները: Արևմտյան Հայաստանում հայ բնակչության նկատմամբ անլուր բռնությունների պայմաններում անգամ շարունակվում էր զգալի լինել հայ ժողովրդի դիրքորոշման կարևորությունը և տեղական ներքին փոխհարաբերություններում և թե օտար բռնակալության դեմ ծրագրվող ազատագրական պայքարում:

#### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ: Վրաստանի հետ Հայաստանը ունեցել է ամենատեղի ու բազմապիսի փոխհարաբերություններ, իսկ հայ բնակչությունը Վրաստանում՝ բազմադարյա ու անընդմեջ առկայություն: Այդ պայմանավորված էր ինչպես Հայաստանի քաղաքական կացությամբ, այնպես և ուշ միջնադարում հայկական մի շարք գավառների Վրաստանի կազմում գտնվելու փաստով: Վրաստանում հայ բնակչության կարգավիճակը պայմանավորվում և ձևավորվում էր սոցիալական հարաբերությունների մի ոլորտում, որը մեծապես տարբերվում էր Հայաստանում ու հարակից այլ երկրներում տիրող իրավիճակից: Շրջապատողական հարաբերությունների բացարձակ գերակայությունը թելադրում-պարտադրում էր հայ բնակչությանը ընդգրկվելու հարաբերությունների այդ ոլորտ և ներկայանալու որպես վրաց թագավորի, վրաց եկեղեցու, հայոց եկեղեցու և կամ առանձին ավատատերերի հպատակ-ճորտներ՝ իրականացնելով վրաց ավատատիրական իրավունքի պարտադրանքով իրենց ստանձնած բոլոր պարտականությունների կատարումը: Շրջապատողական կապերներից ազատ էր մոքալաքներ կոչվող քաղաքային բնակչության այն փոքր հատվածը, որը արքունիքին մատուցած խոշոր ծառայության դիմաց ձեռք բերած անձնական ազատությամբ

Թիֆլիսի քաղաքային բնակչության մեջ առանձնանում էր իր սոցիալական ու տնտեսական դրությանը՝ ունենալով հատուկ արտոնյալ կարգավիճակ<sup>70</sup>:

XVIII դարի երկրորդ կեսին հայերը, կազմելով Թիֆլիսի քաղաքային բնակչության երեք քառորդը<sup>71</sup>, քաղաքային տնտեսության զարգացումը դիտում էին իրենց առաջնահերթ խնդիրներից մեկը և մեծապես շահագրգռված էին նրա զարգացման, քաղաքի կառուցապատման ու բարեկեցության ապահովման հարցերով: Ուշագրավ հանգամանք է, որ հայերը Թիֆլիսում շինարարական խոշոր աշխատանքներ ծավալելու համար գումարներ էին հանգանակում անգամ հնդկահայ գաղթօջախում: Հայոց իրավական կարգավիճակը Վրաստանում պայմանավորվում էր ըստ Վրաստանի օրենսդրության ինչպես ընդհանուր, այնպես էլ ազգությունների մասին եղած հոդվածների: Կաշկանդի վերապահումներ էին արվում թերևս միայն հայերի համար:

Հայագրի բնակչությունը զգալի թիվ էր կազմում ոչ միայն գյուղական բնակչության մեջ /առանձնապես հայկական գավառներում/, այլև մեծ չափով ներկայացված էր նաև վրաց ազնվականության և իշխանական դասի մեջ: Հայ բնակչությունը կազմում էր Վրաստանի առևտրա-արհեստավորական դասի գերակշիռ մասը: Հայագրի բնակչությունը վրաց ազնվականության կողմից պարտադրվող ճորտական կախումից խուսափելու համար հաճախ նախընտրում էր էջմիածնի հպատակ ու ճորտ ներկայանալու ուղին:

Թագավորական իշխանությունը երկրում առավել ուժեղ ու զսպիչ էր տեղական ֆեոդալական կամայականությունները հաղթահարելու և հասարակական համաձայնություն ստեղծելու գործում: Ունենալու համար թագավորական գերդաստանի հովանավորությունը, հայ բնակչությունը իր հիմնական մասով, այնուամենայնիվ, նախընտրում էր արքունի ճորտության կարգավիճակը՝ դրանով իսկ վերածվելով նաև թագավորական իշխանության հենարանի ու պաշտպանի: Աստիճանաբար սերտաճելով վրաց ավատատիրական հասարակության մեջ, հայ բնակչությունը իր ազգային դիմագիծը պահպանելու համար դիմում էր առավելապես դավանական համախմբման միջոցին՝ կազմելով Հաղթատի հոգևոր թեմը: Վրաստանում հայ բնակչությունը ենթարկվում էր կամ ուղղակի էջմիածնի Մայր Աթոռին և ներկայանում Հաղթատից առանձին համայնք, և կամ ընդգրկված էր Հաղթատի թեմի մեջ՝ որպես Վրաստանի «իիրավ» բնակիչ:

Վրաստանի գրեթե ամբողջ ներքին և արտաքին առևտրի մեջ ունենալով գեյակշիռ վիճակ ու իրենց տնտեսական գործունեության մեջ վայելելով թագավորի հովանավորությունը, հայ բնակչությունը իր ամբողջությամբ մեջ, սակայն, չունեց որոշակի իրավական արտոնություններ, որպիսիք գոյություն ունեին, օրինակ, Ռուսաստանում: Վրաց արքունիքում ծառայության անցած հայագրի գործիչները ստիպված էին էջմիածնի նկատմամբ որդեգրել այնպիսի քաղաքականություն ու վերաբերմունք, որը թելադրվում էր Վրաց արքունիքի կողմից:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, որ հայագրի բնակչությունը մեծ ավանդ ունենալով Վրաստանի տնտեսական ու մշակութային զարգացման մեջ և կազմելով բնակչության զգալի տոկոսը, սեփական ազգային զարգացման խնդրում ունեցել է լուրջ դժվարություններ և իրավական առումով՝ ոչ համարժեք կարգավիճակ:

2.2 ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՎՈՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ: Հայ-վրացական միացյալ թագավորության գոյության հնարավորության գաղափարը կարող էր սկիզբ առնել դեռևս IX դարում, ձևավորվել X-XI դդ. հայ Բագրատունիների գերակայության, իսկ այնուհետև XII-XIII դդ. վրաց Բագրատունիների քաղաքականության արդյունքում: Հետագա դարերում՝ լեռնալի մինչև XVIII դարի վերջ, այն շարունակվել է իր գոյությունը բազմապիսի դրսևորումներով ու ընկալումներով: Եւ սակայն միասնական կարծիք ու հստակություն չկա նման պետության ընկալման և սահմանումի մեջ: Նիկողայոս Ադոնցի բնորոշմամբ. «Բագրատունեաց գործու-

<sup>69</sup> Մ. Կ. Ջուլալյան. Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. XIII-XVIII դդ., էջ 248:

<sup>70</sup> Ա. Պետրոսյանը նրանց անվանում է պետական մոքալաքներ. տես Ա. Ա. Պետրոսյան, Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, - "Լրաբեր հասարակական գիտությունների", 1966, թիվ 12, էջ 94:

<sup>71</sup> Քաղաքային բնակչություն 1803 թ. մարդահամարի ցուցակը հրատարակել է Սարգիս Կակարածն, տես "Խոսովորում մոսկով", Վոցե II, տ. 2., 1925, թ. 27-104.



ներութեան դաշտն էր Հայաստանն արաբական լայնարձակ մտքով (իմա՝ Արմինան - Պ. Չ.), այսինքն՝ ամբողջ Կովկասը, որի աշխարհագրական եւ քաղաքական կենտրոնն էր իրապէս Շիրակը, իշխանական ճոր ստանը: Այստեղից բղխած կամ ներշնչուած ջանքերը տանում էին դէպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հաւաքել-խմբել կովկասեանն բոլոր ցեղերը մի եւ համուր քաղաքական յարկի տակ, ներդաշնակել նրանց կեանքն ու գործունեութիւնը համագործակցութեան եւ համերաշխութեան գետնի վրայ, Բագրատունի ծառի հովանու ներքեւ...»<sup>72</sup>:

Աշոտ Ռովիաննիսյանը իրավացիորեն շեշտում է, որ «XI - XIII դարերում վրաց Բագրատունիները հանդես էին գալիս Հայաստանում ոչ որպէս նվաճողներ, այլ որպէս գահաժառանգորդներ, որոնց զենքի հաղթանակին, որչափ այն ուղղված էր օտարակալության դեմ, հայ ժողովուրդը ակտիվորեն ընդառաջում և աջակցում էր: Վերանիավորելով Հայաստանն ու Վրաստանը, վրաց Բագրատունիները չէին դիտում Հայաստանը որպէս իրենց անձնատուր եղած մի երկիր, այլ որպէս իրենց տոհմին պատկանած մի տիրույթ, որի ֆեոդալական ազատությունները վերականգնվել էին հայ և վրաց ուժերի համատեղ ջանքերով»<sup>73</sup>:

Հայոց և վրաց ընդհանուր մտահոգության ու ձեռնարկունի արդյունք էր 1238-1240 թթ. Նոր Գետիկից ու Խաչենից հայազգի պատվիրակության ժամանումը ձեռն՝ Վանական վարդապետի, Վարդան Արևելցու և այլոց մասնակցությամբ՝ Մոնղոլական արշավանքների դեմ օժանդակություն գտնելու հույսով<sup>74</sup>:

Դավիթ Արքայազգի կողմից իր հոր՝ Դեմետրեի, թագավորությունը (Ավանում գտնվող վանքի նվիրատվական արձանագրության մեջ) բնորոշվել է որպէս «Վրաց և Հայոց»<sup>75</sup>:

XIV դարում Երևանն անգամ երբեմն ընկալվում էր Վրաստանի մեջ<sup>76</sup>: Հայազգի հեղինակները միշտ չէ, սակայն, որ միանշանակ պաշտպանել են վրաց իշխանությունների վարած արտաքին կամ ներքին քաղաքականությունը, հաճախ արձանագրել են նաև հայ և վրաց ժողովուրդներին ծանր տառապանքներ պատճառած իրադարձություններ, և քննադատել Վրաց թագավորների անհեռատես գործողությունները<sup>77</sup>: Եթե Թովմա Մեծփեցին XV դարում /1441թ./<sup>78</sup> նախատական դիրքորոշում է դրսևորում Վրաց Բագրատունի իշխանությունների վարած անկայուն ու ոչ համարձակ քաղաքականության նկատմամբ, ապա այդ ևս թելադրված էր Հայոց այն ակնկալություններով, հուսախաբանությամբ, կրած տառապանքներով և առաջարկություններին չիրականացմամբ, որ կապվում ու պայմանավորվում էին Վրաց իշխանությունների դիրքորոշման հետ: Խոսում է Թովմա Մեծփեցու եզրահանգումը. «Մեք, համապազ յոյս ի վրացիքն ունելով, պարծեաք ի մէջ անօրինաց, յայնմանէ յուսահատեալ՝ առաջի անօրինաց ափիբերան եղաք»<sup>79</sup>:

<sup>72</sup> Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 155-156 /"Բագրատունյաց փառքը"/:

<sup>73</sup> Աշոտ Ռովիաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 161: Ս. Երեմյանի ընդհանրացումով. «Հայկական հողերի՝ Վրացական ավատատիրական միապետության կազմի մեջ գտնվելու ժամանակաշրջանը ազդել է նաև հաջորդ սերունդների մտածողության վրա հետագայում ևս (XVIII դ.)» (С. Т. Еремян. Общность судеб и культурно-политическое содружество народов Закавказья в IX-XIII вв., - Кавказ и Византия, вып. I, Ер., 1979, с. 9).

<sup>74</sup> P. Chobanian. I Manoscritti Armeni di Roma ed I Loro Colofoni (XIII secolo), - "Roma - Armenia", a cura di Claude Mutafian, Roma, 1999, p. 213-215. Հմտ. Պ. Չոբանյան, Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները (XIII դար), - Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 127-132:

<sup>75</sup> Ս. Մմբատյան, Տեղագիր Գեղարքունի ծովափը գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 254; Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 18-19:

<sup>76</sup> Ժ- դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 287- 88:

<sup>77</sup> Ժ- դարի հիշատակարաններ, էջ 628:

<sup>78</sup> Թովմա Մեծփեցի, Պատմագրություն, Աշխ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 203-214:

<sup>79</sup> Թովմա Մեծփեցի, Պատմագրություն, էջ 214: Արձանագրելով Հայաստանում 1431 թ. սկսված սովը, Թ. Մեծփեցին գրում է, թե «ի գաւառէն Այրարատեան, ի ձմեռային եղանակին, եւեալ գնացին ի կողմն Վրաց եւ այնքան հաւատացեալք ի խառութենէ օղոյն մեռեալք եղին, մինչ զի ոչ կարացին ի քի արկանել» /նույն տեղում, էջ 161/: Ուշագրավ է Թ. Մեծփեցու բացատրությունը, որ դժվարությունների համար մեղադրում է կոնկրետ անձանց. «Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց եւ չար գործոց. մանաւանդ ի ծուլութենէ եղիցանց, եւ ի խաբէութենէ կրօնաորաց եւ ի չար գործոց անհաւատ եւ ստանուն հաւատացեղոց, ի գրկօղ եւ անիրաւ տանուտեբաց, ի պիղծ եւ զազիր առաջնորդաց» /նույն տեղում, էջ 162-163/:

Վրաց թագավորները ևս անգամ նույն XV դարում /Գիորգի, Ալեքսանդր, Բագրատ, Կոնստանտին և այլք/ իրենց տիտղոսաշարուն պահպանում էին Հայոց թագավոր ներկայանալու հավակնությունը, որպէս հիմնավորում ունենալով հիմնականում Հայաստանի հյուսիսային հատվածի /վրաց. աղբյուրներում անվանված Սոմխիթ=Հայք, Հայաստան<sup>80</sup> Վրաստանի կազմի մեջ լինելու պարագագ, այնպես էլ նաև վերիուշ-ձգտումը Վրաստանի ավելի ընդարձակ սահմանների մասին:

XVII դարի վերջին քառորդին ևս Սոմխիթը շարունակում էր մնալ Վրաստանի կազմում և արձանագրվել որպէս առանձին վարչական միավոր<sup>81</sup>:

Վրաց իրականության մեջ ավանդույթը խախտելու վճռական քայլ կատարվեց XVIII դարի երկրորդ կեսին, ինչը արձանագրվել է Հերակլ II-ի կողմից 1770թ. ապրիլի 5-ով թվագրված և Ռուսական արքունիք ուղարկված Վրաստանի մարդահամարի ցուցակի մեջ, երբ Վրաստանի կազմում գտնվող Սոմխիթը անվանվում էր արդեն Ստորին Քարթլի /Ստորին Վիրթ/: Նման ընկալումը շարունակվում է մինչև այսօր՝ վրաց հետազոտողների կողմից ետադարձ ժխտելով նաև նախորդ դարերի մտայնությունն ու իրականությունը՝ վերածելով այդ բանավիճային խնդրի<sup>82</sup>: XVIII դ. երկրորդ կեսին Վրաց թագավորները իրենց ստորագրություններում և տիտղոսաշարուն այլևս դադարում են Սոմխիթ = Հայաստանի արձանագրումը, սակայն այդ բնավ չի նշանակում, թե նրանք դադարում են հավակնություններ ունենալ Հայաստանի նկատմամբ: Առավել ուշագրավ է, որ նման հավակնությունների դրսևորում տեսնում ենք անգամ Արևմտյան Վրաստանի, այն է՝ Իմերեթի, թագավոր Սողոմոն I-ի կողմից: Նա, հավակնելով "Ողջ Վրաստանի" թագավոր հորջորջվելու գալթակությանը, իր տիտղոսաշարի թվարկման մեջ էր ընդգրկել ընդարձակ տարածքները և այն ձևակերպել որպէս "թագավոր Ողջ Վրաստանի, Հայոց, Կախից, Ռանից, Ափխազաց թագավոր, Շահնշահ և Շիրվանշահ"<sup>83</sup>:

Հերակլ II-ի տիտղոսի մեջ որպէս հիմնական տիրույթ նշվում են միայն Քարթլին և Կախեթը ու հաջորդում էր երբեմն "իշխող Երևանու, Գանձակու և այլն" ձևը, իսկ ավելի հաճախ՝ միայն "և այլոց" արտահայտությունը, կամ մասնավորեցվում Բորչալու-Ղազախ հավելումով: Իրավիճակը, սակայն, մասամբ փոխվեց, երբ ընդառաջելով Շ. Շահամիրյանի ծրագրերին, Հերակլը նախ Վրաց իշխանի տիտղոս, իսկ ապա և Լոռիի նվիրեց Շ. Շահամիրյանին՝ որպէս Վրաստանի ենթակայության ներքո գտնվող Հայաստանի մի հատված<sup>84</sup>: Եթե վրաց իրականության մեջ XVIII դ. երկրորդ կեսին սկսել էր մկազել ու մթագնել Սոմխիթի դերը՝ սակավամարդ լինելու հետևանքով, ապա հայ իրականության մեջ հայ-վրացական միացյալ պետության ստեղծման համար տեսական հիմնավորումների, ծրագրերի ու առաջարկների արժանությունները կրկին վերակենդանացնում են "Սոմխիթ = Հայաստան"-ի գաղափարը:

1787 թ. հոկտեմբերի 15-ին Ղուկաս Կարնեցուն գրած նամակում Շ. Շահամիրյանը պնդում է, թե «և յոյժ բարեգոյն լինի հովվութիւն ի վերայ մեր Բագրատունեաց՝ հաւատարմաց մերոց, քան թէ Օսմանցկաց և Սեֆիֆաց և այլն»: Ավելին, Շ. Շահամիրյանը Ղուկաս Կարնեցուց պահանջում է «հանել մի ի որոյոց Բագրատունեաց ի նոցանէ (իմա՝ ի Վրաց- Պ.Չ.) և ամուսնացուցանել ընդ ունեմն ազատի և կամ ազնուազարմի Հայոց և նշանատրել նմա ժառանգորդ ի վերայ Տանն Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց»: Շ. Շահամիրյանը համոզված է, թե իրեն վրաց իշխանի տիտղոս շնորհելու փաստը և Հերակլի առաջարկը՝ «որում հրամայեաց զիս շարել որոք կարգադրութիւնք վասն բարեպէս կառավարութեանն աշխարհին իւրոյ», հետևանք են նրա, որ «ի վաղմջուց ժամանակ ի նոցանէ բուրէ ի քինա իմ

<sup>80</sup> Хосров Торосян. Топоним "Сомхити" в грузинских первоисточниках. Ереван, 2003.

<sup>81</sup> Լեւոն, II, էջ 224, 226.

<sup>82</sup> ქვემო ქართლი (ეთნოგრაფიული გამოკვლევა). თბილისი, 1990.

<sup>83</sup> ლ. ტუხაშვილი, რუსეთი და საზოგადოებრივ-პოლიტიკური მოძრაობა აღმოსავლეთ საქართველოში, თბ., 1983, გვ. 80.

<sup>84</sup> Որպէս այդպիսին է արձանագրված այն նաև XVIII դարավերջի պատմիչ Օման Խերխեւլիժեի մոտ. «1772թ. ...[Իրակլի թագավորը] շատ հետախուզություններ կատարեց ու աշխատանք թափեց, որպեսզի իր երկրում գտնի ոսկու և արծաթի հանքեր, և գտավ այն Սոմխիթի երկրում՝ Ախալքալան, որ է հայրենական [ժառանգություն] Սոմխիթի մեկը իշխանների» (Լ.Մ.Սեյքսթե-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 4, էջ 177):



ցանկութիւն սրտից նոցա, զի ցանկան միաբանութիւն երկուց ազգաց, այսինքն՝ Հայոց և Վրաց»<sup>85</sup>:

Շ. Շահամիրյանը Լոռին դիտարկում էր որպէս Հայաստանի ապագա Հանրապետության համար միջուկ<sup>86</sup>: Ավելին, Շ. Շահամիրյանը 1786թ. ողջունելով Գեորգիկյան պայմանագիրը, հատկապէս կարևորում էր նրա 6-րդ կետը, ըստ որի Վրաստանն իրավունք էր ստանում Այսրկովկասում ընդարձակելու իր սահմանները ռուսական օժանդակության շնորհիվ՝ նկատի ունենալով հարակից հայկական տարածքները<sup>87</sup>:

Ինչպէս նախորդ դարերում, XVIII դարում ևս, հանուն Հայաստանի հայ գործիչները ընդառաջում էին վրաց հավակնություններին: Հ. Արղուրյանը գրում էր «Եթէ հայեսցին դոքա յիմ սերն առ հայրենիս իմ և աշխատանքն վասն հաստատութեան թագաւորութեան իւրեանց և պայծառութեան, ... այլ իմ անձն և իմ Հայոց ազգն մատուցանելոց եմ դոցա... իբրև զգոհ և տեսանելոց եմ յայնժամ իմ շնորհակալութիւնն արդեամբ եւ բանիւ, որպէս խօսեցեալ եմ ընդ արքայորդի Դավիթին, եթէ ոչ է մոռացեալ զայնս, զի իմ կամքն է կակղեցուցանել զդոսս և կոչել ոչ միայն թագաւոր Վրաց, այլև Հայոց»<sup>88</sup>: 1783 թ. Գեորգիկյան պայմանագրի կնքումը ևս վրացական կողմի համար դիտարկվել ու բնութագրվել է որպէս Վրաստանի գոհաբերում Ռուսաստանին:

Ի տարբերություն հայոց դիրքորոշման, վրաց վերաբերմունքը հայոց նկատմամբ գնալով առավել կոշտանում էր, որով և պայմանավորված էր այն «կակղեցուցանելու» ձգտումը: Ակնհայտ է, որ «կակղեցուցանել»-ի ներքո Հ. Արղուրյանը ակնկալում է որոշակի վերաբերմունք՝ Վրաց արքունիքից զիջումների ու շնորհների կորցում իր և իր տոհմակիցների համար: Հ. Արղուրյանի հավակնությունները, ինչպէս ակնհայտ է, նոր չէին: Դեռևս Հերակլի կողմից 1783թ. օգոստոսի 28-ին ստացած հրովարտակով Արղուրյանները հայտարարել էին, որ իրենց տոհմը ուղղակի շարունակությունն է Երկայնաբազուկ-Չաքարյանների՝ դրանով իսկ փորձելով հիմնավորել Վրաստանում իրենց հավակնությունները, պահանջներն ու իրավունքները<sup>89</sup>:

XVIII դարի երկրորդ կեսին, երբ «Մոմխիթ=Հայքը» և հարակից տարածքները Վրաց իրականության մեջ մասամբ արդեն սկսել էին ընկալվել ու անվանվել որպէս Ստորին Քարթլի, Վրաց իշխանությունները, այնուամենայնիվ, հանուն Վրաստանի տնտեսական վերականգնումի և զայթակղված Շ. Շահամիրյանի առաջարկներից, ստիպված են լինում կոչ անելու հայերին՝ գալ և ապաստանել «ընդ եղբայրս իւրեանց, բնակեացին ի սեպուհ աշխարհս իւրեանց»<sup>90</sup>:

Առավել խոսուն է Գեորգի XII-ի 1800 թ. հունվարի սկզբներին գրած մամուլը Էջմիածնի միաբանությանը, որ փորձում է "Հայոց թագավոր" ներկայանալու հիմնավորումով միջամտել Հայոց կաթողիկոսի ընտրությունների խնդրին և ոչ միայն առաջադրել Հովսեփ Արղուրյանի թեկնածությունը, այլև սպառնալ, թե. «Յայտ իսկ է ձերումդ սրբութեան, որ տերութիւնն մեր ոչ է օտար ի Սրբոյ Աթոռոյ, այլ ունինք և մեր մասն և բոլոր ազգքն Հայոց կոչեն զմեզ արքայ

ինքեանց: Նաև գիտեն զմեզ ազգական արքայիցն Հայոց: Արդ, եթէ այդպէս է, ապա ուրեմն պարտիք և դուր լսող լինիլ Սրբոյ Աթոռոյ օգուական բանիցն մերոց և առաջ հաւանութիւն իսկ... և որքան ի յիս կարողութիւն գոյ, մինչև ի հեղումն արեանս ջանալոց եմ ի վերայ օրինաւոր առաջադրութեանս...»<sup>91</sup>: Հայոց և Վրաց թագավոր ներկայանալու փաստը, որ միանգամայն համահունչ էր Վրաց իշխանությունների շահերին ու հավակնություններին, նպաստավոր ձևով օգտագործվում էր Վրաց պետության կողմից իր ներքին ու արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ: Նկատառելի է այն համագամները, որ Գեորգի XII-ը իր թելադրանքը պարտադրելու և հայոց թագավոր ևս ներկայանալու ժամանակ Երևանի ու Գանձակի խանությունները այլևս չէին գտնվում Վրաստանից կախման մեջ: Նրանք 1795թ. Աղա-Մահմադ խանի արշավանքից հետո փաստորեն ընդունել էին Պարսից գերիշխանությունը և, օգտվելով Պարսից իշխանության վերահսկողության թուլացումից, փորձում էին ընդամենը վարել արտաքին խուսանալման քաղաքականություն՝ մնալով պարսից գերակայության ոլորտում: Հերակլին գրած իր մամուլում "Վրաստանի և Հայաստանի թագավոր" է անվանում նրան Հովսեփ Էմինը՝ երազելով նրա միջոցով ազատագրել ողջ հայ ժողովրդին<sup>92</sup>: Ուշագրավ է նաև Հակոբ Շամախեցի կաթողիկոսի 1760թ. գրած մամուլը Եփրատից հեռացնելու թագուհուն՝ Թեյմուրազ Երկրորդի խնդիրներին ընդառաջելու միջնորդությամբ<sup>93</sup>: Հայոց կաթողիկոսը իր միջնորդությունը հիմնավորում է նրանով, որ Թեյմուրազն ու նրա որդի Հերակլ II-ը «զցայգ և զգերեկ ընդդիմացան և ընդդիմանան ևս Լեզկեաց և յաղթեցին ևս բազում անգամ և ... մնացեալ քրիստոնեայք»՝ թէ Հայք և թէ Վիրք և թէ այլազգիք ևս, զի գնոսա ևս զերեն, նախ Աստուծոյ և ապա դոցա պահպանութեամբն կան այժմ»<sup>94</sup>:

Ռուսաստանը, ինչպէս XVIII դարի առաջին քառորդին, այնպէս էլ դարի վերջին քառորդին հմտորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համագործակցության հնարավորության հույսը և անկախություն ձեռք բերելու երազանքը: XVIII դարի երկրորդ կեսի առանձնահատկությունն էր Ռուսաստանի կողմից Վրաստանի նկրտումներին Հայաստանի տարածքի նկատմամբ բավարարում տալու միջոցով՝ շահելու վրացի և հայ գործիչների օժանդակությունը՝ Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու համար: Այդ առումով հասկանալի է բացատրելի է դառնում նաև այն փաստը, որ 1796 թ. Վ. Ջուրովի հրամանատարությամբ Ռուսական բանակի այսրկովկասյան արշավանքի ժամանակ ևս Երևանի գրավումը վերապահվում էր Հերակլ II-ին՝ բավարարում տալու ինչպէս վրաց հավակնություններին, այնպէս էլ դիվանագիտական հիմնավորում ստեղծելու՝ Օսմանյան Թուրքիայի հետ անմիջական ընդհարումից խուսափելու համար:

Այսրկովկասյան ժողովուրդների ազգային ձգտումներին լավածանոթ Վ. Ա. Ջուրովը Վրաց թագավորության վերացումից հետո էլ 1803 թ. ներկայացրած իր ծրագրում առաջարկում էր ընդարձակել Վրաստանի սահմանները՝ շեշտելով հենց Ռուսաստանի շահերը. «Грузия есть для нас наинужнейшая, я скажу, что к образованию в крепости, и силе политическаго ее бытия для существенных выгод России необходимо нужно границы оной протянуть до исхода рек Куры и Аракса и присовокупить к ней по Араксу лежащие укрепления Шушу, Нахичевань и Ереван, а к Черному морю по реке Персону или Фазу, Имеретию»<sup>95</sup>:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, թե Հայաստանի ազատագրման նպատակով եթէ հայազգի գործիչները ունեին որոշակի ակնկալիքներ Վրաստանի կողմից ռազմա-քաղաքական օժանդակություն գտնելու հարցում և մշտապես ձգտում էին նպաստել Վրաստանի առաջընթացին, ապա Վրաց իշխանությունները օգտագործելով հայոց ազգային ակնկալիքները, մտահոգված էին միայն Վրաստանի տնտեսական, ռազմա-քաղաքական ու մշակութային զարգացման խնդիրներով: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումի խնդիրները չէին կարող մտնել և չէին մտնում վրաց գործիչների

<sup>85</sup> Армяно-руссские отношения в XVIII веке. с. 360.

<sup>86</sup> Robert H. Hewsen. Russian-Armenian relations 1700-1828. - Society for Armenian Studies, Number 4, Cambridge, Massachusetts, p. 16-17.

<sup>87</sup> Նշելի է, որ Շ. Շահամիրյանը ձեռքի տակ ունեցել է Գեորգիկյան դաշնագրի հայերեն բարձրագույն պայմանագրի օրինակ, որտեղ այդ պահանջը դրված է եղել 6-րդ կետում: Պաշտոնապես հաստատված օրինակի մեջ այդ պահանջը 2-րդ կետում է: Պետք է ենթադրել, որ Շ. Շահամիրյանը պայմանագրի բովանդակությանը ծանոթացել է մինչև պաշտոնապես ստորագրված տարբերակի ստեղծումը՝ նախագծի բնագրումների ընթացքում գտնվող օրինակի հիման վրա: Քննարկումներին հետևում էր Հ. Արղուրյանի և վերջինիս կողմից էլ, հավանաբար, այն թարգմանվել ու առաքվել էր Շ. Շահամիրյանին:

<sup>88</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. (Յովսէփ կաթողիկոս Արղուրեան, մասն առաջին, 1778-1800), հրատ. Գիւտ ա. քին. Աղանանց, Թիֆլիս, 1911, էջ 194:

<sup>89</sup> Տես Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. (Յովսէփ կաթողիկոս Արղուրեան, մասն առաջին, 1778-1800), հրատ. Գիւտ ա. քին. Աղանանց, Թիֆլիս, 1911, էջ 395-396: Լ.Մ.Մելիքսեթ-Բեկ, Վրաստանի թագավոր Երեկե II-ի և Ռուսաց կայսր Պավել I-ի հրովարտակները Միաբարձրներին, - «saistorio moambe», I, 1945, էջ 22-32: Տեղեւորաւոր տես Cyrille Toumanoff. Les Dynasties de la Caucasic Chretienne. Roma, 1990, p. 294-300, 555.

<sup>90</sup> Պ. Չորանյան, Հնդկահայ գաղութային պատմությունից (նորահայտ վավերագրեր), - ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 188:

<sup>91</sup> ՄՄ, ԿԴ, 9/168, հայ. թարգմ.:

<sup>92</sup> А. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ереван, 1989, с. 41.

<sup>93</sup> Армяно-руссские отношения /сб. док./, IV, Ереван, 1990, с. 19-22. Վահրամ Մարտիրոսյան. Հայ-վրացական առնչությունները XVIII դարի 50-60-ական թվականներին. - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, թիվ 1 /445/, էջ 41:

<sup>94</sup> Армяно-руссские отношения /сб. док./, IV, с. 21.

<sup>95</sup> Н. Г. Куканова, Освещение..., - "Иран", М., 1973, с. 191.



միախազծումների մեջ, Վրաստանը ընդամենը փորձում էր ընդարձակել իր սահմանները՝ ընդգրկելով Հայաստանի տարածքները, իր տիրապետությունը հաստատել Հայաստանում և հայոց նկատմամբ ազդեցությունը պահպանելու մպատկարով ներկայանալ որպես Հայոց հովանավոր: Հայոց օժանդակությունը փնտրելու խնդրում հակադրվում էին վրաց-ռուսական շահերը, իսկ Հայաստանի մահինեղական իշխանությունները Հայոց ազատագրական ձգտումների մեջ, քնակառարար, տեսնում էին միայն իրենց տիրապետության վախճանը: 2.3 ԱՅՅ-ՎՐԱՅԱՆԿՆԸ ՀՐԱՌՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅՅ ՔՈՒՆԱՔԱՎԱԿՆ ՄԻՏՏԸ

Հայոց քաղաքական միտքը ազատագրական ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին:

Հայոց հասարակական-քաղաքական կյանքի ուղղորդիչ իր դերակատարությունով XVIII դարի կեսերից առանձնապես կարևորվում է Էջմիածնի կաթողիկոսության ազդեցությունը, որը աստիճանաբար բոթափելով 1730-40-ական թվականների ճգնաժամային իրադարձությունները, 50-ական թվականների վերջերից սկսում է վերել առավել նպատակահարողված քաղաքականություն է վերածվում առավել ազդեցիկ գործունի: Այդ գործընթացում նշանակալի էր Հակոբ Շամախեցի, իսկ այնուհետև նրա աշակերտ Սիմեոն Երևանցու և ապա Դուկաս Կարմեցու վարած հավասարակշիռ և շրջահայաց գործունեությունը: Դեռևս 1745 թ. Տոգոյի շահի կողմից Ղազար Ձախկեցուն կաթողիկոսական գահից արտաքսումից է հովհաննես Ագուլեցուն կաթողիկոս կարգելուց հետո, Ղազար Ձախկեցուն կրկին կաթողիկոսական Աթոռին վերադարձնելու գործում կարևոր դերակատարում ունեցած Հակոբ Շամախեցին<sup>96</sup>, 1749թ. ընդունում է նաև Արևմտյան Վրաստանի գահագլուխ եղած Ալեքսանդր V թագավորի կողմից օժանդակության ակնկալիքով դեսպանագնացությամբ Էջմիածին ժամանած Տիմոթեոս արքեպիսկոպոս Գաբաշվիլուն<sup>97</sup>: Հայոց Ղազար Ձախկեցի կաթողիկոսի անունից գրած իր մամուլային մե ներկայացնում է Սալյ Աթոռի վիճակը և դրապով այլամանավորված օժանդակության ցուցաբերման անհնարինությունը<sup>98</sup>: Ընտրվելով Հայոց կաթողիկոս, Հակոբ Շամախեցին 1759թ. վրաց թագավորներին ուղղած մամուլում, ներկայացնելով իր ընտրության պարագաներն ու Սալյ Աթոռի ծանր վիճակը, խնդրում-պարտավորեցնում է վրաց թագավորներին «զոլուսիսն ոչ դնել ի միջի, այլ որպիսեօք սրտիս և մտօք, որք զձեզ և զձերայինսն հոգայք, նոյնպիսեօք զձեզ և զձերայինսն հոգայցիք...»:

Մտեղծված նոր պայանանքերում հայ քաղաքական միտքը ձևավորող գործիչները շարունակում են Վրաստանի հզորացումը երաշխիք համարել Հայաստանի ազատագրության համար<sup>99</sup> և ոչ միայն համաձայնել, այլև անգամ Հայաստանը Վրաց թագավորության կազմի մեջ տեսնելը փրկելու խնդրել՝ այն պատկերացնելով որպես հայ-վրացական միավորյալ պետություն՝ հյույժ էական դերակատարումով<sup>100</sup>:

<sup>96</sup> Տես նրա վրաց թեյնորագ II բազմադրին և Թիֆլիսահայոց ու Մելիք Աղային գրած նամակները՝ ՄՄ, ձեռ. 6241, ք. 14ա, 78բ-79ա (ստորև՝ հավելված):

<sup>97</sup> S. Գաբაყაძის დიპლომატიური მასაჲს თხზ ტომოთუ გაბაშვილი. შიშოსლვა. ტექსტე გამოსაცემად მოამზად, გამოკვლევა, ლექსიკონი და საძიებლები დაურთო ე. მეტრეველმა, თბ., 1956. გ. პაიჭიძე. რეზიუმე გაბაშვილის ექლარიდ რუსეთში /1737-1740 წლები/, - ქართული სამეფო-სამთავროების საგარეო პოლიტიკის ისტორიიდან, I, თბ., 1970, გვ. 151-180.

«ԱՄՍ, ձեռ. 6241, էջ 13բ-14ա (սևագրություն): Ի դեպ, այս վկայությունը արժեքավոր է մասն. Տիմոբեոս Վարաշվիլու կյանքի ու գործունեությանն ուսումնասիրման առումով, որը ուսու-թարգրական պատկերավոր ժամանակի որպես Ալեքսանդր V-ի դեսպանությունը ղեկավար 1737-1739 թթ. եղել է Ռուսաստանում, 1740թ. ապրիլի 28-ին Մոսկվայում մասնակցել հայոց մահաձերթ Միսնա արքեպիսկոպոսի դավաժանությունը արարությունը, իսկ 1755-1759 թթ. ճանապարհորդել Սրբապետ, իսկ հետագայում փոխադրվելով Ռուսաստան, թաքցել 1740 թվականից հետո իր Վրաստանում լինելու հանգամանքը (հմմտ. Պ. Չոբանյան, Վրաց ուղեգրությունները..., էջ 33-34):

99 Վ. Մարտիրոսյան, Հայ-վրացական առնչությունները XVIIIդ. 50-60-ական թվականներին,- «Լրաբեր հաս. գիտությունների», 1980, թիվ 1, էջ 42:

10) Ուշագրավ է նաև այն համաճառները, որ Հերակլ II-ին զրաժ մամուկում Ռուսաստանի կանցլեր Վարդգուր հարկրում է, քի «как е. с.в. Теимураз Николаевич сего человека весьма милостиво принять изволил с обещаниями, кои соответствовали его желанию, так прошу я и в. с.с. равномерно его принять и великою вашею милостью не оставить...». Տե՛ս Արմյան-ռուսские отношения /сб. док./, IV, с. 41.

Հակասումանյան դաշինք ձևավորելու ծրագրերում դեռևս XV դարից շրջանավոր գաղափարը, քե հնարավոր է Օսմանյան տիրապետության ներքո գտնվող հայ, վրացի, թուրքմեն, ասորի, եգիպտացի և այլոց դաշնակցությունը, իր շարունակությունն է ունենում XVII-XVIII դդ. նա<sup>101</sup>:

1760-ական թթ. Թիֆլիսում էր գտնվում Հովսեփ Էմիրը, որը մտադիր էր ստանալ Հերակլի ազակցությունը, անցնել Աբստույան Հայաստան և այն ազատել թուրքական լծից: Քուրդ-եղբայրներն ու ասորիները որպես հայերի դաշմակից էին դիտվում Օսմանյան պետության դեմ հայոց պայքարի ընթացքում, ինչպես այդ մասին աստիճանաբար Հովսեփ Էմիրին գրում էր Հովհան վարդապետը Մուշից: Ըստ Հովհան վարդապետի Հերակլ 2-րդի կողմից Հովսեփ Էմիրին տրամադրվելիք ռազմական ուժերը կարող էին լինել անգամ փոքր, նույնիսկ սիմվոլիկ (ընդամենը 20 հոգի), միայն տպավորություն գործելու համար, քե Հերակլը ևս մասնակից է հակաօսմանը չպայքարին:

Թե որքան իրատեսական չէին Հովմանի՝ Հովսեփ Էմինն գրած մամակում Օսմանյան Թուրքիայի մասին ունեցած պատկերացումները, ցույց են տալիս հետևյալ տողերը: Արձանագրելով, որ իրոք «Թուրքները այն չեն, ինչպիսին եղել են հայրադր տարի առաջ», Հովմանը 1763 թ. պնդում էր, թե «Նրանք կզգեսին իմեն իմյ առանց պայքարի, և բանի որ նրանց քաղաքները ամրացված չեն, ապա կարող ես ենթադրել, որ նրա գրավումը շատ դյուրին գործ պետք է լինի»: Նրանց մտքերում արմատացել է մարգարեությունը, որ իրենց տիրապետությունը մոտենում է ավարտին, և որ նրանց պայքարը քրիստոնյաների դեմ ոչ մի իմաստ չի կրող ունենալ: Նրանք մուկնա են լսել են Ռուսական կայսրությունից քո ժամանելու մասին, որ Ռուսական կայսրությունը երաշխավորել է Վրաց արքայազնին, և քուրքերը չեն համարձակվի անգամ մեկ քրիստոնյայի արյուն թափել: ...Եթե Հեռակի հետ ոչինչ չստացվի, թեև իմ հայրական խորհուրդը՝ երբեք մի թուլանա և առաջ ընթացիդ, մի երկնջիդ որչ մի վտանգից և ապավինիր Աստծուն: Կհասնես քո նպատակին թե ոչ՝ քեզ ապահովում է փառքը<sup>102</sup>:

1750-60-ական բնականները Օսմանյան պետության պատմության մեջ իրոք հայտնի են որպես կենտրոնական իշխանության թուլացման և փաշաների կենտրոնախույս ձգտումների դրսևորումներով հազգեման շրջան: Թուրքական բռնատիրությունը ոչնչացումով ու ամալացումներով էր պատասխանում Օսմանյան տիրապետության դեմ ելույթները նաև Սփրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլուր: Իրադրության լրջությունը հայ հոսանքության մեջ առաջագրել էր երկակի վերաբերմունք՝ երկու թև.

1. Մեկ կողմից ամբուսափելի էր համարվում ազատագրական զինված պայքարին ձեռնամուխ լինելը, առանց որի անհնար էր ժողովրդի ազատագրումը և պետականության վերականգնումը: Այն պետք է փոխեր հայ ժողովրդին վերջնական ուժացումից:

2. Ելնելով տիրող ծանր իրավիճակից ու տեսնելով նաև համազգային խնդրի շուրջ համախմբվելու համար եղած դժվարությունները, երկրորդ քըը գտնում էր, որ դեռևս չկան անհրաժեշտ նախադրյալներ ազատագրական պայքարի հաջող ելքի համար, ուստի և վաղաժամ են համազգային զինական բախումի կոչերը:

Առաջին ուղղության կրողներ էին Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շ. Շահա-  
միրյանի խմբակի անդամները և այլք: «Նոր տեսրակը» այդ ուղղության հավատո հանգա-  
նակն էր: Երկրորդ ուղղության պարագլուխ հանդես էր գալիս կաթողիկոս Սիմեոն Երևանցին:  
Դիքորոշումների բախումը դրսևորվում է ինչպես Սիմեոնի կողմից Հովսեփ Էմինի  
գործունեության գնահատության մեջ, այնպես էլ «Նոր տեսրակի» առիթով Մովսես  
Բաղրամյանին բանադրելու և Շ. Շահամիրյանին կշտամբանքներով ու սպառնալիքներով  
նամակի առաքումով: Սիմեոն Երևանցին մեղադրվում է փոխադարձաբար Հովսեփ Էմինի  
կողմից՝ ազատագրակառ շարժմանը խոչընդոտելու համար: Հերակոմի գրած Սիմեոն  
Երևանցու նամակից պարզ է, որ վրջինս ոչ թե ղեկ էր Հովսեփ Էմինի կողմից «իր մարդիկը»  
ունենալու կամ հավաքագրելու գործողությունների, այլ նրանց անշղջահայաց քայլերին:

<sup>101</sup> Հմմտ. Յ. Զիւռտեան, Հետաքրքրական վաւերագրութիւն մը, - «Բազմապէս», 1963, էջ 122-125:

<sup>102</sup> Life and Adventures of Emin Josef Emin. Calcutta, 1918, p. 234-236. «Յովսէփ Էմինի կեանքն ու արկածները», Պէտրոս, 1958, էջ 267-268:



Ակնհայտ է, որ ծրագրերի կազմումն ու ընդհանուր դեկավարումը Սիմեոն Երևանցիին վերապահում էր իրեն:

Հերակլին ուղղած Սիմեոն Երևանցու մամական ակնարկ անգամ չկա Հովսեփ Էմինին Վրաստանից արտաքսելու մասին: Սիմեոն Երևանցու դիրքորոշումը մերժողական ներկայացնելով Հովսեփ Էմինին, Հերակլ II-ը դրանով ընդամենը արդարացում էր իր վերաբերմունքը Հովսեփ Էմինի և նրա ծրագրերի նկատմամբ: Այդ ամենը այնքան համոզիչ են հնչել Հովսեփ Էմինին, որ ինքը ևս կրկնում է Հերակլի հիմնավորումը: Հետագա ուսումնասիրողները և շարունակել են Սիմեոն կաթողիկոս Երևանցուն ներկայացնել որպես իբր Հայաստանի ազատագրության ոչ համակիր<sup>103</sup>:

Ի՞նչ նկատի ունեն Սիմեոն Երևանցին «մեծ ցավ» արտահայտության ներքո: Չէր բացառվում, որ Օսմանյան կառավարության կողմից ապստամբությունը ճնշելու համար ուղարկվելիք բանակի դեմ մարտի դեպքում ուժերի հարաբերակցությունը կարող էր լինել ոչ հայոց օգտին: Հատկապես պատկերավոր է Ղուկաս կաթողիկոսի հարցադրումը Ը. Շահամիրյանին. «Գերեալ էիր մեզ վասն ազատութեան աշխարհիս մերոյ հոգ տանիլ և ցուցնալ էիր գոմանս կերպ կարգադրութեան...Այլ երանի էր, թէ գոնեա մասնատրապէս արդիւնահային... բայց լինէր թէ դու՝ օրհնեալոյ, այժմ յայս կողմանքս գայիր և ականատես վերահաստեպեամբ իմանայիր գկացութիւնս մերագնէից և զանօգոնկանութիւն՝ և զոմութիւն իշխօղացն և ինքնին կնքէիր, թէ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի: Ապա թէ հնարատր իցէր յառաջանալ, մի՞թէ յիմար իցենք, որ ի տառապանաց գերծանիլ չկամիցինք: Ձկուներ որսացնալ ի ցանցս, և թռչունը ընդենալք ի վարմս ջանան գերծանիլ, ապա որքա՞ն ևս առաւել բանականքս բարձրամբ ազատութեան»<sup>104</sup>:

Մադրասի խմբակը չէր կարող չըջանցել Մայր Աթոռի առարկությունները: Այնուհետև, ինչպես հայտնի է, Հովսեփ Էմինին տրամադրվելիք օժանդակությունը պայմանավորվում էր նրանով, որ ծրագրերին պետք է հավանություն տար և Սիմեոն Երևանցին:

Այսպիսով, կանխելով Հովսեփ Էմինի հախուռն գործունեությունը 1760-ական թվականներին Հայաստանում, Սիմեոն Երևանցին ոչ թե բացառում էր պայքարի անհրաժեշտությունը, այլ առաջադրում էր ազատագրական պայքարի նախապատրաստական ծրագիր: Սիմեոնը ևս նվիրված էր ազգային գաղափարների տարածմանը մշակատնային ժողովրդի առաջընթացը ապահովելու խնդրին<sup>105</sup>: Նա ձեռնամուխ էր եղել Էջմիածնում ստեղծելու քարոզչության այդ կենտրոնը՝ իր տպարանով, թղթի գործարանով և այլն, զուգորդելով դրանք գործնական քաղաքականությամբ: Սիմեոնը համոզված էր նաև, որ «ցեցն ի միջոյ է և ոչ՝ արտաքստ»<sup>106</sup>:

Որոգայք փառացը մեզ հասած տեսքով հրապարակել էվով միայն 1788թ. Հերակլ Երկրորդի կողմից կատարված առաջարկին ընդառաջելով<sup>107</sup> և տպագրելով միջոցով: Ը. Շահամիրյանը պատրաստակամ էր լսելու և լսելի առնելու "սրբազանից հայրապետաց Հայոց և Վրաց"<sup>108</sup>:

Մինչև «Որոգայք փառաց»-ի հրատարակումը Հերակլի խնդրանքով նրան ուղարկելով իր առաջարկությունները ու նաև գրքի ձեռագիրը՝ որպես նշավակ, Ը. Շահամիրյանը Հերակլ II թագավորին 1787 թ. հոկտեմբերի 15-ին գրած նամակում ընդգծում էր, որ այդ գիրքը գրված է Հայոց համար, նույն ոգով խորհուրդ էր տալիս շարժվելու նաև Վրաց թագավորին՝ երկրի բարգավաճման գործում, սակայն, կարևոր դերակատարում վերապահելով թագավորական իշխանության կողմից կատարելիք բարեփոխումներին:

<sup>103</sup> Գ. Ա. Գալդյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 111:

<sup>104</sup> Մ. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար, - «Երևանի պետական համալսարանի Գիտական աշխատություններ», 1940, հ. XIII, էջ 62:

<sup>105</sup> Sebouh Aslanian. Dispersion History and the Polycentric Nation: The Role of Simeon Yerevantsi's Girk' or kochi partavcar in the 18th Century National Revival. - «Բազմավեպ», 2002, էջ 5-81:

<sup>106</sup> «Ջամբը գիրք, որ կոչի Յիշատակարան արձանագուցիչ, հայելի և պարունակող բնալից որպիսութեանց Մրոյ Աթոռոյս և խրոյ շրջակայից վանօրէիցն», համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմեօն ցառահար եւ վշտակոծ կարողիկոս Երեւանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 57:

<sup>107</sup> Ռ. Ա. Արքահայրյան, Շահամիր Շահամիրյանի նորահայտ մամակագրությունը, - «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1969, թիվ 3, էջ 130:

<sup>108</sup> Армяно-руссские отношения..., IV, с. 366.

Սիմեոն Երևանցու դիրքորոշումը իր որոշակի ազդեցությունն է գործել հնդկահայ հասարակական մտքի ձևավորման վրա, ունեցել իր համակիրները նաև Հնդկահայ գաղթաբանության, ստիպել է ավելի իրատեսորեն գնահատել ժամանակի իրադրությունը և հետևողական աշխատանք ծավալել ազատագրական պայքարում որոնելու լուրջ դաշնակիցներ և միջոցներ՝ ազգային արժեքներն ու ժողովրդին իրական վտանգներից զերծ պահելու ուղղությամբ:

«Նոր տեսություն» Հայաստանի փրկության գործում տեսնում է Վրաստանի և, մասնավորապես, Հերակլի հետ դաշինքի և վերջինիս կամեցողության պարագան<sup>109</sup>: Վրաստանում բազմազգ բնակչության առկայության պայմաններում Հերակլի արտաքստ տղերանտներին քաղաքականություն վարելու հանգամանքը հետագա ուսումնասիրողներին ևս դրդել է մտածելու, թե Հերակլը, անգամ իր կամքից անկախ, փաստորեն ստեղծել էր «Կովկասյան ժողովուրդների փորձնական մի ֆեդերացիա»<sup>110</sup>:

Հնդկահայ գաղթաբանի ներկայացուցիչները, սակայն, ի մոտո ծանոթ չլինելով իրական փոխհարաբերություններին, ամենայն էին Հերակլ II-ի և Իբրահիմ խանի մտերմության ու դաշինքի փաստը, որ գոյություն ուներ մինչև 1783 թ. Գեորգիևյան պայմանագրի ստորագրումը<sup>111</sup> և հակադիր էր Իբրահիմի դեմ պայքարի ելած հայ մելիքների դիրքորոշմանը:

Հերակլն իր առջև իրականում ոչ միայն Հայաստանի ազատագրման մպատակ չէր դրել, այլև առաջարկում էր քննարկել անգամ Հայոց և Վրաց եկեղեցիները<sup>112</sup> տարանջատող «որոշ» դրույթներ վերանայելու հարցը, որը նշանակում էր եկեղեցիները միացնելու փորձ՝ «երկուստեք զիջումների միջոցով»<sup>113</sup>: Հովսեփ Էմինը դեմ չէր այդ առաջարկին<sup>114</sup>: Այդ էր նաև հիմնական դրապատճառներից մեկը, որը Սիմեոն Երևանցուն ստիպում էր վերապահությամբ մոտենալ Հերակլի վարած «սիրալիր» քաղաքականությանը<sup>115</sup> և նրան նտ

<sup>109</sup> «Թեև այն ժամանակ Բագրատունյաց տոհմից մեր թագավորությունը դադարեց, բայց ոչ իսպառ, ինչպես կարծում են ուրիշները: Չէ որ, ինչպես ոմանք հաստատում են, նույն տոհմից է և վրաց թագավորությունը, մասնավորապես իրենք էլ պնդում են այդ...թագավորի ճակատամարտեր տալով, նա (Հերակլ II-ը - Գ.Չ.) ավելի է ընդառնակել Վրաց սահմանները, քան իր նախնիների օրոք էր: Մշտապես ջանում է ամառի և անմարդաբնակ վայրերը լցնել բնակիչներով, և տեղ-տեղ լցրել է...իր ազգից մեր հայ ազգը չի տարբերում ու զանազանում...» (Նոր տեսություն, որ կոչվում է Հորդորակ, էջ 94-95):

<sup>110</sup> A History of the Georgian People. From the Beginning down to the Russian Conquest in the Nineteenth Century. By W. E. D. Allen, London, 1932, p. 205.

<sup>111</sup> Գեորգիևյան պայմանագրի կնքման հանգամանքները փաստում են այն դրույթի ճշմարտացիությունը, թե Ռուսաստանը մերձավորարևելյան ուղղությամբ արտաքին քաղաքականությունը նվաճողական բնույթ կրելով հանդերձ, իր օրյեսկով հետևանքներով ունեցել նաև դրական նշանակություն, քանզի արագացրել է Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրման գործընթացը: «Восточный вопрос во внешней политике России /конец XVIII- начало XX вв., М., "Наука", 1978, с. 6/.

<sup>112</sup> Life and Adventures of Emin Joseph Emin. p. 225-227. Հովհան տեր Օհանյանի արձանագրմամբ շարունակվում էին հայերին վրացադավան դարձնելու դեպքերը. "ახალქალაქელი მგზიოთ გოგიახ სიკვდილის ამბავი მოვიდა ქუთაისს. განძას მომკვდარიოთ, ეს ცვაგარვლმან გააქართველა სომხობითგან ცოლმედიოთ". Տես Մ. Լոմսիաձե. გვიანი შუასაუკუნეების საქართველოს ისტორიიდან. ახალციხის ქრონიკები, თბ., 1979, გვ. 140. Ավելին, հայոց դավանանքը գործնականում ենթարկվում էր զանազան სასამანაქականների (ქსბ, VII, გვ. 305-306):

<sup>113</sup> Գ. Մայսումյանի բնորոշմամբ «Հայաստանի հետ հարաբերություններում հայկական հողերը Բարբր-Կախեթի թագավորությանը անմիջականորեն միացնելու և հարևան [խն] հայ և վրաց] ժողովուրդներին եկեղեցական առումով ևս միավորելու Հերակլի քաղաքական ծրագիրը հանդիպում էր լուրջ արտաքին և միայնակ միջև գայություն ունեցող հարաբերությունների/ խոչընդոտներին, որոնց հաղթահարումը կապված էր մեծագույն ռիսկերի հետ: Չնայած դրան, Հերակլ II-ը մինչև իր կյանքի վերջը ձեռք չբաշխեց այդ ծրագրից և հերոսաբար պայքարում էր դրա իրականացման համար» /Զեյնաբ Դալաթյան. Երևան, 2010, էջ 269-270/.

<sup>114</sup> Life and Adventures of Emin Joseph Emin. p. 227-228.

<sup>115</sup> В. М. Мартыросян, П. А. Чобанян. Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии //II пол. XVIIIв. /, - "Кавказ и Византия", вып. 3, Ер., 1982, с. 235-236/։ Հայոց եկեղեցու նկատմամբ վրաց պետական քաղաքականության դրսևորման սկիզբ պետք է դիտել Անտոն կաթողիկոսի կողմից կազմված համրահայտ «Դիմումները Վրացի աշխատության հրապարակ գալը դիտել 1750-ական թթ./սեպտեմբեր. Կարթուզի Լուսինյանի օգնությամբ. I, տոմոլոն, 1951, թ. 378-379. П. М. Мурадян. Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке. Ереван, 1966, с. 197/։







ծայրաստիճան լարված<sup>132</sup>։ Բռնաճնշումները Հայաստանում ավելի էին ընդգծում Հայրենիքի ազատագրման կարևորության գիտակցումը և որպես ազատագրության միակ երաշխավոր այլևս ընկալվում էր միայն Ռուսական բանակի կողմից շուտափույթ օգնության ցուցաբերումը։ Հետագա տարիներին ևս շարունակվում էր դիվանագիտական ուղիներով հայերին հուսադրելու և նրանցից խնդրագրեր կորզելու գործընթացը։ Պարսկա-թուրքական սպառնալիքներին դիմակայելու և Ռուսաստանի օժանդակությամբ տարածքային նվաճումներ ունենալու ակնկալիքով Հերակ II-ը երկար քննարկումներից ու տատանումներից հետո<sup>133</sup> Ռուսաստանի հետ 1783 թ. հուլիսի 24-ին կնքեց Գեորգիայան հայտնի պայմանագիրը<sup>134</sup>։ Պայմանագրի կնքումով Հերակը մտադիր էր ամրապնդել իր ազդեցությունը Արևելյան Ասիայում Վսյուրկովկասում, և այդ գաղտնիք չէր անգամ Կ. Պոլսում։ Օսմանյան պետությունը Վրաստանի դեմ ուղղեց Հարավային Կովկասի ու Արարատականի, Դաղստանի ու Հյուսիսային Կովկասի գրեթե բոլոր իշխողներին։ Վրաստանին հարկի վճարումը դադարեցրին Երևանի ու Գանձակի խաները<sup>135</sup>։ Հերակին դադարեցին ենթարկվել Դազախ-Շամշադինի թաքարները<sup>136</sup>։ 1785 թ. ավարների Օմար խանի արշավանքի ժամանակ ավերվեցին Ախթալայի համերը, և շուտով պարզվեց, որ Հերակ II-ը Արևելյան Ասիայում ոչ միայն այլևս ի վիճակի չէր վարելու ակտիվ քաղաքականություն, այլև պետք է մտահոգվեր իր ունեցած դիրքերը գեթ պահպանելու մասին<sup>137</sup>։

Այդ իրավիճակը իր կնիքը թողեց հայ-վրացական հարաբերությունների վրա։ Հայագի գործիչները Հայոց պետականության վերականգնման հեռանկարն սկսեցին կապել ուղղակիորեն Ռուսաստանի հետ՝ ավելի քիչ տեղ թողնելով Վրաստանին<sup>138</sup>։ Այդ ակնհայտորեն դրսևորվեց նաև հայ-ռուսական դաշնագրերի նախագծերում և Ալի Մուրադ խանի հետ վարվող բանակցությունների ընթացքում։ Գեորգիայան պայմանագրից հետո տեղի տալով այն լուրերին, թե Ռուսաստանը պատրաստվում է բացի Վրաստան առաքվող սահմանափակ զորամասից Վսյուրկովկաս արշավել մեծաքանակ բանակով, իրագրել լինելով նաև Ալի Մուրադ խանի հետ ընթացող բանակցությունների փաստին, Հերակը 1784 թ. Ռուսաստան ուղարկած նամակում թվարկում էր իր ակնկալություններն ու պահանջները այդ ձեռնարկումից, բայց և ստիպված էր դիվանագիտորեն գրել Ռուսական արքունիք, թե չառ հեշտ է Հայոց պետականության վերականգնումը, եթե Ռուսաստանն այդ քաղաքական և եթե հայերը մեծ ցանկություն հայտնեն<sup>139</sup>։ Տվյալ դեպքում Հերակը Երկրորդն այդ քայլով փորձում էր իր ձեռքում պահել Ռուսաստանի օժանդակությամբ Հայ պետականության ստեղծման Հայոց հույսը, իր համար ճշգրտել Ռուսաց նպատակների լրջության աստիճանը և Հայոց մոտ պահպանել իր բարձր վարկանիշը, ազատարարի առաքելության իր համբավը։ Ընդգծել է, որ հայ-ռուսական դաշնագրի նախագծի մեջ Վրաստանի մասին որևէ ակնարկ չիս չկա, և Հայաստանի ազատագրության խնդիրը պայմանավորված է միայն Ռուսաստանի կողմից ցուցաբերելիք օժանդակության հետ։ Հ. Արդուքյանի կազմած տարբերակում Հայաստանի մայրաքաղաք պետք է ընտրվեր Անին կամ Վաղարշապատը։ Արդյո՞ք Երևանի անվան շրջանցումը այս դեպքում կապված էր Վրաստանին նրա հարկատու և կամ խանության կենտրոն լինելու հանգամանքի հետ։ Փաստ է միայն, որ Անիի փառքը, որպես Հայոց անկախ

պետականության և ազգային հպարտության խորհրդանիշ, շարունակում էր անմար մնալ Հայոց մեջ և օգտագործվել XVIII դարի երկրորդ կեսին քաղաքական հեռանկարի ու հավակնությունների նպատակներով<sup>140</sup>։ Հայ գործիչները, այնուամենայնիվ, ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Ռուսաստանում անտես չէին առնում Վրաստանի գործերը։ Այդ հստակորեն դրսևորված ենթ գտնում հատկապես Հովսեփ Արդուքյանի կողմից 1784 թվականին Գ. Ա. Պոտյոմկինին գրած նամակներում<sup>141</sup>։

Ի տարբերություն հայ գործիչների դիրքորոշման, Հերակը նոր համաձայնության եկավ Իբրահիմ խանի հետ։ Իբրահիմ խանի հետ Գանձակին համատեղ տիրելու համար նա 1785 թ. գարնանը արշավանք ձեռնարկեց Գանձակի խանության դեմ։ Այդ ժամանակ, սակայն, Դերբենդի Ֆաթ Ալի խանը, որ արշավանք էր նախապատրաստում Իբրահիմ խանի դեմ, Հերակին առաջարկեց համատեղ արշավել դեպի Շուշի և գրավել Վարաքաղի խանությունը, որից հետո Արցախի հայությունը պետք է անցներ Հերակի տիրապետության ներքո, իսկ մահմեդականները՝ խանի։ Հերակը ոչ միայն չհամաձայնեց այդ առաջարկին, այլև թողնելով Գանձակի պաշարումը, իր գործերը ուղարկեց Իբրահիմին պաշտպանելու համար։

1786-87 թթ. ստեղծված իրադրության մեջ Հովսեփ Արդուքյանի դիրքորոշման մեջ նկատվում է շրջադարձ։ Շահամիրյանին 1786 թ. սեպտեմբերի 3-ին գրած նամակում Հ. Արդուքյանը Ռուսական կողմից իր դժգոհությունը ներկայացնում է Հայոց դեսպան Ստեփան Դավթյանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի համար. «երկու ամ յուստդեն և պահեն, գկատարածն գործդ նորա չգիտեմք»։ Հ. Արդուքյանը դժգոհ է Դուկաս կաթողիկոսից, որովհետև «մեր սրբազան կաթողիկոսն առ տիրուհին ոչ գրեաց գիր /թպլտ քազմիցս ստիպեցին սոքա/, այլ գորագլուխն՝ ծածկեալ բանիւր»<sup>142</sup>։ Արդուքյանը դրան հակադրում է Շ. Շահամիրյանի մտահոգությունները և գրում, թե մեծ խնդիրների մասին «չիք որ խորհոլ և մտածոլ ազգի մերում...այլ միայն հայցեն թէ՛ “գմեզ փրկեցեք”։ Երբ փրկեն սրով, ըստ օրինի քազատուք, հարկատրին ծառայ առնել իրեանց»<sup>143</sup>։ Խնդրելով նամակ ու նվերներ առաքել կայսրուհուն, որպեսզի «առաւել գիտասցին, թէ գոյ ի մեճեց այնպիսի իշխան ի ազգէն Հայոց, որ կարէ համապատասխանել իրեանց յօժարութեան»։ Նույն միջոցին Հնդկաստանից համակրանքը Վրաստանի նկատմամբ պահպանելու համար Հերակը 1786թ. Շ. Շահամիրյանին շնորհում է Վրաց իշխանի տիտղոս։

1788 թ. հունվարի 29-ին նամակով Արցախի մեկիքները կրկին դիմում են Գ. Պոտյոմկինին՝ խնդրելով զինական օգնություն։ Մեկիքները իրենց դիմումը կրկնել են նաև նույն թվականի մարտին։ Ի պատասխան մեկիքների խնդրագրի, Գ. Ա. Պոտյոմկինը նրանց առաջարկել էր ընդամենը տեղափոխվել Ռուսաստան, որտեղ նրանց կարող էին շնորհվել կալվածքներ<sup>144</sup>։ Հովսեփ Արդուքյանին մնում էր հուսադրել Արցախի մեկիքներին՝ համախմբվելու Վրաստանի շուրջ, գոնե ժամանակավորապես այլևս չհուսալ Ռուսական օժանդակություն ու սպասել սկսված ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության հմարավոր շրջադարձին։ 1788 թ. մայիսի 2-ի նամակում նա Մեջլում և Աբով մեկիքներին գրում է. «Ձեր գալն աստ ոչ է բարուք...»<sup>145</sup>։ Ամիսներ անց, 1788 թ. հուլիսի 30-ին, Հովսեփ Արդուքյանը կրկին պատասխանելով մեկիքների նամակին, գրում է. «... չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ իմն դուռն գտանել և բախել, և կամ նորին արքայական մեծութեանն աղաչել՝ օգնել ձեզ, ըստ ժամանակին արարեք և գժամանակն մի անցուցանեք...»<sup>146</sup>։

Նշելի է, որ Վրաստանից ռուսական զորքերի ետ կանգնվելուց հետո Հերակ II-ը ևս ստիպված էր Վրաստանը ավերումներից զերծ պահելու նպատակով որդեգրել նոր քաղաքականություն։ Հերակը ստիպված նոր դեսպանություն ուղարկեց Կ. Պոլիս և «բարեկամության»

<sup>132</sup> Н. Дубровин. История войны и владычества русских на Кавказе, т. II, с.26. А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 28-72. П. А. Сейранян. Карабах и Россия. Страницы истории, М., 1997, с. 69-71.

<sup>133</sup> "გეორგიევსკის ტრაქტატი". გამოკვლევა, დოკუმენტები, ფოტოპირები ე. მაჭუაძისა, თბ., 1983, გვ. 10-24. Ըստ Հ. Արդուքյանի, պայմանագրի կնքմանը Հերակ II-ին համոզելու մեջ մեծ է եղել իր դերակատարումը, սակայն պայմանագրի կնքումից հետո Ռուսաստանի կողմից իր ծառայությունները չեն գնահատվել. «գոր ինչ ես եմ արարեալ յայս կողմումս ամս երկուս, տասն եանարալ ունիցել թագուին, չէին կարող առնել» /Армяно-русские отношения..., IV, с. 324/.

<sup>134</sup> Ա. Ն. Սուրգուլան, Գեորգիական պայմանագիրը և նրա առաջադիմական նշանակությունը, ՊԲՀ, 1983, թիվ 2-3, էջ 13-20։

<sup>135</sup> Նոստրոմո Յոաքիմ, 23-24, տ., 1970, գვ. 50-51.

<sup>136</sup> Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը XVIII դարի վերջում. Երևան, 1958, էջ 114-136։

<sup>137</sup> Գ. Յոսիսյան. Խորհրդային և խորհրդային խորհրդային խորհրդային, գვ. 282.

<sup>138</sup> Գ. Յոսիսյան. Խորհրդային և խորհրդային խորհրդային խորհրդային, գვ. 282.

<sup>139</sup> "Если высочайший двор сообразовоит, дабы армяне имели царя, и оные же будут требовать, то легко можно сделать..." /см. О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения..., с. 174/.

<sup>140</sup> P. Tchobanian. Ani et son mythe (XIII-XIX siècles).- Ani: capitale de l'Arménie en l'an mil: Paris, 2001, p. 277-281.

<sup>141</sup> Армяно-русские отношения /сб. док./, IV, с. 321.

<sup>142</sup> Армяно-русские отношения /сб. док./, IV, с. 339.

<sup>143</sup> Армяно-русские отношения /сб. док./, IV, с. 339.

<sup>144</sup> П. Бутков, ԼՂՂ. աշխ., հ. II, էջ 195։

<sup>145</sup> ՄՄ, ձև. 2699, p. 158թ։

<sup>146</sup> ՄՄ, ձև. 2699, p. 172ա։



պայմանագիր կնքեց Օսմանյան արքունիքի հետ<sup>147</sup>։ Այդ շրջադարձը, բնականաբար, ողջունեց նաև Ախալցխայի փաշան։ Նման պայմաններում խոսում է այն փաստը, որ Գ. Ա. Պոտյոմկինը, որ ռուսական զուսմարտակները դուրս էր հանել Վրաստանից, Հերակլին ներկայացնում է մի արտառոց պահանջ, այն է՝ որպեսզի վերջինս, համաձայնելով Սոդոմոն I-ի հետ, հարձակվի թուրքական ուժերի վրա<sup>148</sup>։ Բնականաբար, Հերակլը չէր կարող իր համար նման կործանարար քայլի դիմել։

1787-1791թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը չէր շտապում Վրաստան վերադարձնել Գեորգիայի պայմանագրով նախատեսված գորաքանակը, թեև իրադրության փոփոխության և իրանական կողմից սպառվող սպառնալիքների պայմաններում Հերակլը անընդմեջ նամակներ ու խնդրագրեր էր առաքում Ռուսաստան՝ խնդրելով Վրաստան առաքել ռուսական որևէ զորամաս։ Նման իրադրության մեջ Արցախի հայ մելիքների համար ևս հասկանալի էր, որ Հայոց թագավորության վերականգնման մասին իրենց ցանկությունները չէին կարող արժանանալ Հերակլի հավանությանը, ուստի Հերակլի աջակցությունը ստանալու նպատակով նրանք հակվում են առաջադրելու նոր տարբերակ։

Ռուսական արքունիք ուղղված նամակներով Արցախի հայ մելիքները 1793թ. գրում են իրենց համաձայնությունը՝ Իբրահիմի լծից ազատագրվելուց հետո ընդունելու Ռուսաստանի դաշնակից համարվող Հերակլ II-ի թռան՝ Դավիթ արքայազնի իշխանությունը<sup>149</sup>, հակառակ դեպքում խնդրում են Գեորգեոսի և Կասպից ծովի ափերին տեղ հատկացնելու պարագայում փոխադրվել այնտեղ՝ իրենց հպատակ բնակչությանը, եթե Ռուսաստանն այլևս մտադիր չէ զենք փոքրիկ զորքային առաքել Այսրկովկաս։ Ռուսական կողմից պատասխանի հապաղման<sup>150</sup> և Այսրկովկասում իրադարձությունների սրնթաց զարգացման պայմաններում հայ մելիքները ստիպված էին կատարել սեփական դիրքորոշման նոր հստակեցումներ։ Աղա Մահմադ խանի արշավանքը Այսրկովկասում ստեղծում էր ուժերի նոր հարաբերակցություն։ Մելիք Մեջլումը հայ իշխանությունների ոխերիմ հակառակորդ Իբրահիմ խանի դեմ փորձում է օգտագործել Իրանի նոր բռնակալի հետ նրա հակամարտության հանգամանքը՝ այլևս չհուսալով ռուս-վրացական օժանդակության ձգձգվող ու անորոշ սպասումին և իր զորաբանակով միանում է Արցախ ներխուժած Իրանական բանակին՝ հուսալով Իբրահիմ խանի տապալումից հետո ստանալ Արցախի իշխանությունը։ Աղա Մահմադ խանի արշավանքը, սակայն, որքան սրնթաց, նույնքան և կարճատև լինելով, չի ապահովում Այսրկովկասում նրա կայուն իշխանության հաստատումը, անառիկ է մնում Արցախի միջնաբերդը հանդիսացող Շուշին։ Իբրահիմ խանը ևս Աղա Մահմադ խանի բռնամիմ լինելու խաղաղությունը հայտնվում է նրա դեմ բռնամարտով տրամադրված Ռուսաստանի դաշնակիցների բանակում։ Աղա Մահմադ խանի Իրան մեկնելուց հետո Մելիք Մեջլումը, մնալով Հայաստանում, Գանձակի խանի հետ միասին փորձում է դիմակայել Վրացական բանակի պատժիչ արշավանքին, որտեղ և կնքում է իր մահկանացուն։

Մոտալուտ փրկության սպասումներն ու ոգևորությունը ընդհատվեց Ռուսաստանում գահ բարձրացած Պավել I-ի կողմից ռուսական բանակի արշավանքը դադարեցնելու մասին հրամանով։ Ռուսաստան վերադարձող Հովսեփ Արղությանի հետ 1797թ. դեսպանագնացությամբ ճանապարհվում են նաև Ջիմշիդ և Փրիդոն մելիքները։ Այդ դեսպանագնացությունը պետք է պատասխան տար Արցախի ապագա կարգավիճակի հարցին։ 1797-1799 թթ. մելիքները չեն պնդում միայն ռուսական զորքի առաքման պահանջը և ռուսական արքունիք են դիմում մի խնդրագրով, որի մեջ ներկայացվում են նաև այլ առաջարկություններ.

1. Ձինական օժանդակություն Դարաբաղում Հայոց պետականության վերականգնման և մահմեդական տիրապետությունից ազատագրվելու համար։

2. Եթե այդ առժամանակ անհնար է, ապա խնդրել Վրաց թագավորին Վրաստանում ժամանակավոր ապաստան տալու մեղիքներին։
3. Եթե այդ ևս անհնար է, ապա թույլատրել փոխադրվելու Ռուսաստան՝ իրենց հպատակ ողջ բնակչությամբ հանդերձ<sup>151</sup>։

Վրաց արքունիքի կողմից 1798 թ. դեկտեմբերի 16-ին Պավել I կայսրին ներկայացրած 11 կետանոց խնդրագրի երկրորդ կետը վերաբերում էր հայ մելիքներին ենթակա ժողովրդին։ Խնդրվում էր թույլատրել նրանց բնակվելու Վրաստանում, սակայն Վրաց արքայի ենթականեր դառնալու պայմանով։ 1799 թ. փետրվարի 11-ին ի պատասխան այդ խնդրանքի, Ռուսական արքունիքը համաձայնում է, որ հայերը ենթարկվեն Վրաց արքային, սակայն և պահանջվում է նրանց նեղություն չպատճառել ու նաև որպեսզի հայ բնակչությունը իրավունք ունենա վերաբնակվել կամ առևտրական գործունեություն ծավալել նաև Ռուսաստանում<sup>152</sup>։

Ուշագրավ է, որ Հովսեփ Արղությանը 1798 թ. մարտի 25-ին Պետերբուրգից Գեորգի թագավորին գրած նամակում շնորհավորելով նրա գահակալությունը, միաժամանակ խորհուրդ է տալիս «որպես իսկական թագաւորի Հայոց, փոքրով զորդին ուղևորել արժանատր պատասխանաւ ի Դուռն կայսերական»<sup>153</sup>։ 1799 թվականին Պավել Առաջինը ավարտված է համարում մախապատրաստական փուլը և հրամայում զորք ուղարկել Վրաստան՝ այնտեղ Ռուսաստանի տիրապետությունը հաստատելու համար։ Մելիքների կարգավիճակը որոշակիացվում է Վրաստանում նրանց ժամանակավոր կացություն տրամադրելու ձևով, սակայն, ի տարբերություն մախորդ դեպքերի, երբ հայ մելիքները Վրաստանում ապաստանելու պարագայում հայտնվում էին փախստականի կարգավիճակով, այս դեպքում Պավել Առաջինի միջնորդությամբ Գեորգի XII-ը վրաց պետության սահմաններում նրանց է տրամադրում իրենց իսկ պահանջած Դազախ գավառի փոխարեն Լոռի գավառը, որը մինչ այդ արդեն շնորհվել էր Շ. Շահամիրյանին։ Մելիքները պետք է տնօրինեին այն մինչ Շահամիրյանների Լոռի ժամանելը։

1799թ. գեմ. Լազարևի հրամանատարությամբ ռուսական զորքի մուտքը Վրաստան արմատապես փոխում է իրավիճակը ողջ Այսրկովկասում։ Վրաստանը վերածվում է հենակետի, որտեղից և պետք է ձեռնարկվեր նաև բուն Հայաստանի ազատագրման գործընթացը։

ՂԼՈՒԽ ԵՐՐՈՐԻ - ՅԱՅԵՐԸ ՈՒՄԱՍՍԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՏՈՒՄ

3.1 Ռուսահայ գաղթության բնակչության քանակական կազմը.- Հայաստանի փոխհարաբերությունների իրական պատկերի վերհանման համար կարևոր է հստակ պատկերացում ունենալ ինչպես ռուսահայ գաղթության թագաթմակ թվաքանակի, այնպես էլ նրա աճի ու փոփոխությունների միտումների մասին։

Հայ բնակչության թիվը 18-րդ դարի վերջին գերազանցել էր 40 հազարի սահմանագիծը, որից ավելի քան 10 հազարը՝ Հյուսիսային Կովկասում։ Համեմատության համար հարկ է ընդգծել, որ նույն ժամանակամիջոցին Հյուսիսային Կովկասում ենթադրվում է մոտ 2500ից մինչև 3000 վրացիների առկայություն<sup>154</sup>, որոնց մի զգալի մասը ևս վրաստանցի հայեր էին, հաճախ՝ հայկական անձնանուններով, որոնք ցուցակներում ընդգրկված են որպես «վրացիներ» (վրաստանցիներ)։

Ռուսական պետության վարած քաղաքականության հետևանքով Ռուսաստանի տարածքում ձևավորվեցին բազմամարդ ու հայազգի հոծ զանգված ունեցող բնակավայրեր։ Ինչպես Լազարյանները, այնպես էլ Հովսեփ Արղությանը գերազանց գիտակցում էին Ռուսական պետության համար հայ բնակչության դերն ու նշանակությունը, հենվում էին այդ զանգվածի վրա և այդ ամրապնդում էր նրանց դիրքերը։

Եթե 1780-ական թվականների սկզբներին Ռուսաստանը հայ գործիչներին ներկայանում էր որպես ապագա դաշնակից պետություն, որի հետ Հայաստանը կարող էր ունենալ պայմանագրային հարաբերություններ, ապա 1790-ական թվականների վերջին Ռուսաստանը

<sup>147</sup> О. П. Маркова. Ելվ. աշխ., էջ 266.

<sup>148</sup> П. Бутков, Ելվ. աշխ., հ. II, էջ 197:

<sup>149</sup> Армяно-русские отношения /сб. док./, IV, с. 397:

<sup>150</sup> Պ. Զուրկովը հետազայում գրում էր, թե Հերակլը իբր, հուսալով իր որդիների զինական օժանդակությանը, օգնություն չէր պահանջել Կովկասյան գծում տեղաբաշխված ռուսական բանակից։ «Шесть писем о Грузии и Кавказе, писанные в 1833 году Платоном Зубовым», Москва, 1834, с. 61.

<sup>151</sup> Армяно-русские отношения..., IV, с. 473-474.

<sup>152</sup> Խնդրագրի 5-րդ կետով առաջարկվում էր թույլատրել Ուրմիայի հայերին և ասորիներին բնակություն հաստատել Վրաստանում /Ե. Շիշմազյան. Զարեգյան Զեֆեգյանի հաշիվները և նրանց հետևողները, Երևան, 1982, թ. 154/:

<sup>153</sup> ՄԼ, ձեռ. 2951, ք. 163թ:

<sup>154</sup> Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом..., с. 55.



տանը սկսում է ընկալվել որպես երկրորդ հայրենիք և հայտարարվում, թե հայերը «с истинным усердием притекают и готовы притекать в новое свое отечество»<sup>155</sup>։ Հայ բնակչության Ռուսաստան փոխադրումը խրախուսվում էր հայ գործիչների կողմից։

Պայքարը Հայաստանի համար, սակայն, ոչ միայն չէր դադարել, այլև թևակոխել էր նոր փուլ և ընթանում էր ավելի նպատակալաց ձևով, թեև արտաքուստ՝ խուլ և անցկատ։

Հայ ազատագրական շարժման գործիչները 18-րդ դարի երկրորդ կեսին մտահոգացան մի համարձակ ծրագիր, այն է՝ հայ ժողովրդի հայրենադարձության զաղափարը<sup>156</sup> և փորձեցին իրականացնել այն։

Առաջինը մնան ծրագիր մշակվեց Հնդկաստանում։ Այդ փորձը պայմանավորված էր այն գիտակցությամբ, որ արձանագրել է Շ. Շահամիրյանը Ղուկաս կաթողիկոսին գրած մամակում. «Եթե կարելի խոստանալ ժամանակն աշխարհին մերոյ հովանաւորել մեզ, որ որ ազատութեամբ բարիքս լինի հանել մեզ ի յայս պանդխտութենէ, զոր ինչ որ կարող լինիցիմք ի պտղոյ աշխատանաց մերոց հանել աստի և մուծանել առ սեպհական աշխարհն մեր՝ մա միայն մնալոց է վասն մնացորդաց և սեպհական ազգին մերոյ, քանզի ի յայս տարրաշխարհի՝ թէ շինութիւն տանց, թէ՝ արուեստշահութեանց, կատարածն մնալոց է ի Հնդկիս՝ վասն սեպհական ազգին հեթանոսաց»<sup>157</sup>։ Նոր Նախիջևանի հիմնումից հետո Ղզլարը դիտվում էր Հայոց հավաքագրման հաջորդ հանգրվանը<sup>158</sup>։ Մինչև Հայաստանի ազատագրումը «Նշավակը» Հնդկահայերին առաջարկում էր «տեղ բնակութեան ի յարեւ կոյս Հայաստանեաց ի գաւառն անուանեալ Ղզլար՝ ի պահպանութիւնն պերճապայծառ Կայսերութեանն Ռուստաց՝ վաղնջոց բարերարի յազգին Հայոց»<sup>159</sup>։ Լախթան այնտեղ բնակություն հաստատելը, սակայն, ամհրաժեշտ է դիտվում իրավական կարգավորում տալ հայ-ռուսական փոխհարաբերություններին. «այլ յառաջ քան զշինել տուն և բնակիլ ի մնայ, հաստատեցեք դաշինս ընդ Կայսերութիւնն Ռուստաց»<sup>160</sup>։

Այդ հույսը ամրապնդվում է 1783թ. Գեորգիկյան պայմանագրի կնքումից հետո։ 1786թ. ստանալով Վրաց իշխանական տիտղոս, Շ. Շահամիրյանը փորձում է հայահավաքի համար արդեն դիմել նաև Հերակլին։ Նա փորձ է կատարում համաձայնեցնել Հերակլ թագավորի հետ և նրա թույլտվությամբ ու կոչով, նրա անունից դիմել տարասփյուռ հայ ժողովրդին՝ հավաքվելու Վրաստանին ենթակա հայկական տարածքներում։ Հերակլին ուղղած 1787թ. Շահամիրյանի մամակից պարզվում է, որ նա, տեսնելով Հերակլի «բարեպաշտ ձգտումն» սովորաբար փոխադրվող բնակչությունը, խորհուրդ է տալիս աշխարհասփյուռ հայությանն ուղղել մի «Նամակ շնորհաց և պահպանութեան»։ Հերակլ Երկրորդը որոշ խմբագրումից հետո ուղարկված շարադրանքը, ստորագրել ու հաստատել է այն (1790թ. դեկտեմբերի 4) և ուղարկել Մադրաս։ Ուղերձը տպագրվել է 1792թ. Հարություն Շամվոնյանի տպարանում, 1000 օրինակ տպաքանակով։ Պահպանվել է այդ ուղերձի հայերեն տպագիր օրինակից վրացերեն թարգմանության 1819 թ. արտագրությունը։

3.2 Հայոց իրավական ու տնտեսական կարգավիճակը Ռուսաստանում  
Հայ բնակչության կարգավիճակը Ռուսաստանում անընդհատ սրբագրությունների ենթարկվելով, տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մակարդակ<sup>161</sup>, սակայն և ձեռք է բերել որոշակի ուղղվածություն ու որակ։ Հետևելով կարգավիճակի փոփոխություններին՝ կարող ենք հասկանալ նաև արքունիքի վարած քաղաքականության տրամաբանությունը հայ բնակչության նկատմամբ ու ըստ այդմ մակարեքել նաև Այսրկովկասի նկատմամբ ունե-

ցած նրա միտումները։ Միաժամանակ հայ վերաբնակիչները ևս հետևողական գործունեություն են ծավալել բարելավելու իրենց իրավատնտեսական կարգավիճակը Ռուսաստանում՝ առ այդ օգտագործելով Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական շահագրգռությունները։

Ռուսական պետության վարած հովանավորչական քաղաքականությունը տարածվում էր հայ բնակչության առավել լայն խավերի վրա, որը խթանում էր դեպի Ռուսաստան բնակչության հոսքին։ Այդ առաջին հերթին վերաբերում էր Ռուսաստանի հարավային դարպասը հանդիսացող Աստրախանին, որը Արևելքից ժամանող հայ, բուխարացի, գիլանցի և հնդիկ վաճառականների կարևոր հավաքատեղին էր։ Հայոց իրավական կարգավիճակի խնդիրը ունեցել է զարգացման իր փուլերը և որպես այդպիսին, առաջին փուլ ընդունված է համարել 1747-1765 թթ. ժամանակամիջոցը։

1760-ական թվականներին Աստրախանի ռուս վաճառականությունը պահանջներ է ներկայացնում իշխանություններին՝ ռուս վաճառականության հետ համահավասար օտարերկրացիներին հարկման ենթարկելու մասին։ Թեև այդ պահանջը, որը հակասում էր կենտրոնական իշխանությունների վարած հովանավորչական քաղաքականությանը, էական շրջադարձ չարձանագրեց հայոց կարգավիճակի հարցում, սակայն եղան որոշակի կառուցվածքային փոփոխություններ։ Հայկական ռառտիաուի և թաթարական գրասենյակի փոխարեն ստեղծվեց Աստրախանահայոց ընդհանուր դատարան՝ երկու բաժանմունքներով<sup>162</sup>։ Այսպիսով, Աստրախանահայոց իրավական ու հարկային արտոնյալ կարգավիճակը գոյություն ունեցավ մինչև 1785 թ.<sup>163</sup>։

Աստրախանահայոց ինքնավարության խնդրի հաջորդ փուլը կապված էր 1785թ. ընդունված քաղաքային բարեփոխումների իրականացման հետ։ Ըստ նոր կանոնադրության, հայազգի բնակչությունը ևս այսուհետև պարտավոր էր գրանցվելու քաղաքային դասերի մեջ (վաճառական, քաղբենի և այլն)։ 1797 թ. փետրվարի 28-ին ստորագրված Պավել I-ի հրովարտակով հրահանգվում էր Աստրախանահայերին վերադարձնել իրենց նախկին արտոնություններն ու կարգավիճակը<sup>164</sup>։ Վերականգնվեց «Ասիական ընդհանուր դատարանը», իսկ Մեմաուի 1800 թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ ստեղծվեց «Հայկական դատարան»-ը<sup>165</sup>։

Հայ բնակչությունը ձգտում էր Ռուսաստանում ստանալ միանման արտոնություններ։ Հովսեփ Արղությանը 1799 թ. օգոստոսի 11-ին աստրախանահայերին Պետերբուրգից ուղղած նամակում շտապում է հաղորդել բառացիորեն «այսօր» ստացված «զաաստատութիւնն պրվելէկի», որը ինքը տվել է «թարգմանել հայերեն, որ ընդ ռուստերենի ի միասին գրեցեալ լինիցի ի պրվելէկին, ենթ որոյ և նորին մեծութիւնն ձեռք դնելոց է և հաստատելոց»<sup>166</sup>։ 1799 թվականի հոկտեմբերի 28-ին ի վերջո հրապարակվեցին Պավել Առաջինի ստորագրած հրովարտակները, որոնք ընդգրկում էին Ռուսաստանի գրեթե բոլոր հայկական խոշոր գաղթավայրերը։ Այդ հրովարտակների հրապարակումը համընկավ դեպի Այսրկովկաս ռուսական բանակի առաքմանը։

Պավել Առաջինի չորս հրովարտակները կազմված են 1799 թ. ապրիլի 15-ին Մեմաուին տրված հրահանգի համաձայն և խմբավորված են ըստ Հովսեփ Արղությանի 1798 թ. սեպտեմբերի 13-ին ներկայացրած "Հայկական բոլոր համայնքների կարիքների մասին" զեկուցագիր-խնդրագրի։ Համեմատությունից պարզվում է, որ հայ համայնքները Ռուսաստանում իրենց ներքին խնդիրներով բաժանվում էին հինգ խմբի, և նրանցից յուրաքանչյուրը բացի տեղական առանձնահատկություններով թելադրված արտոնություններից, ստացել էր նաև միասնական հոգևոր, դատական ու տնտեսական արտոնությունները, որոնք ընդհանուր էին Ռուսաստանում բնակվող բոլոր հայերի համար։

<sup>155</sup> ЦГИА в С.-Петербурге, ф. 1374, он. 2, д. 1815, л.18.

<sup>156</sup> Հայ ժողովրդի պատմություն, IV, էջ 214։

<sup>157</sup> Ռ. Ա. Աբրահամյան, Շ. Շահամիրյանի նորահայտ մամակագրությունը, - «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թիվ 3, էջ 132-133։

<sup>158</sup> Տետրակ, որ կոչի Նշաւակ վասն կառավարելոյ ինչս որբոց և առանց կտակ ննջեցելոց, Մատրաս, Ի տպարանի Յակօբայ Շահմրեանց կոչեցելոյ, 1783, էջ 55-59։

<sup>159</sup> Տետրակ, որ կոչի Նշաւակ վասն կառավարելոյ ինչս որբոց և առանց կտակ ննջեցելոց, էջ 56։

<sup>160</sup> Նույն տեղում։

<sup>161</sup> А. Юхт. Правовое положение астраханских армян в первой половине XVIII века.- ՀՀԳԱԱ «Տեղեկագիր /հաւ. գիտ./», 1960, թիվ 12։ В. А. Хачатурян. Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века.- ՀՀԳԱԱ «Տեղեկագիր /հաւ. գիտ./», 1963, թիվ 12։ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967։

<sup>162</sup> В. А. Хачатурян. Судебно-административные органы Астраханских армян XVIII-XIXвв. и их архивные фонды,- Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, թիվ 3 (30), էջ 137։

<sup>163</sup> Դատաստանագիրք Աստրախանի հայոց, էջ 1, ծան. 40։ В. А. Хачатурян. Судебно-административные органы..., с.137-138.

<sup>164</sup> Армяно-русские отношения..., IV, с. 447-448.

<sup>165</sup> Այն գոյություն ունեցավ մինչև 1840 թ. տես Նույն տեղում, էջ 139։

<sup>166</sup> ՄԱ, ձեռ. 2951, ք. 284բ։



Հայ հասարակությունը բնավ էլ միասեռ և միատարր համայնք չէ եղել, համայնքի մեջ եղել է խոր ունեցվածքային շերտավորում, ունեցել է իր ներքին պայքարը տարբեր դասերի միջև:

3.3 ՀԱՅՈՅ ԴԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԵՏՐԱՍՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.- Հայ-ռուսական տնտեսական կապերի պատմությունը ներկայացնում է մեկ կողմից բուն Ռուսաստանում հայկական գաղթօջախների տնտեսական ու առևտրական գործունեությանը, որը հանգամանորեն ուսումնասիրված է գաղթօջախների պատմությանը նվիրված մենագրական աշխատություններում<sup>167</sup>, և մյուս կողմից՝ Ռուսաստանի և Արևելքի տարբեր երկրների միջև արտաքին առևտրական հարաբերություններում հայ վաճառականության ակտիվ մասնակցությանը, որը համեմատաբար քիչ է հայտնի և մնում է պակաս ուսումնասիրված<sup>168</sup>:

XVIII դարի երկրորդ կեսից փոխվում է Ռուսաստանի վերաբերմունքը Միջին Ասիայի նկատմամբ: Ուղբեկական խամությունները հետզհետե սկսում են դիտվել ոչ որպես Հնդկաստան տանող ճանապարհին գտնվող լոկ տարանցիկ երկրներ, այլ առևտրա-տնտեսական ու քաղաքական համագործակցության ինքնուրույն կազմավորումներ: Միջինում առևտրական գործառնությունները իրականացվում էին հիմնականում բնիկների միջոցով և հազվադեպ միայն՝ ռուս վաճառականների: Ավելին, դեպի Չինաստան, Տիբեթ և Աֆղանստան ճանապարհվում էին հիմնականում միջինասիական և հայ վաճառականները՝ ինչպես ասվեց, ռուսների մուտքը նշված երկրներ արգելված լինելու պատճառով: Եթե XVIII դարի առաջին կեսին ռուս-հնդկական առևտուրը կատարվում էր հիմնականում Աստրախանից Կասպից ծովի վրայով և Այսրկովկասի ցամաքային ծովափով ու հստակորեն չէր տարանջատվում ռուս-իրանական առևտրաշրջանառությունից, ապա XVIII դարի երկրորդ կեսին ակնհայտորեն աճեց Միջին Ասիայի և Հնդկաստան տանող նրա քարավանային ուղիների դերը: 1735 թ. հիմնադրված Օրենբուրգ էր փոխադրվում Աստրախանի ռուսական պետական հիմնարկների մեծ մասը, որոնք կոչված էին կառավարելու նաև Միջին Ասիայի հետ Ռուսաստանի տնտեսական ու դիվանագիտական հարաբերությունները: Հետզհետե Արևելք էր տեղափոխվում նաև հայ վաճառականների մի մասը: Ռուսական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում ավելի սերտ հարաբերություններ հաստատելու Միջին Ասիայի և Աֆղանստանի ու Հնդկաստանի հետ: Նման համաձայնագրություններով այնտեղ էին ուղարկվում ինչպես այլազգի /Մեհտի Ռաֆաիլով/, այնպես էլ հայ վաճառականներ ու դիվանագետներ Բոգդան Ալանովը, Սիմեոն Մաղաթովը, Իվան Մուրաշովը և այլք: XVIII դ. վերջերին կազմված Ռուսաստանի և Արևելքի երկրների միջև առևտրական հարաբերությունների զարգացման տարբեր ծրագրերում հաճախ են հիշատակվում հայ խոշոր վաճառականների անուններ, որոնց հետ էին կապվում այս կամ այն ծրագրի իրականացման հույսերը:

Հայ վաճառականությունը մի զգալի մասով թեև շրջվել էր դեպի Օրենբուրգ և Միջին Ասիա, սակայն Աստրախանում մնացած հայազգի վաճառականությունը շարունակում էր իր մասնակցությունը ունենալ ռուս-իրանական առևտրին, իսկ Կասպից ծովի վրա ունեցած նրանց առևտրական նավերը երթևեկում էին Աստրախանից մինչև Գիլան, Մազանդարան ու Բաքու՝ փոխադրելով ինչպես նավատերերին պատկանող ապրանքներ, այնպես էլ վճարովի ծառայություններ մատուցելով այլևայլ վաճառականների:

<sup>167</sup> Н. Г. Куканова. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII- первой половине XIX века. Саранск, 1977. А. И. Юхт. Торговля России со странами Востока во второй половине XVIII в. и армянское купечество, - "Պատմա-բանասիրական հանդես", 1981, թիվ 2, էջ 85-106: Վ. Միքայելյան. Գրիմի հայկական գաղթօջախի պատմություն. Երևան, 1964: Վ. Բաբխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղթի պատմություն. Երևան, 1967: Ананян Ж. А. Армянская колония Григориполь. Ереван, 1969. Жорес Ананян, Вардан Хачатурян. Армянские общины России. Ереван, 1993. Ж. А. Ананян. "Записки" Гмелина как источник по изучению русско-армянских торгово-экономических отношений во второй половине XVIII в., - "Из истории вековой дружбы", Ереван, 1983, с.95-108. Վ. Ա. Դիլոյան, Էջեր Ռուսաստանի հայ վաճառականական կապիտալի պատմությունից, - Պատմա-բանասիրական հանդես, 1962, թիվ 4, էջ 69-82: Վ. Ա. Դիլոյան. Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 17-129:

<sup>168</sup> Н. Г. Куканова. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII- первой половине XIX века. Саранск, 1977. А. И. Юхт. Торговля России со странами Востока во второй половине XVIII в. и армянское купечество, - "Պատմա-բանասիրական հանդես", 1981, թիվ 2, էջ 85-106:

3.4 ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.- XVIII դարի երկրորդ կեսի հայոց ազատագրական ձգտումների համար միավորման առաջը կարող էր ծառայել միայն եկեղեցին, որի հնարավորությունները լիակատար օգտագործելու գործին ձեռնամուխ եղավ 1763 թ. գահ բարձրացած Սիմեոն Երևանցի Հայոց կաթողիկոսը: Սիմեոն Երևանցին 1766թ. Պետերբուրգ է ուղարկում մի դեսպանություն՝ Դավիթ վարդապետի գլխավորությամբ<sup>169</sup>: Լուծելիք հարցերից գլխավորն էր Ռուսաստանից թեմը Գանձասարի կաթողիկոսության իրավասությունից Էջմիածնի իրավասությանը փոխանցելը և Ռուսաստանի հայ համայնքի կողմից միայն Էջմիածնի գերագահության ընդունման ապահովումը: Պատվիրակությունը պատվով կատարեց իր առաքելությունը<sup>170</sup> և 1768թ. վերադարձավ Էջմիածին՝ իր հետ բերելով Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրամանագիրը այն մասին, որ Հայոց եկեղեցու ոչ մի հոգևորականի չի թույլատրվի այլևս մուտք գործել Ռուսաստանի տարածք առանց Էջմիածնի երաշխավորության<sup>171</sup>:

1773թ. Սիմեոն Երևանցին Ռուսաստանից թեմի առաջնորդ նշանակեց երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղությանին: 1774 թ. Իրանի Ռեշտ նավահանգստից Հ. Արղությանը ժամանեց Աստրախան: Նույն թվականին ավարտվում էր ռուս-թուրքական պատերազմը՝ Ջուլուկ Կայանաբջինով կնքված պայմանագրով /1774 թ. հուլիսի 10/, որի հաստատումն ու հրապարակումը տեղի ունեցավ մոտ մեկ տարի անց: Հովսեփ Արղությանը, ձեռք ձգելով հաշտության պայմանագրի տեքստը, այն թարգմանում է հայերենի և առաքում Էջմիածին: Պայմանագրի 7-րդ կետով Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին իրավունք էր վերապահվում հանդես գալու Օսմանյան տերության մեջ քրիստոնյաների շահերի պաշտպանությամբ<sup>172</sup>: Սիմեոն Երևանցու առաջարկով ռուսական արքունիքը կարգադրում է Կ. Պոլսի ռուսական դեսպանին հետամուտ լինել պաշտպանելու նաև հայ քրիստոնյաների շահերը:

1780-1790-ական թվականներին անընդմեջ սովաբացող ռուսահայ գաղթօջախում ձևավորվող դավանական փոխհարաբերությունները ևս ձեռք են բերում քաղաքական ուղղվածություն: Արդեն իսկ 1780 թ. փետրվարի 18-ին մեծ հանդիսավորությամբ կատարվում է Պետերբուրգի սուրբ Կատարինե եկեղեցու օծումը: Օծման հանդիսություններին, ըստ Հովսեփ Արղությանի Հիշատակարանի, ներկա են եղել «ամենայն նախարարքն և յոյժ հաւանեցաւ ամենայն արարողութեանցն մերս սուրբ եկեղեցոյ և բազում գայթակորթութիւնք բարձան»<sup>173</sup>:

Սիմեոն Երևանցուն հաջորդած Դավա Կարնեցու գահակալության տարիներին կազմված Հայ-ռուսական դաշնագրի նախագծի առաջին իսկ կետը պահանջում էր դավանական խնդիրներում երկուստեք հանդուրժողական վերաբերմունք: Հայոց եկեղեցու համար դավանական հանդուրժողականության մթնոլորտ ձևավորելու գործում մեծ կարևորություն ուներ Պավել Առաջին կայսեր կրոնի ուսուցիչ Պլատոն միտրոպոլիտի դիրքորոշումը: Ըստ Հ. Արղությանի վկայության, Պլատոնը բազմիցս սանձել է ռուս և հույն հոգևորականության հարձակումները Հայոց եկեղեցու և եկեղեցականների դեմ: Որոշակի նպատակադրումով և, ամենայն հավանականությամբ Հ. Արղությանի նախաձեռնությամբ, Պետերբուրգում հայերենի են թարգմանվում Պլատոն միտրոպոլիտի «Քրիստոնեական աստվածաբանությունը», «Քարոզներ» և «Մուղափառ կրթություն» գրքերը /թարգմանիչ Ստեփանոս Ասլանյան/<sup>174</sup>: Ռուսերենի է թարգմանվում և Պետերբուրգում 1799թ. տպագրվում «Հայոց եկեղեցու դավանանքը»<sup>175</sup> գիրքը, որն այնուհետև Պետերբուրգում վրաց

<sup>169</sup> Դիան հայոց պատմության, գիրք 9, էջ 614-619: Г. Эзов. Начало сношений эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.

<sup>170</sup> Պատվիրակության հաջողությանը իր օժանդակությամբ նպաստել էր նաև Դավանանք Լազարյանը և այդ առիթով նաև զգուշացրել Սիմեոն Երևանցուն (տես Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 140-141):

<sup>171</sup> Армяно-русские отношения в XVIII в., IV, с.76-77.

<sup>172</sup> Տեքստը տես Ե. И. Дружинина. Кючук Кайнарджийский мир. Москва, 1955, с. 352.

<sup>173</sup> Դիան հայոց պատմության, IX, էջ 4, 26-27:

<sup>174</sup> Ուշագրավ է, որ Պլատոն արքեպիսկոպոսի քարոզների ռուսերենից հայերենի: Թարգմանությամբ զբաղվել է նաև Դավանանք Սողազարի Լազարյանը: Տես Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 190:

<sup>175</sup> "Вероисповедание Армянской церкви", СПб, 1799.



դեսպանության քարտուղար Գեորգի Ավալիշվիլին ռուսերենից թարգմանում է նաև վրացերենի<sup>176</sup>:

Պավել Առաջինի 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրերում ընդգծված շեշտվում է, որ թույլատրվում է ազատորեն դավանել Հայոց դավանանքը, կառուցել եկեղեցիներ և կրոնական հարցերում ենթարկվել միայն Էջմիածնի կաթողիկոսի ու Ռուսահայոց առաջնորդ Հովսեփ Արղությանին: Ավելին, Ղուկաս կաթողիկոսի մահից հետո, Ռուսական արքունիքը պաշտպանում է Հ. Արղությանի թեկնածության առաջադրումը Հայոց կաթողիկոսական գահի համար և Ռուսական բանակի Վրաստանում լինելու հանգամանքով թելադրված՝ Հովսեփ Արղությանի միջոցով է 1801 թ. փետրվարին հրապարակում Վրաստանը Ռուսաստանին միացնելու Պավել Առաջինի հրովարտակը:

Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների ուղղվածությունը պայմանավորվում էր քաղաքական հարաբերությունների պահանջով ու մակարդակով:

#### ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ - ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ

##### ՔՆՂԱՔԱՅԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆՈՐՏՈՒՄ

4.2 Ձուրովի արշավանքը և հայերը.- 1790-ական թվականներին Աղա-Մահմադ խանի հզորացմամբ Իրանի պատմության մեջ սկսվում էր նոր շրջան, որն ավարտվեց Ղաջարական դինաստիայի հաստատմամբ: Այդ ընթացքում Աղա-Մահմադ խանն ավերիչ արշավանք ձեռնարկեց դեպի Այսրկովկաս<sup>177</sup>, գրավեց և ավերեց Թիֆլիսը<sup>178</sup>: Չնայած Թիֆլիսում նա մնաց ընդամենը մեկ շաբաթ, սակայն Աղա-Մահմադ խանը Թիֆլիսն ավերելուց հետո դեռևս մտադիր չէր արագորեն թողնելու Այսրկովկասի սահմանները և հրամայել էր բանակի համար Մուղանի դաշտում կուտակել պարեն ու զինամթերք: Հովսեփ Արղությանը Թիֆլիսի վերահաս ավերումը կանխելու համար Հերակլ II-ի խնդրանքով դիմել էր Ի. Գուրովիչին՝ օգնական զորք ուղարկելու առաջարկով, ուստի 1795թ. դեկտեմբերի 15-ին, այսինքն՝ արշավանքից երեք ամիս անց, Գրիգորիոսյուլից Ստեփան Դավթյանին ուղղած նամակում դժգոհում էր, թե՝ «Մեղավորն Կուտովիչն է, ողորմելի անբախտ արքային ի մարտի առաքեալ էր առ նա և գրեալ՝ օգնել կամ հրաժարիլ, թեպետ այն շատ խոսեցայ ընդ նմա՝ վասն այան, որ երկիրն առանց ձեր օգնությանն փչանալայոց է, այլ հաստ գլուխ նորա ոչ ընկալա»<sup>179</sup>: Վավերագրերից պարզվում է, սակայն, որ Ի. Գուրովիչը ոչ միայն հասկանում էր, այլև ինքն իր հերթին զենուցազոր էր ներկայացնում արքունիք՝ հուսալով կարգադրություններ ստանալ գործելու համար: Ժամանակին զորք չորսամղորդելու փաստը խիստ սասանեց Ռուսաստանի վարկը, և Վրաստանում ծավալում ստացան հակառուսական տրամադրությունները: Ռուսական քաղաքականության վարկը փրկելու և առաջիկայում Այսրկովկաս արշավանքի ձեռնարկումը արդարացնելու նպատակով ռուսական հրամանատարությունը, և մասնավորապես Ի. Գուրովիչը, Թիֆլիսի գրավումը սկսեցին վերագրել ոչ թե ուժերի անհավասարությանը, այլ ներքին դավաճանությանը: Թիֆլիսի գրավումը դավաճանության վերագրելը սկիզբ է առել Ռուսաստանում, ռուս հրամանատարության տարածած լուրերից:

Այսրկովկասի նկատմամբ իր հավակնությունների բացահայտ դրսևորում էր Ռուսաստանի կողմից գեներալ Վ. Ա. Ձուրովի հրամանատարությամբ 1796 թ. զարնանը ռուսական բանակի առաքումը: Հայ գործիչները ոչ միայն չէին կարող լուր ղիտորդի դերում մնալ, այլև որոշակի ոգևորությամբ լծվեցին այդ գործընթացին՝ բարենաչող ավարտին հասցնելու փայփայած իրենց ձգտումները: Ռուսահայ գործիչներին ու բնակչությանը համախմբելու գործում մեծ է Հովսեփ Արղությանի դերը: Նա ոչ միայն անձամբ էր մասնակցում

արշավանքին և փորձում իր նպաստը բերել արշավանքի հաջողությանը<sup>180</sup>, այլև հորդորում կամ պահանջում էր այլևայլ գործիչների՝ ժամանելու գործող բանակ<sup>181</sup>: Նրանից բացի ռուսական բանակում էին գտնվում Մամուլար Կաճկաճյանցը, որ նշանակվել էր Վ. Ձուրովի մոտ թարգման, Ստեփան Դադաշյանը<sup>182</sup>, Ավերյան Մերեքրովը, Նիկիտա Գաջանովը<sup>183</sup>, մայրո Ալավերդովը<sup>184</sup>, Հարություն Արարատյանը, ասորայիսանցի Սերգեյ Բոգդանովը<sup>185</sup>, որ Վ. Ձուրովի կողմից ուղարկվել էր Շուշի, և շատ ուրիշներ: Հ. Արղությանի հետ Ղաթրից դեպի Դերբենտ՝ ռուսական բանակ են ճանապարհվել նաև Աստրախանաբնակ Դերբենտցի ու Շամախեցի շատ կամավորներ, որոնց ընտանիքները գտնվում էին Հ. Արղությանի հոգատարության ներքո<sup>186</sup>:

4.2 Ռուս-պարսկական փոխհարաբերությունները և հայ դիվանագիտությունը.- 18-րդ դարի վերջին քառորդին փորձ է արվում օգտվելու բուն իսկ Պարսից պետության ներքին հակասություններից և գործարքի գնալ հակամարտող ուժերից այն թևի հետ, որը կարող էր ընդառաջել հայոց բաղձանքին և որի համար կարող էր բարենպաստ լինել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հայ գործիչների օժանդակությունը: Ձանքեր են գործադրվում կապեր հաստատելու Իրանի գահի համար պայքարում Ռուսաստանի օժանդակության կարիքն զգացող Ալի-Մուրադ խանի<sup>187</sup> ու այնուհետև Աղա-Մահմադ խանի եղբայր Մուրթուզա Կուլի խանի հետ<sup>188</sup>: Վերջինիս հետ ավելի քան մեկ տասնամյակ հայ գործիչների մտերմությունը թելադրված էր ինչպես Իրանի գահի համար նրա թեկնածությունը Ռուսաստանի կողմից պաշտպանվելու խնդրով, այնպես էլ Ռուսական արքունիքում բարենպաստ կարծիք ստեղծելու մեջ հայ գործիչների միջնորդությանը դիմելու նրա մտախոգությամբ:

Չախողվելով Աղա Մահմադ խանի հետ հարաբերություններում, Ռուսաստանը փորձ է ձեռնարկում հարաբերությունները սերտացնելու Աղա մահմադ խանի հակառակորդ Ալի Մուրադ խանի հետ:

Օգտվելով Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունից Գ. Ա. Պոտյոմկինը Գեորգիայում պայմանագրի կնքումից հետո մտահոլանում է Այսրկովկասում ռուսական ազդեցությունը ընդարձակելու նոր տարբերակ: Այդ նպատակով փորձ է արվում օգտագործել Ալի Մուրադ խանին Ռուսաստանի հովանավորության և նրան Իրանի նոր շահ ճանաչելու խոստումով զայրակղումը: Գ. Ա. Պոտյոմկինի համձնարարությամբ 1783թ. հոկտեմբերին Ալի Մուրադ խանի մոտ՝ Սպահան է ուղարկվում հայազգի Հակոբ Թոխասյանը (Անտոնյան): Ալի-Մուրադ խանը պատրաստակամություն է հայտնում Ռուսաստանի հետ փոխանակել պաշտոնական ներկայացուցիչներ, ազատել մաքսատուրքերից ռուսական վաճառականներին և միաժամանակ զգուշացնում, թե ինքը չի կարծում, որ Ռուսաստանը

<sup>176</sup> ლია კიკნაძე. გიორგი ავალიშვილის ცხოვრება და შემოქმედება. თბილისი, 1993, გვ. 121.

<sup>177</sup> Գիտական գրականության մեջ հաճախ նշվում է, թե իբր Երևանն առանց պայքարի ու դիմադրության հանձնվել է Աղա-Մահմադ խանին: Տես Օ. Ս. Մարկով. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, с.288. Хаджи Мурад Ибрагимбейли. Россия и Азербайджан в первой трети XIX века /из военно-политической истории/. М., 1969, с. 53. Իրականում Երևանը հանձնվել է 35-օրյա պաշարումից հետո: Տես Վ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում /1780-1800/, Երևան, 1958, էջ 161: Թիֆլիսի պաշարումը տևեց ընդամենը մեկ օր, իսկ Շուշին մնաց անառիկ՝ իր դիրքի և պաշտպանների հերոսական դիմադրության շնորհիվ:

<sup>178</sup> Տես «Հայկական աղբյուրները Աղա Մուհամադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին /1795-1797 թթ./». Աշխատախորհրդամբ Ռ. Տ. Տիտանյանի, Երևան, 1981:

<sup>179</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2951, ք. 86բ:

<sup>180</sup> Ս. Գ. Դուկասյան, Հովսեփ Արղությանը ռուսական զորքերի 1796 թ. անդրկովկասյան արշավանքի ժամանակ,- ՊԲՀ, 1987, քիվ 3, էջ 83-94:

<sup>181</sup> ՄՄ, ձեռ. 2951, ք. 89ա-բ:

<sup>182</sup> Жизнь Артемия Араатского. Издание подготовил К. Н. Григорьев при участии Р. Р. Орбели, Ленинград, «Наука», 1980, с.150.

<sup>183</sup> Дж. С. Фаньян, Подполковник русской военной службы Н. И. Гаджанов /Агаджанян/, - Ств ՊԲՀ, 1980, քիվ 2, էջ 285-489:

<sup>184</sup> Հրանտ Ավետիսյան, Ռուսական բանակի հայ զորավարները և սպայությունը /18-րդ դարի երկրորդ կես- 1914 թվական/, - «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր» /նյութերի ժողովածու/, Երևան, 1998, էջ 89-90:

<sup>185</sup> АВРР, ф. СРП, оп. 77/7, 1796г., д. 158, л. 160-161.

<sup>186</sup> ՄՄ, ձեռ. 2951, ք. 111բ:

<sup>187</sup> А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах 18-го столетия, Ереван, 1990, с.130-144.

<sup>188</sup> Հայ գործիչների հետ Մուրթուզա Կուլի խանի կապը նկատել և հղի. Լազարյանին գրած նրա մի նամակը իր մեմագրության մեջ հրատարակել է պրոֆ. Գ. Դիլոյանը (տես Վ. Դիլոյան, «Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից (18-րդ դարի երկրորդ կես), Երևան, 1966, էջ 178-179:



ուարածքներ կպահանջի Իրանից<sup>189</sup>։ Ձեկուցագրից ակնհայտ է, որ Հակոբ Անտոնյանը համեմարարություն է ունեցել հաղորդելու Ռուսաստանի կողմից տարածքային պահանջների մասին, որին և ի պատասխան հնչել է Ալի Մուրադ խանի վերաբերյալ առարկությունը։ Այդ համեմատմանը ընդգծելի է, որովհետև պատմագիտության մեջ համընդհանուր տարածում է ստացել այն դրույթը, թե իբր տարածքային զիջումների նախաձեռնությունը պատկանում էր Ալի Մուրադ խանին։ Էնգելիում Ռուսական հյուպատոս Ի. Վ. Թունամովսկին ևս 1783թ. դեկտեմբերի 1-ին Ալի-Մուրադ խանի մոտ է ուղարկում հայագրի Մեյքոմ Պոպովին<sup>190</sup>։

Թեև Ռուսաստանի համար գալթակղիչ էր այն, որ Ալի-Մուրադ խանի՝ Ռուսաստանի օժանդակությունը ստանալու դիմաց կարելի էր պահանջել Ղարադաղը, Ղարաբաղը, Նախիջևանի ու Երևանի խանությունները և Այսրկովկասի մերձկասպյան տարածքները<sup>191</sup>, սակայն այդ ծրագրի խափանումը կապված էր ոչ միայն Ալի-Մուրադ խանի անակնկալ մահվան հետ։ Դեռ մինչև մահը նա դրսևորել էր ռուսական ծրագրերի դեմ իր դիրքորոշումը և պատահական չէ, որ Դեբեդնոսի Ֆաթալի խանը և «Ալի Մուրադ խանից հրաժան ստացավ խզել ռուսների հետ ամեն տեսակի կապերը»<sup>192</sup>։ Ուստի միանգամայն իրավացի է այն հետևությունը, թե Ալի-Մուրադ խանի կողմից ևս Ռուսաստանին խոստումների քաղաքականությունը զուտ դիվանագիտական խայծ էր, որպիսին շարունակել էր կիրառել նաև Աղա Մահմադ խանը Ալի Մուրադ խանի մահից հետո՝ սակայն այս դեպքում Օսմանյան պետության հետ վարվող բանակցություններով իր տիրապետությունը ընդունելի դարձնելու նպատակով։ 1785 թ. սկզբներին (փետրվարի 7) մահանում է Ալի-Մուրադ խանը։ Ձեռքերի կողմն անցած Մուրթուզա Կուլի խանը անցնում է քալիշների մոտ և Ռուսաստանից օգնություն ստանալու համար փորձում հավաստիացնել, թե իր և իր եղբոր՝ Աղա Մահմադ խանի, միջև բշտամանքը հետևանք է այն բանի, որ ինքը հովանավորել է Վոյնովիչի ռուսական արշավախմբին։

Ի դեմս Մուրթուզա Կուլի խանի Ռուսաստանը տեսնում էր մի ուժ, որը անհրաժեշտ պահին կարելի էր հակադրել Աղա-Մահմադ խանին։

1794 թ. աշնանը Իրանը արդեն գրեթե միավորված էր Աղա-Մահմադ խանի սրի ներքո։

Մուրթուզա Կուլի խանին ու նրա լիեսպանին հասցեագրված Հ. Արդուբյանի մեզ հայտնի առաջին նամակները գրվել են 1791թ. փետրվարի 12-ին Յաշից։ Ուշագրավ է Հ. Արդուբյանի այն նշումը, թե ռուսական կողմի համեմարարությամբ ինքը ևս լիագրված է տնօրինելու դիվանագիտական բանակցությունների ընթացքը։ 1792թ. դեկտեմբերի վերջերին Մուրթուզա Կուլի խանը, վերջնականապես զգալով իր վիճակի անհուսալիությունը Գիլանում, ռուսական հավով, իր հետ վերցնելով նաև Աբաս և Ռիզա խաներին, ճանապարհվում է Ռուսաստան։ Ռուսական արքունիքը նրան պահում է Աստրախանում<sup>193</sup>։ Աղա-Մահմադ խանը միջոցներ և ուղիներ էր որոնում Ռուսաստանում գտնվող եղբորը կրկին Իրան վերադարձնելու և Իրանում իր տիրապետության համար այդ սպառնալիքը չեզոքացնելու նպատակով։ 1795 թ. սկզբներին Մուրթուզային տեղափոխում են Պետերբուրգ և շքեղ ընդունելություն կազմակերպում Ռուսական արքունիքում։ Աղա Մահմադ խանը 1795 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին գրավում է Այսրկովկասի զգալի մասը, ավերում Թիֆլիսը և վերադառնում Խորասան<sup>194</sup>։

Վ. Ջուրովի գլխավորությամբ Ռուսական զորքի արշավանքի ժամանակ իշխանությունները Մուրթուզա Կուլի խանին ուղարկում են Սարի կղզի և նրան ուղեկցող իշանակում Պետր Կովալենսկուն, որտեղից նրանք բանակցություններ էին վարում մահմեդական

ցեղերի առաջնորդների հետ՝ նրանց Աղա-Մահմադ խանի դեմ ոտքի հանելու համար։ 1796թ. նոյեմբերին մահանում է Եկատերինա Երկրորդը, և գործերը 1797 թ. ետ են շաշվում դեպի Ռուսաստան։

Ռուսական քաղաքականության այդ անակնկալ շրջադարձը շտկումներ է մտցնում ինչպես հայ գործիչների ծրագրերում, այնպես էլ Մուրթուզա Կուլի խանի ճակատագրում։ 1797 թ. Աղա-Մահմադ խանի սպանությունից հետո Պարսկաստանում սկսված գահակալական կռիվներում հաղթում է Բաբա խանը, և այնուհետև օժվում որպես Իրանի նոր շահ՝ Ֆաթ-Ալի շահ անունով (1797-1834)։ 1798 թ. հունիսին Պետերբուրգ է ժամանում վերջինիս դեսպան Միրզա Սադրը Հասանը, բերելով Ֆաթ-Ալի շահի շնորհավորանքները Պավել Առաջինին՝ նրա գահակալելու առիթով և միաժամանակ պատրաստականություն էր հայտնվում բարեկամելու երկու երկրների միջև խանգարված առևտրական հարաբերությունները<sup>195</sup>։ Մուրթուզա Կուլի խանի թեկնածության հնարավորությունը Իրանի գահի համար այսպիսով այլևս վերանում է<sup>196</sup>։

Հովսեփ Արղությանը առիթն օգտագործում է և մաղթանքներ ու խնդրանքներ է եղում Բաբա խանին։ 1798 թ. մարտի 12-ին Պետերբուրգից Աբաս խանի միջոցով Հ. Արղությանը շնորհավորում է Բաբա խանին. «Ձի թագատրեստ է ի վերա Պարսից արքային վասն խաղաղության, վասն աշխարհաշինության և վասն գթության և ողորմության ի վերա հպատակաց իւրոց ... և զգոյթ խնամոց և ողորմության իւրոյ տարածեսցէ ի վերա հպատակաց իւրոց մահմեդականաց և քրիստոնէից»։ Այնուհետև խնդրում է. «որպէս նախնի թագատորն Պարսից ևս Աղայ Մահմատ խան թագատորն հայոյն և Խորեզմայոյն իւր ողորմութեանքն իւրեանց միշտ պահպանել զսուրբ Աթոռն մեր Էջմիածին»՝ Ուշիլիսայ կոչեցեալ, և մեծ խալիֆ նորին... առաւել ցուցանէլ առ նա զգոյթ և զողորմութիւն իւր և հրամայել Երևանայ խանին, որ չգրկեն զՈւշիլիսէն և կամ յաշիշտակէն զմուր նորա, զի նախնի թագատորն մաղաֆ են արարեալ զգիւղօրայս Ուշիլիսէի...»։ Հաջորդ կետով խնդրում է «զգոյթ ողորմութեան իւրոյ տարածանել առ ողորմելի ազգս մեր, որք են ենք խնամոց և հովանաւորութեան իւրոյ մեծութեանց, որ նոքա վայելելով զայն՝ փախուցեալքն ի բռնութենէ խիստ տեսարցն յետս դարձցին ի հայրենի աշխարհ իւրեանց»։ Հինգերորդ խնդրանքը վերաբերում է Արցախի խնդրին. Հ. Արղությանը պահանջում է Ղարաբաղի Իրքահիւմ խանին «բառնալ ի Շուշու բերդն և կործանել զնա», քանզի նա էր Աղա-Մահմադ շահի սպանման պատճառը և «կործանիչ իմոյ ազգին և ջնջիչ յերկրէ անտի»։ Այնուհետև Հ. Արղությանը իր ծառայություններն էր խոստանում պարսկա-ռուսական բանակցություններում և փոխարենը պահանջում Թիֆլիսից տարված գերիներին ազատություն շնորհել և «դարձուցանել զնոսա յերկիրն իւրեանց»։ Վերջին՝ ութերորդ, կետով Հ. Արղությանը խնդրում է Աբաս խանից, որ «գոր ինչ պարոն Մելիք Ջիմշիտին ասացեալ էիր և կամ գրով նշանեալ, այն կատարումն ետ»։ Հայ գործիչները թեև դիվանագիտական մեծ ջանքեր էին բախում Պարսից արքունիքում և իշխող դասի մոտ հայոց նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ձևավորելու համար, սակայն և մտադիր չէին ետ կանգնելու իրենց հայրենիքը Ռուսաստանի օժանդակությամբ Պարսից լծից ազատագրելու խնդրից։

4.3 Ռուս - Վրացական փոխհարաբերությունները և հայոց դիրքորոշումը.- Հայ գործիչների համար հստակ էր, որ հայ-ռուսական հարաբերությունները մեկուսի՝ առանց Վրաստանի մասնակցության, չեն կարող ձեւավորվել Այսրկովկասում, Վրաստանը էական դեր պետք խաղալ ինչպես իր աշխարհագրական դիրքի, էթնիկ կազմի, այնպես էլ ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերի առումով։ Ավելին, հայ-ռուսական հարաբերությունների սերտացման համար անհրաժեշտ էր ոչ միայն օժանդակել վրաց-ռուսական, այլև հայ-վրացական փոխհարաբերությունների բարելավմանն ու խորացմանը։ Այդ է պատճառը, որ հասարակական - քաղաքական գործիչները հայ ազատագրական ծրագրերում էական տեղ էին հատկացնում Վրաստանին, հուսալով նրա դիրքորոշման նպատակությունը, եւ փորձում օժանդակել նրա հզորացմանը։

<sup>189</sup> Г. Л. Кессельбреннер. Хроника одной дипломатической карьеры. М., 1987, с. 219.

<sup>196</sup> Մուրթուզա-Կուլի խանը մահանում է Աստրախանում 1800 թ. հոկտեմբերին՝ Իրան վերադառնալու թուղանություն ստանալուց մի քանի ամիս անց։

<sup>189</sup> Армяно-русские отношения...IV, с. 301. В. М. Мартиросян. Армяне в русско-иранских экономических и политических связях. -ИРЭ, 1979, п. 3, т. 241: Իրականում այդ տարածքների ձեռքբերումը Գ. Պոտյոմկինի ակնկալությունն էր, որը դիվանագիտորեն մերժվում էր խանի կողմից։

<sup>190</sup> Ալի Մուրադ խանի հետ Ռուսաստանի վարած բանակցությունների ողջ ընթացքի հանգամանքներն վերաբերումը, որքանով անշնչում է Այսրկովկասի հետագա ճակատագրի քննարկմանը, ներկայացված է հայ պատմագիտության մեջ (А. Р. Иоаннисян, Россия..., с. 129-144, Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, էջ 84-86)։

<sup>191</sup> П. Бутков. Материалы для новой истории Кавказа, ч.II, СПб, 1869, с. 148.

<sup>192</sup> Բ. Կ. Զուլայան, Դայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 242։

<sup>193</sup> П. Бутков. Նշվ. աշխ., էջ 326: Н. Дубровин. Նշվ. աշխ., էջ 188-189։

<sup>194</sup> Աղա-Մահմադ խանը Իրանի նոր շահ է օժվում 1796 թ. մարտի 21-ին։







ռուսական զորամասը, որի օգնությամբ, ըստ հայ և վրաց գործիչների, պետք է իրականանար Վրաստանի և Հայաստանի ազատագրումը օտար լծից և վերականգնվելու մաս հայոց ազգային պետականությունը, հեռանում էր առանց էական նպաստ բերելու առաջադրված խնդիրների ու ծրագրերի լուծմանը:

Հերակլը փորձելով օգտվել պատերազմում Թերքիայի կրած պարտության հանգամանքից և Ախալցխայի նկատմամբ քայլեր ձեռնարկել, որոշում է կրկին դիմել Ռուսաստանի օժանդակությանը՝ խնդրելով գեներալ Մեդեմին գործով մոտենալու Վրաստանի սահմաններին: Ստանալով գեներալ Մեդեմի գեկուցագիրը այդ մասին, Եկատերինան 1775 թ. հուլիսի 28-ին պատասխանում է, թե Հերակլը արժանի չէ ուշադրության և կարգադրում է «остаться в молчании», մինչև Հերակլի կողմից կրկին նոր դիմումի ստացվելը, իսկ այնուհետև ծանուցել նրան, թե նրա խնդրանքի բավարարելը անհնար է և թող նվաճումներն ու ձեռքբերումները կատարի իր սեփական ուժերով<sup>207</sup>:

XVIII դարի վերջին քառորդին հայ-ռուս-վրացական հարաբերություններում եռանդուն գործունեություն էր ծավալել Հ. Արղությանը: Նա մեծ դեր էր ունեցել նաև 1783 թ. ռուս-վրացական Գեորգիևսկի դաշնագրի կնքման գործում<sup>208</sup>, և 1783թ. գարնանը ռուս-վրացական դաշնագրի նախապատրաստական աշխատանքների ժամանակ կազմել էր (անշուշտ Ռուսական իշխանությունների գիտությանը) նաև Հայ-ռուսական դաշնագրի նախագիծը: 1784 թ. Պետերբուրգ է ժամանում նաև հայ ժողովրդի լիազոր ներկայացուցիչ Ստեփան Դավթյանը: Դուկաս կաթողիկոսի խնդրանքով Հերակլ II-ը 1784 թ. օգոստոսի 13-ին հանձնարարական նամակ է գրում Ստեփան Դավթյանի համար Պ. Ս. Պոտյոմկինին, խնդրում «բարեհաճ լինել նրա նկատմամբ եւ օժանդակել նրան»<sup>209</sup>: Հայ եւ վրաց ժողովուրդների քաղաքական համագործակցության համար Պետերբուրգում եւս ստեղծվում է կապող օղակ: Այդ կապերի առավել եռանդուն կազմակերպիչ կրկին հանդես է գալիս Հ. Արղությանը:

Հայ-ռուս-վրացական հարաբերությունները նոր երանգ են ստանում ռուս-թուրքական 1787-1791 թթ. պատերազմի ժամանակ: Պատերազմական գործողությունները թեև ընթանում էին Այսրկովկասի սահմաններից հեռու, սակայն հայ եւ վրաց ժողովուրդների ներկայացուցիչները որոշակի հույսեր էին կապում Ռուսաստանի կողմից պատերազմի հաղթական ավարտից հետո կնքվելիք պայմանագրի հետ, գտնվում էին Յաշում, որտեղ եւ պետք է ստորագրվեր հաշտության պայմանագիրը: Պայմանագրում ուղղակիորեն չարտացոլվեցին անմիջապես Հայաստանին եւ Վրաստանին առնչվող հարցեր: Պատվիրակությունները վերադարձան առանց որոշակի հաջողությունների: Էականը, սակայն, այն էր, որ Թուրքիան պայմանագրի հիմնգեղորդ կետով ձեռնպահ էր մնում Բարքիի նկատմամբ թշնամական քայլերից:

1795 թ. Աղա-Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո Հովսեփ Արղությանը Գ-րիգորիդյանից նամակով դիմում է Հերակլ Երկրորդին, եւ, հայտնելով իր դառն ապրումներն այդ դեպքերի առթիվ, գրում է. «...ոյս Հայաստանեայց աշխարհի եւ քաղաքորդին ձեր էր, ողբասցեն ընդ ձեզ ամենայն ազգ եւ ազինք հայոց, որք սփռեալք են ի ծագ աշխարհի»: Հ. Արղությանը հայտնում է նաև, թե մինչև Աղա Մահմադ խանի արշավանքը ինքը շատերին էր գրել ու հայտնել սպառնալիքի մասին, սակայն նրանք «ոչ հաւատային հաւատարմութեանն տանն Վրաց»: Կատարվածն արդեն փաստ էր և Հովսեփի Արղությանը հուսադրում է Հերակլին, թե Ռուսաստանն անպաշտպան չի թողնի Վրաստանին:

Աղա Մահմադ խանին պատժելու պատրվակով 1796 թ. դեպի Այսրկովկաս Ռուսաստանի կազմակերպած արշավանքի ժամանակ Հ. Արղությանը ձեռնամուխ է լինում արշավանքի համար իր պլանները մշակելու և ռուսական հրամանատարությանը

ներկայացնելու գործին<sup>210</sup>, միաժամանակ նաև Արցախի մեղքներին ու Հերակլ Երկրորդին հորդորում է ավելի հաստատականորեն, առանց վերապահումների օժանդակել Ռուսական բանակին՝ հուսադրելով նրանց մոտակա ազատության հեռանկարով: Մեզ է հասել Շամախիից Հերակլ Երկրորդին Հ. Արղությանի գրած 1796 թ. սեպտեմբերի 14-ով քվազոված նամակը, որ արժեքավոր է մի շարք առումներով<sup>211</sup>: Այն պատասխանն է Հերակլի կողմից Հ. Արղությանին գրած նամակի, որը պետք է ներկայացվել նաև Վալերիան Զուբովին: Դատելով Հ. Արղությանի պատասխանն նամակից, Հերակլը պահանջել էր շուտափույթ օգնություն ցուցաբերել ինչպես դրամական, այնպես էլ զինական առումով, սպառնալով հակառակ դեպքում մնալ օգնություն ստանալու համար դիմել այլ ուղիներին<sup>212</sup>: Այնուհետև Հերակլը իր նամակին կցել էր նաև թուրքական սերասքարից ստացած նամակը: Հ. Արղությանը խորհուրդ է տալիս լինել համբերատար ու հեռատես և օժանդակություն չիմտրել թուրքերի մոտ, «չխմել այն պղտոր ջրից, որն արդեն բազմիցս ... անցկարագրելի չափքներ է բերել»<sup>213</sup>: Արշավանքի դադարեցումից հետո Հերակլ II-ի ու ռուս հրամանատարության խնդրանքով Հովսեփ Արղությանը պետք է Ռուսաստան վերադառնար Վրաստանով:

Վրաստանի տնտեսական ու հասարակական-քաղաքական ծանր վիճակի պայմաններում Հ. Արղությանի ներկայությունը Վրաստանում խիստ անհրաժեշտ է նկատվում և, սպառնալով է. նրա ներկայությամբ կամ միջոցով ակնկալվում էր մեղմել տեղում առաջացած սոցիալական լարվածությունը: Մեծացել էր Վրաց արքունիքի քաղաքականությանը նկատմամբ դժգոհությունը, եւ աճել էր, ինչպես ընդունված է վրացագիտության մեջ<sup>214</sup>, պարսկական կողմնորոշում ունեցող ավատատերերի թիվը: Այն ավարտվեց 1797 թ. թագավորի դեմ կազմակերպված դավադրությամբ<sup>215</sup>: Իրականում այդ դժգոհություն էր Ռուսաստանի վարած քաղաքականությունից, որը դադարեցնելով արշավանքը, փաստաբանորեն Վրաստանին կրկին թողնում էր Պարսկաստանի վտանգի դեմ միայնակ, ուստի և Պարսկաստանի անվան հոլովումը ոչ թե կողմնորոշում, այլ հակակշիռ էր, որով պետք է ապահովագրելին Վրաստանը Աղա-Մահմադ խանի հնարավոր նոր արշավանքից: Այդ անհանգստությունը բռնկել էր ոչ միայն հայազգի բնակչությանը, այլև վրաց կաթողիկոսին, ուստի միանգամայն անհիմն է վրաց պատմագիտության մեջ վերորդեյալ անհանգստությանը ազգային երանգ վերագրելը՝ ելնելով միայն Թիֆլիսի բնակչության մեծամասնության հայազգի լինելու հանգամանքից: Բարձր գնահատելով Հ. Արղությանի գործունեությունը Վրաստանում, Հերակլը նույն թվականի հունիսի 10-ով քվազոված իր նամակով հանձնարարում է նրան Վրաստանի վիճակի մասին հաղորդել ռուսական արքունիք և հավաստել Ռուսաստանի նկատմամբ իր հավատարմությունը:

Հ. Արղությանը 1798թ. փետրվարի 14-ին Գեորգի Արքայազմին գրած նամակում խորհուրդներ է տալիս նրան ինչպես ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման, այնպես էլ նրա գահակալության ժամանակ վարվելիք ներքին ու արտաքին քաղաքականության ու հայ-վրացական հարաբերությունների հիմնահարցերի շուրջ<sup>216</sup>:

Ավարտելով այն միջոցառումների թվարկումը, որոնք իր կարծիքով կարող էին նպաստել Վրաստանի քաղաքական ու տնտեսական կայունության ամրապնդմանը, Հ. Արղությանը անցնում է հայ-վրացական հարաբերությունների բարելավման անհրաժեշտության հիմնավորմանը: Ակնարկելով Գեորգիի 1790 թ. համաձայնությունը Լոռու գավառը Շահամիր

<sup>207</sup> П. Бутков, Материалы..., II, с. 25-26.

<sup>208</sup> Ч. Мамуршироуян, 1783 թ. Գեորգիևսկի դաշնագիրը և հայերը, - ՅՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, թիվ 9, էջ 92-100: Նույնի՝ Նոր վավերագրեր Գեորգիևսկի 1783 թ. դաշնագրի մասին, - ՊԲՀ, 1978, թիվ 3: Ա. Ն. Սուրգուլաձե, Գեորգիևսկի պայմանագիրը և նրա առաջադիմական նշանակությունը Պայմանագրի 200-ամյակի առթիվ/, - ՊԲՀ, 1983, թիվ 2-3 /101-102/, էջ 13-20:

<sup>209</sup> В.Н.Гамрекли. Межкавказские политические и торговые связи. Тбилиси, 1986, с.204.

<sup>210</sup> Նույն տեղում, էջ 435-439:

<sup>211</sup> Նույն տեղում, էջ 439-440: Յմտ. С. П. Гасарджян, В. К. Восканян. Материалы по русско-кавказским отношениям конца XVIII века. - ՊԲՀ, 1977, թիվ 1, էջ 237-238:

<sup>212</sup> Տես Ս. Գ. Ղուկասյան. Հովսեփ Արղությանը ռուսական զորքերի 1796 թ. անդրկովկասյան արշավանքի ժամանակ, - ՊԲՀ, 1987, թիվ 3, էջ 91:

<sup>213</sup> Նույն տեղում, էջ 440:

<sup>214</sup> საქართველოს ისტორიის საკითხები, ტ. IV, გვ. 774.

<sup>215</sup> Г. Натадзе. Крестьяне "Сахасо" в Восточной Грузии в конце XVIII в., - "Материалы по истории Грузии и Кавказа", 1937, ч. V, с. 364-365. Дор. Учанеишвили. К вопросу об экономическом развитии Восточной Грузии во второй половине XVIII века. - "Материалы по истории Грузии и Кавказа", 1937, ч. V, с. 424-426.

<sup>216</sup> Մատենադարան, ձեռ. 2951, ք. 157ա-158ա:



Շահամիրյանին ժառանգաբար տնօրինելու մասին հրովարտակ շնորհելու հանգամանքը, Հ. Արղուրյանը պահանջում է. «ՋԼԼԿին, զոր հաստատ գրով շնորհեալ էք աղայ Շահմիրին եւ նա եւս յանձնեալ է ի Մէլիք Ապովն, հաստատ պահեսցիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանավորութիւն ձեր հրավիրէք միայն զհնդկաբնակ Հայս, այլեւ Կարսն եւ Ալլիցխայն դատարկեալ բնակչօք նոցա՝ լնանելոց են Փանքակն եւ Բօրչալուն»:

Նա Գեորգիից պահանջում է. «Որովհետեւ ի ձեզ պարծեն միշտ Հայք եւ ուրախ են, թէ՛ ունինք մեր թագավոր ի սերնդոց թագավորացն մերոց, պարտ է Ձեզ եւս բանիւ եւ գրով զհալանական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանելով զայդ, որպէս եղեալքն ընդ հովանեաւ ձերով Հայք՝ ջերմեռանդաբար ծառայեսցեն Ձեզ, նոյնպէս եւ արտաքինքն դիմեսցեն ի հովանավորութիւն Ձեր»:

Պարսկաստանում գահ բարձրացած Բաբա-խանը Գեորգի 12-րդից պահանջում է խզել կապերը Ռուսաստանի հետ եւ որդուն պատանդ ուղարկել Պարսից արքունիք, խոստանալով նրան հանձնել Երեսնի, Գանձակի, Շաքիի ու Շիրվանի կառավարումը, իսկ հակառակ դեպքում՝ սպառնում էր արշավել Վրաստան: Այդ պահանջը Գեորգի թագավորը ստանում է 1798 թ. հուլիսի 3-ին: Բաբա-խանի վերջնագիրը առավել մեծ խուճապ է առաջացնում Վրաստանում: Պետերբուրգից Վրաստան վերադարձած Դավիթ Արքայազմը Բաբա-խանի պահանջի մասին 1798 թ. հունիսի 28-ի նամակով տեղեկացնում է Հովսեփ Արղուրյանին, թէ "Царь приказал, чтобы ты заявил князю Безбородко и Куракину, что наше положение чрезвычайно тяжело... Постарайся, пожалуйста, если дорожите Грузией и рассчитываете на ея поддержку, то найдите для этого дела какое нибудь лекарство."<sup>217</sup> Հ. Արղուրյանը շտապում է Ռուսական իշխանություններին իր կողմից ևս հորդորել՝ միջամտելու Այսրկովկասյան գործերին և անընդհատ շտապեցնում է Գեորգի 12-ին՝ դեսպանություն ուղարկել Ռուսաստան: Հասկանալով հանդերձ Ռուսական արքունիքի պատրաստակամության իրական պատճառները, Հ. Արղուրյանը դեռևս հույս ուներ ռուսական զորքի մտնելուց հետո Այսրկովկասում տեսնել Ռուսաստանի հովանու տակ գոյատևելու Հայ-վրացական միացյալ թագավորություն: Բացատրելով իր ջանադրության դրդապատճառներն ու նպատակները, նա հիշեցնում է. «Իմ կամքն է ծաղկեցուցանել զդոսա եւ կոչել ոչ միայն թագավոր Վրաց, այլեւ Հայոց»<sup>218</sup>: Անդրադառնալով Պետերբուրգում գտնվող հայ մելիքների ճակատագրին, Հ. Արղուրյանը գտնում է, որ նրանց «բանն կախեալ կայ ի դոցանէ (իմա՝ Վրաստանի ճակատագրից-Պ.Զ.) եւ Աստուծով լավ են լինելոց, ասա նոցին ընտանեացն՝ լինիլ միամիտ»<sup>219</sup>:

4.4 Ռուս-թուրքական փոխհարաբերությունները և հայ դիվանագիտությունը. -

Հայ հասարակական-քաղաքական գործիչները, որ ուշի ուշով հետևում էին միջազգային հարաբերությունների զարգացմանը և փորձում նպաստել հայ ժողովրդի ազատագրմանն ու անկախության վերականգնմանը, հիմնականում միանշանակ կողմնորոշվել էին դեպի Ռուսաստան և ոչ միայն զենքով ու ռուսական բանակի կազմում կամավորական ջոկատներ կազմելով մասնակցում էին 1787-91թթ. ռուս-թուրքական պատերազմին<sup>220</sup>, այլև տարբեր դիվանագիտական առաքելությունների ու հանձնարարությունների իրականացումով, ձգտում էին օժանդակել նաև ռուսական դիվանագիտությանը՝ հաղթահարելու մրցակից պետությունների դիմադրությունը և նպաստավոր պայմաններ ստեղծել ռուսական ռազմական օժանդակությունը Այսրկովկաս հասցնելու համար:

1796-1797թթ. հեղափոխության նվաճումների պաշտպանությունից Ֆրանսիան անցավ բացահայտ նվաճողական քաղաքականության: Գահ բարձրանալու իսկ առիթով հրապարակած իր շրջաբերականում Պավել I-ը հայտարարում էր, թե պետք է բոլոր հնարավոր միջոցներով դիմագրավել Ֆրանսիական հանրապետությանը, որ սպառնում է Եվրոպային «օրենքի, իրավունքի, ունեցվածքի ու բարոյականության լիակատար ոչնչացմամբ»: Բռնապարտի հաջողությունները ինչպես կենտրոնական Եվրոպայում, այնպես

էլ Թուրքիայում, լրջորեն սպառնում էին Ռուսաստանի շահերին: Փորձելով կանխել Ֆրանսիայի առաջխաղացումը, Պավել I-ը արդեն իսկ Նապոլեոնի Իտալական ու եգիպտական արշավանքների նախօրյակին որոշեց օգտագործել Թուրքիայի դժգոհությունը և նրան առաջարկեց իր նավատորմը՝ պաշտպանության համար<sup>221</sup>: 1798 թ. օգոստոսի 23-ին /սեպտ. 2/ Թուրքիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային<sup>222</sup>: Ռուս-ֆրանսիական մրցակցության մեջ ակնհայտորեն վճռվում էր նաև Այսրկովկասի հարցը. և այդ դուրս չէր մնացել հայ գործիչների տեսադաշտից:

Հայ հասարակական և եկեղեցական գործիչների վերաբերմունքը Ֆրանսիական հեղափոխության նկատմամբ պայմանավորված էր նաև դիվանագիտական այն գործունեությամբ, որ վարում էր Նապոլեոնը իր արտաքին հարաբերությունները կարգավորելու նպատակով: Գրավելով Եգիպտոսը, Նապոլեոնը հատուկ շրջաբերականով դիմում է Եգիպտոսի ժողովրդին և իր արշավանքը բացատրում և արդարացնում մամլուկների լծից նրանց ազատագրելու և մահմեդականությանը սատար կանգնելու իր մտահոգությամբ և վճռականությամբ: Երջաբերականը, բնականաբար, անհանգստացրել է հայազգի գործիչներին և այն թարգմանվել է հայերեն<sup>223</sup>:

Ֆրանսիական եկեղեցական առաջնորդներից մեկի՝ Պլուայի եպիսկոպոս Հենրիկոս /Ամրի/ Կրեկուարի /1750-1830/ հանձնարարությամբ Շ. Ջրպետյանի 1800 թ. հունվարի 28-ին Դուկան կաթողիկոսին ուղարկված նամակում ասվում էր, թե «... Գաղղիա, որ յոյժ սիրէ զազգն մեր Հայոց և քաջ ճանաչէ զեպիսկական բարս նորս, գուցէ ընդ մերձենալն բանակին իւրոյ /որ այժմ յաշխարհ Եգիպտացոց եւ Ասորոց/ դէպի Կիլիկիա, ի Փոքր և ի Մեծ Հայաստան, յայնժամ Գաղղիա աւելի Հայոցս լինի նպաստամատոյց և այլն, քան թէ այլոց ազգաց Արեւելեայց»<sup>224</sup>:

Նապոլեոնի Եգիպտական արշավանքն ավարտվեց լիակատար ծախողունով: Դաշինք կնքելով Թուրքիայի հետ, Ռուսաստանը ձեռնամուխ եղավ ի թիվս այլ հարցերի, լուծելու նաև Այսրկովկասի խնդիրը: Ռուս-թուրքական պայմանագիրը կնքվեց 1799 թ. հունվարի 3-ին /1798թ. դեկտ. 23/ և լայն հնարավորություններ բացեց Ռուսաստանի առաջ: Անգլիան ևս 1799 թ. հունվարի 5-ին միացավ այդ համաձայնությանը: Այն պահին, երբ խառը տերությունների ուշադրությունը սևեռված էր միջերկրածովյան տարածաշրջանում կատարվող իրադարձություններին, Ռուսական արքունիքը դիվանագիտական վերջին նախապատրաստական աշխատանքներն էր կատարում գործերը Այսրկովկաս առաքելու համար: Տվյալ պահին հարցի լուծումը պայմանավորվում էր ռուս-թուրքական համաձայնագրի կնքման հանգամանքով<sup>225</sup>:

Ուշադիր հետևելով հակաֆրանսիական երկրորդ կոալիցիայի գործողություններին, Հովսեփ Արղուրյանը ոչ միայն պաշտպանում է Ռուսաստանի դիրքորոշումը, այլև փորձում է այդ մասին կոչ անել իր ողջ թեմին: Ստանալով Պավել Առաջինի հրովարտակի տեքստը, նա բազմացնում է այն և նրան կցելով իր կողմից գրած հորդորներն ու կոչերը, այն ուղարկում է Ռուսահայոց բոլոր գաղթօջախներ:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ԵՃՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.- XVIII դարի երկրորդ կեսը հայ ժողովրդի պատմության մեջ առանձնանում էր Այսրկովկասի և, մասնավորապես, Արևելյան Հայաստանի քաղաքական իր կարգավիճակի յուրահատկությամբ: Երևանի, Նախիջևանի, Գանձակի և Արցախի երկրամասերը հայտնվում են գրեթե անկախ կարգավիճակում,

<sup>221</sup> Д. А. Милютин. История войны между Россией и Францией в царствование императора Павла 1, СПб, 1857, с. 54.

<sup>222</sup> А. Д. Новичев. Вторжение французов в Египет и франко-турецкая война 1798-1802 гг. - "Вопросы истории стран Азии", Ленинград, 1965, с. 95-122.

<sup>223</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 8, վավ. 98: Մեկ այլ օրինակ տես Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. 2217 /Յուզակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, Գ, էջ 816-817 «Գրեցու ի բանակին գալլիլիացոց յԱղեքսանդրիա ԺԳ յաւուր ամսեանն Մեսիքոսի յայնի վեցերորդի հասարակապետութեան: Ըստ մերս 1798 իրք յօգոստոս»:

<sup>224</sup> «Լեն» հանդես, 1933, թիվ 1, էջ 139:

<sup>225</sup> Ռուս-թուրքական պայմանագրի կնքումից երկու ամիս հետո, 1799 թ. մարտի 3-ին Հ. Արղուրյանը գրում էր. «Սեր ամենաողորմած կայսրն ունի յոյժ բարեկամական կապակցութիւն ընդ պետին հազարացոց եւ նա կայ առ հրամանս մեծութեան տրին՝ յոյժ խորին հնազանդութեամբ եւ այս յատուկ պարգեւ յԱստուծոյ է յաղագս քրիստոնեական ազգին...» (նույն տեղում, թ. 253ա):

<sup>217</sup> Армяно-русские отношения..., IV, с. 478.

<sup>218</sup> Նույն տեղում:

<sup>219</sup> Նույն տեղում:

<sup>220</sup> М.Г. Нерсисян. Армянские волонтеры в русско-турецкой войне 1787-91 годов.- Պատմա-քանակական հանդես, 1979, թիվ 3, էջ 105-111:



սակայն Երևանում, Արցախում ու Նախիջևանում հայազգի նշանավոր գործիչները դառնում են զանազան դավադրությունների զոհ, իսկ նրանց ունեցած հայկական զինված ուժերի մի մասը կամ ցրվում է և կամ ծառայության անցնում օտար տիրակալների մոտ: Չնայած էական նվազմանը, հայ բնակչության դերակատարումը Արևելյան Հայաստանում շարունակում էր դեռևս որոշակի լինել և ունենալ իր ազդեցությունը XVIII դարի քաղաքական ու տնտեսական հարաբերություններում, որով և պայմանավորվում էր հայոց պետականության վերականգնման հնարավորությունների հույսերը:

Ատենախոսության մեջ ապացուցվում է, որ Հայաստանից օժանդակություն ակնկալում էին ոչ միայն Արևելյան Վրաստանի, այլև Արևմտյան Վրաստանի իշխանությունները: Առանձնապես է Արևմտյան Վրաստանի Ալեքսանդր V թագավորի հայ և վրաց պատմագիտությանը դեռևս անծանոթ մնացած դեսպանության ժամանումի փաստը էջմիածին:

Օսմանյան տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում հայ բնակչության նկատմամբ անընդ թռուրթյունների պայմաններում անգամ շարունակվում էր զգալի լինել հայ ժողովրդի դիրքորոշման կարևորությունը տեղական ներքին փոխհարաբերություններում և Հայաստանը օտարի բռնակալությունից ազատագրելու ծրագրերում: Մեր կողմից հայտնաբերված ու հրապարակված ժամանակագրության բնությալը ներկայացվում են Էրզրումի փաշայության դեմ հայոց անհնազանդության ու ապստամբության դրվագներ:

Խանութությունների անկախությունը ստանալուց անմիջապես հետո հայ իշխող դասի կտրուկ փառաբարացող քաղաքական կարգավիճակը պատճառ է դառնում աստիճանաբար հայ-վրացական միացյալ թագավորություն ստեղծելու գաղափարի վերականգնման համար: Այն տարբեր ձևով են ընկալել նաև հայ ու վրաց գործիչները XVIII դարում:

Հովսեփ Արղությանը Հայաստանում վրաց թագավորի լիակատար իշխանության հաստատման հետևանքը համարում էր Հայաստանի զոհաբերում Վրաստանին:

Աշխատության մեջ կարևորելով հայ բնակչության նկատմամբ Վրաստանում վարվող քաղաքականությունը և հայ բնակչության կարգավիճակի հարցի պարզաբանումը, հանգում ենք այն հետևության, թե որքանով հայ բնակչությունը Վրաստանը համարում էր առավել հանդուրժելի ու նախընտրելի դաշնակից ու հենարան և ըստ ամենայնի նպաստում էր Վրաստանի բարգավաճմանն ու տնտեսական ու քաղաքական հզորացմանը, վրաց արքունիքը բնավ մտադիր չէր ընդառաջելու Հայաստանի ազատագրության և հայոց պետականության վերականգնման հայոց ծրագրերին և ընդամենը հմտորեն օգտագործում էր հայոց ակնկալիքները հիմնականում իր ներքին ու արտաքին խնդիրները լուծելու համար:

Այդ հանգամանքով էր պայմանավորված Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից վարվող հայոց ազգային ինքնահաստատման ուղղված շրջահայաց, հասուն ու հեռատես քաղաքականության նկատմամբ վրաց արքունիքի կոշտ դիրքորոշումը և նրա քաղաքականության նկատմամբ թերահավատություն սերմանող լուրերի տարածումը:

Հայ-վրացական միասնության գաղափարի կենսունակությունը նպաստել էր մինչև XVIII դարի կեսերը արձանագրվող Սոմխիթ-Սոմխեթ նահանգի առկայությունը Վրաց պետության կազմում և նրա հարաբերական ինքնուրույնությունը վրաց վարչա-քաղաքական կառուցվածքի մեջ: XVIII դարի երկրորդ կեսից վրաց իրականության մեջ աստիճանաբար դուրս է մղվում այդ հասկացության Հայաստան ընկալումը և այն ընդգրկվում-ընկալվում որպես Ստորին Քարթլի, որ շարունակվում է առ այսօր:

Ազգի միասնության հիմքը ազգային եկեղեցին նկատելով, ժամանակի հոգևոր առաջնորդները՝ Հակոբ Ծամախեցին, Սիմեոն Երևանցին ու Ղուկաս Կարնեցին մեծ ջանքեր են գործադրել հայոց եկեղեցու միասնությունը վերականգնելու և ամրապնդելու ուղղությամբ: Այդ քաղաքականությունը պետք է որակել որպես առաջադիմական ու ազգանպաստ:

Հայ ազատագրական ծրագրերի հետամուտ գործիչների՝ Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր և Հակոբ Շահամիրյանների, լուսավորական-առաջադիմական գործունեությունը հայ-վրացական հարաբերությունների ոլորտում և առձանագրելով կարևոր ներդրում, որոշակի ներգործություն ունեցավ հայ-վրաց-ռուսական հարաբերությունների սերտացման գործում՝ օրակարգի մեջ դնելով հայոց կողմից

Հայաստանի ազատագրության ուղիների որոնումներն ու նրա գործնական իրականացման քայլերի փնտրտուքները:

XVIII դարի երկրորդ կեսը հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում բուռն զարգացման շրջան էր: Այն վճռական ազդեցություն ունեցավ հայոց պատմության հետագա ընթացքի մեջ, այդ հարաբերությունների ծավալումով հայ իրականության մեջ դադարեց հայ-վրացական թագավորության ապագայի նկատմամբ հույսերի փայփայումը:

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ձևավորումը ընթանալով տնտեսական ու մշակութային առնչությունների սերտացման հետ փոխկապակցված ու Ռուսաստանում հայ բնակչության սովորացման գործնապես ուղեկցումով, Ռուսահայ գաղթօջախը XVIII դարի երկրորդ կեսին ձևավորվեց որպես միասնական ընդհանուր շահերով, իրավական կարգավիճակով ու արտոնություններով կապակցված համայնք:

Հայ բնակչությունը կարևոր դերակատարում ուներ ոչ միայն Ռուսաստանի տնտեսական ներքին զարգացումներում, այլև Ռուսաստանի հետ արևելյան, այդ թվում և ռուս-ինդիական, առևտրա-տնտեսական հարաբերությունների ձևավորման ոլորտում:

Ռուսաստանի արտաքին-քաղաքական միտումներն ու ձգտումները որոշակի հանդուրժողականություն էին հաղորդում հայ բնակչության նկատմամբ կենտրոնական իշխանությունների քաղաքականությանը և թելադրում հայոց արտոնությունների դեմ ռուս վաճառականության ու տեղական վարչակազմի ոտնձգություններից նրանց պաշտպանելու դիրքորոշում: Այդ հանգամանքը իր ցայտուն դրսևորումն էր ստանում հատկապես հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների ոլորտում:

Հայ-ռուսական հարաբերությունները, սակայն, ծավալվում էին կողմերի միանգամայն ոչ համարժեք ձգտումների հենքի վրա: Եթե հայ իրականությունը ի դեմս Ռուսաստանի տեսնում էր հայոց պետականության վերականգնումի մեջ շահագրգիռ և կարող կողմ, ապա ռուսական պետությունը մտահոգ էր իր տարածքները ընդարձակելու համար տեղական օժանդակություն և «կամավոր» հպատակություն ապահովելու խնդրում: Ռուսական դիվանագիտությունը օգտագործելով պետականությունը վերականգնելու և Ռուսաստանի օժանդակությունը ստանալու ձգտումը, իրենց համակրանքը շահելու նպատակով հմտորեն հրահրում էր նրանց ելույթները և բոլորքում հույսերը առանց լրջորեն մտահոգվելու մահինդական տիրապետության պայմաններում նրանց անվտանգության խնդիրներով: Ռուսաստանի առաջխաղացումից սարսափած և դրան դիմակայելու պատրաստական ուժերը բշտամաբար տրամադրվելով ռուսական օժանդակությունը ակնկալող հայկական ուժերի նկատմամբ, առավել հետևողականություն են հանդես բերում հայկական ուժերը արմատախիլ անելու խնդրում: Այդ առումով մեծ կորուստներ արձանագրվեցին հայ-ռուսական հարաբերությունների մեջ առավել չափով ընդգրկված Արցախի ազատագրական ուժերի կազմում:

Առավել ուշադիր ուսումնասիրությունը պարզում է, որ Ալի Մուրադ խանի հետ Ռուսաստանի վարած բանակցությունները բնավ չէին կարող խոստանալ Այսրկովկասի «կամավոր» ձեռքբերում, իրականում Ալի Մուրադ խանը հստակորեն մերժել էր Ռուսաստանին տարածքային զիջումներ կատարելու առաջարկը, ուստի և այդ պատրվակը ևս չէր կարող հիմնավորում դառնալ արդարացնելու Ռուսաստանի ձեռնապահ քաղաքականությունը Արցախի ազատագրությանը սատար կանգնելու գործում, որպիսին մինչև այժմ շրջանառվում է պատմագիտության մեջ:

Հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում զարգացող հայ-պարսկական փոխհարաբերությունների ձևավորումը նոր երևույթ էր հայ դիվանագիտության բնագավառում: Ռուսական իշխանությունների աջակցությունը փնտրող Աղա Մահմադ խանի եղբայր և նրա քաղաքական հակառակորդ Մուրթուզա Կուլի խանի հետ Հ. Արղությանը և Հ. Լազարյանը Ռուսաստանում փորձում են համագործակցության եղբեր մշակել Պարսկաստանում նրա գահ բարձրանալու դեպքում Հայաստանի նկատմամբ բարեհաճ և հայապաշտ քաղաքականություն պարտադրելու համար:

Հայազգի գործիչները, այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին հայոց պետականությունը վերականգնելու հարցը ունենալով որպես գերխնդիր, զանազան միջոցներով փորձել են լծվել հնարավոր տարբերակների բնարկմանն ու իրենց օժանդակության ներդրմանը՝ հայ



ժողովրդի կենսունակությունը խթանելու, նրան ուժացումից փրկելու և Հայաստանի ազատագրության համար մախադյալներ ստեղծելու խնդիրը լուծելու համար:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլող աշխատությունները

1. Չեռնոշենցի Նիկոլայ-Նիկոլայի օրագրության մոզաշարի շեշտները,- «Մեզ» /Երևան, 1976, 2, 83-84:
2. Տիմոքեյ Գաբրիելյան «Մանավարդություն» նորահայտ տարբերակը,- «Պատմա-բանասիրական հանդես» 1977, թիվ 4 /79/, էջ 232-236:
3. Дневник Тер-Иоанна Ходжи —Оганяна,- «Кавказ и Византия», вып. 2, Ереван, 1980, с. 87-90.
4. Роль Закавказских купцов в русско-индийской торговле (XVIII-нач. XIX в.),- «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, с. 73-88.
5. Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (II пол. XVIII века),- «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, с. 232-269 (соавтор — В. М. Мартиросян).
6. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, 12 մամուլ:
7. Հայկական աղբյուրները Աղա-Մահմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին /1795-1797 թթ./, Աշխատասիրությամբ Ռ. Կ. Տիտյանի, Երևան, 1981,- «ՀՍՍՀ ԳԱ Լրագրեր հասարակական գիտությունների», 1982, թիվ 6, էջ 99-102 (գրախոսություն):
8. Հնդկահայ գաղթաբնակի պատմությունից /նորահայտ վավերագրեր/, - «Պատմա-բանասիրական հանդես», 1988, թիվ 1 /120/, էջ 183-191:
9. Из истории сношений Карабаха с Россией в XVIII веке,- «Правда о Нагорном Карабахе» (Материалы и документы). Ереван, 1989, с. 67-71.
10. Армяно - русские отношения во второй половине XVIII века (1760-1800 гг.). Под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1990. (Сборник документов), 37 п. л., Составители: А. Алексанян, В. Мартиросян, М. Нерсисян, П. Чобанян.
11. Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից /18-րդ դարի վերջ/, - «Պատմա-բանասիրական հանդես», 1991, թիվ 2 /133/, էջ 55-65:
12. Из истории армяно-русских отношений (Об исторических связях Карабаха с Россией),- «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении», Ереван, 1991, с. 94-106 (соавтор- М. М. Карапетян).
13. Հայ քաղաքական կողմնորոշման պատմությունից /18-րդ դարի 90-ական թթ./, - «Պատմա-բանասիրական հանդես», 1995, թիվ 2 /142/, էջ 149-164: նույնը՝ Հայ-ռուս-վրացական կապերի պատմությունից,- «Էջեր հայ գաղթաբնակների պատմության», Երևան, 1996, էջ 161-180:
14. Հայ դիվանագիտության պատմությունից,- «Ժրան մամլե - Արևելագիտական հանդես», 1996, թիվ 2-3 /18-19/, էջ 20-21:
15. Հայաստանի պատմության նորահայտ ժամանակագրություն,- «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1 /145/, էջ 241-248. 1997, թիվ 2 /146/, էջ 269-284:
16. Հայերի իրավական ու տնտեսական կարգավիճակը Ռուսաստանում 18-րդ դարի 80-90-ական թթ., - «Պատմա-բանասիրական հանդես», 1998, թիվ 1-2 /147-148/, էջ 75-94:
17. Ռուսահայ գաղթաբնակի քանակական կազմը /18-րդ դարի վերջին քառորդ/, - «Պատմա-բանասիրական հանդես», 1998, թիվ 3 /149/, էջ 61-74:
18. Հայ - Ռուսական հարաբերությունների պատմությունից /18-րդ դարի վերջ/, - «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր» /Ելույթների ժողովածու/, Երևան, 1998, էջ 33-44:
19. Հայ ժողովրդի արտաքին կողմնորոշումների զննահատության հարցը Մ. Ներսիսյանի աշխատություններում,- «Պատմա-բանասիրական հանդես», 1999, թիվ 1/150/, էջ 73-80:
20. Этно-конфессиональные процессы в Закавказье XVII-XVIII вв., - «Մերավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVIII, Երևան, 1999, էջ 151-161:

21. I manoscritti armeni di Roma ed I loro colofoni /XIII secolo/, - «Roma-Armenia», a cura di Claude Mutafian. Edizioni de Luca, Roma, 1999, p. 213-215.
22. Եկեղեցին և պետությունը ազգային ճակատագրում /Ուշ միջնադարյան պատմության և քաղաքական հեռանկարի խնդիրներ/, - «Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Էջմիածին-Օշական-Ճաղկաձոր, 2000, էջ 137-145:
23. Роль Туркменистана в русско-индийской торговле и армянское купечество в конце XVIII — начале XIX в., - «Культурное наследие Туркменистана (глубинные истоки и современные перспективы)». Материалы к международной научной конференции. Ашгабад — Санкт Петербург 2000 с. 154-155.
24. Ani et son myth /XIIIe - XIXe siècles/, - «ANI: capitale de l'Arménie en l'an mil», Paris, 2001, p. 277-281.
25. Քարվաճառի երկնի դիմագծի հարցի շուրջ, - «Մերավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XX, Երևան, 2001, էջ 204-232:
26. Craftsman ship and Traditional small Enterprises in Tbilisi between 1775-1850.-"Tbilisi in the nineteenth century", International conference: 10-13 June 2002. Abstracts. Tbilisi, 2002, p. 20-25.
27. Ուշագրավ վկայություն և մեկ ճշգրտում,- «Պատմա-բանասիրական հանդես», 2002, N1, էջ 205-9:
28. Մի որվագ Արևմտյան Վրաստանի հայոց պատմությունից,- «Էջմիածին», 2002, թիվ 2-Է, էջ 77-84:
29. Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարի երկրորդ կեսին և հայ քաղաքական միտքը,- «Մերավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր XXI, Երևան, 2002, էջ 277-314:
30. О некоторых вопросах средневековой истории Арцаха,- «Պատմա-բանասիրական հանդես», 2002, թիվ 3, էջ 135-150:
31. Հայ-վրացական բազմադարյան գաղափարը ԺԸ դարի երկրորդ կեսի հայ և վրաց ընկալումներում, - «Հանդես Ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2003, թիվ 1-12, էջ 301-340:
32. The Armenian Merchants in the Russian-Indian trade relations,- International Congress of Asian and North African Studies (ICANAS XXXVII), Abstracts, T. I, Moscow, 2004, p. 262.
33. Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունները XVIII դարի երկրորդ կեսին, - «Մերավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIII, Երևան, 2004, էջ 450-461:

ЧОБАНЯН ПАВЛИК АШОТОВИЧ

АРМЯНО-РУССКО-ГРУЗИНСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ  
ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVIII В.

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук  
по специальности 07.00.02 Всеобщая история.

Защита состоится 21 октября 2004 года в 14<sup>00</sup>  
по адресу: Ереван, пр. Маршала Баграмяна 24г, Институт Востоковедения НАН РА

Изучение армяно-русско-грузинских взаимоотношений актуально и имеет как сугубо научное, так и прикладное значение. Во взаимосвязанном плане эти отношения более интенсивно начали развиваться именно во второй половине XVIII века, т.е. в период дипломатической подготовки присоединения Закавказья к России. Позиция армянского населения и общественных деятелей имела невторостепенное значение в этих отношениях. На современном этапе они развиваются на уровне суверенных государств. Исследование исторического прошлого будет способствовать пониманию современных внешнеполитических ориентаций этих государств.



Диссертация состоит из предисловия, четырех глав (каждое из которых содержит, соответственно, разделы), заключения, списка использованных источников и литературы и приложения.

**В предисловии** говорится об актуальности и важности темы диссертации, целях и задачах исследования, дается краткий обзор использованных источников и литературы.

**Первая глава** (Армения во второй половине XVIII в.) состоит из двух разделов. В первом (1.1 "Восточная Армения в административно-политической системе Закавказья") рассматриваются вопросы этно-политической ситуации в государственных образованиях Восточной Армении и армянонаселенных регионах Закавказья, а во втором разделе (1.2 "Западная Армения в системе Османской империи") рассматриваются вопросы социально-экономического и политического положения армянского народа в Западной Армении.

**Вторая глава** (Армяно-грузинские отношения) состоит из трех разделов: 2.1- "Правовое положение армянского населения в Грузии" - в этом разделе впервые изучается статус армян в Грузии и констатируется, что для армян, в отличие от России, существовали юридически ограничивающие пункты в законодательстве. 2.2 - "Идея армяно-грузинского государства во второй половине XVIII века" - в этом разделе исследуются истоки возникновения идеи, ее эволюция, а также разные подходы и понимания по данному вопросу. 2.3 "Армяно-грузинские взаимоотношения и армянская политическая мысль" - в этом разделе изучаются вопросы политики Грузии в отношении Армянских областей, идеи восстановления независимости Армении, а также подходы армянских общественно-политических кругов.

**Третья глава** (Армяне в сфере внутренней политики России) состоит из четырех разделов. 3.1 - В разделе "Количественный состав и вопросы репатриации" устанавливается численность, динамика и пути роста армянского населения России, возникновение идеи репатриации армянского населения и первые попытки, предпринятые в этом направлении. 3.2 - в разделе "Правовое и экономическое положение армян в России" исследуются вопросы становления армянских общин в России и их борьбы для приобретения льготных условий и привилегий. 3.3 - в разделе "Роль армян в торгово-экономических отношениях России" исследуется деятельность армянских купцов России в русско-индийских и русско-среднеазиатских торговых отношениях. 3.4 - в разделе "Армяно-русские церковные взаимоотношения" изучаются контакты русской и армянской церквей, констатируется тот факт, что церковные взаимоотношения были подчинены внешнеполитическим устремлениям центральных властей.

**Четвертая глава** (В сфере внешней политики России) состоит из четырех разделов. 4.1 - в разделе "Поход В. Зубова и армяне" исследовано участие армян в походе и намерения армянских деятелей в дипломатических переговорах во время похода с местными правителями. В разделе 4.2 "Русско-персидские взаимоотношения и армянская дипломатия" исследуется деятельность И. Аргутинского в русско-персидских переговорных процессах. В разделе 4.3 "Русско-грузинские взаимоотношения и позиция армян" изучаются те шаги, которые были предприняты со стороны армянских деятелей для улучшения русско-грузинских взаимоотношений и сближения их позиций в конце XVIII века. В разделе 4.4 "Русско-турецкие взаимоотношения и армянская дипломатия" рассматривается русско-турецкое соглашение 1799 года и позиция армянских деятелей к египетскому походу Наполеона.

**В заключении** подведены итоги работы и приводятся выводы по основным вопросам указанных проблем.

